ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ... 3

1. Ազգային վիճակագրության մակրոտնտեսական համակարգերը ... 3

2. Տնտեսության հատվածներ ... 6

2.1 Պետական կառավարման հատված ... 12

2.2 Իրական հատված ... 13

2.3 Ֆինանսական հատված ... 16

3. Ֆինանսական գործիքներ ... 24

3.1 Մոնետար ոսկի և ՀՓԻ (SDR) ... 25

3.2 Կանխիկ և ավանդներ ... 27

3.3 Պարտքային արժեթղթեր ... 28

3.4 Փոխառություններ ... 30

3.5 Վարկեր ... 30

3.6 Բաժնային գործիքներ և ներդրումային ֆոնդերի փայեր կամ բաժնետոմսեր ... 34

3.7 Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաներ ... 35

3.8 Ֆինանսական ածանցյալներ և աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոններ ... 37

3.9 Ստացման կամ վճարման ենթական հաշիվներ ... 40

3.10 Պայմանական գործիքների վիճակագրական արտացոլումը ... 40

4. Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները ... 43

4.1 ՀՀ ֆինանսական շուկայի և փողի ագրեգատների առանձնահատկությունները ... 45

4.2 ՀՀ փողի ագրեգատները ... 46

5. ՀՀ դրամավարկային վիճակագրության ամփոփման սկզբունքները ... 48

5.1 Հատվածային հաշվեկշիռների նկարագիրը ... 48

5.2 ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը ... 49

5.3 ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը ... 55

5.4 ՀՀ վարկային կազմակերպությունների հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը ... 59

5.5 ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը ... 61

6. Արժույթի միջազգային հիմնադրամի հաշիվների արտացոլումը ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում ... 65

7. Միջազգային պահուստների և զուտ արտաքին ակտիվների հաշվարկման առանձնահատկությունները ... 71

7.1 ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին ակտիվներ ... 72

7.2 ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պարտավորություններ ... 74

7.3 ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներ ... 76

7.4 Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակ ... 76

8. Այլ զուտ ակտիվների հաշվարկման առանձնահատկությունները ... 80

8.1 ՀՀ կենտրոնական բանկի այլ զուտ ակտիվներ ... 81

8.2 Առևտրային բանկերի այլ զուտ ակտիվներ ... 82

8.3 Վարկային կազմակերպությունների այլ զուտ ակտիվներ ... 84

8.4 Ավանդային կազմակերպությունների այլ զուտ ակտիվներ ... 85

Օգտագործված գրականություն ... 87

Հավելվածներ ... 88

Ներածություն

Տարբեր երկրների դրամավարկային ցուցանիշների և այլ վիճակագրական տեղեկատվության համադրելիությունը, մատչելիությունը և որակն ապահովելու նպատակով միջազգային կազմակերպությունների կողմից մշակվում և մշտապես արդիականացվում են հաշվառման կանոնների, դասակարգման, համախմբման սկզբունքների, վիճակագրության մշակման և ներկայացման մեթոդների միասնական չափանիշներ, որոնք ուղեցույց են երկրների վիճակագրական ցուցանիշները մշակելու և ներկայացնելու համար: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության բնագավառում ներկայումս օգտագործվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) մասնագետների կողմից մշակված «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն ձեռնարկը և կազմման ուղեցույցը» (2016)[1]:

Չնայած դրամավարկային վիճակագրության միջազգային չափանիշներին՝ գրեթե բոլոր երկրներն իրենց փողի ցուցանիշները կազմելիս հաշվի են առնում իրենց տնտեսությունների և ֆինանսական շուկաների առանձնահատկությունները՝ հետևելով ԱՄՀ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն ձեռնարկ և կազմման ուղեցույց»-ում տրված «փողի» սահմանմանը, որը հստակեցնում է փողի ագրեգատների շրջանակը:

Դրամավարկային վիճակագրությունն երկրի ընդհանուր վիճակագրական համակարգի բաղկացուցիչ մասն է: Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի վիճակագրության մեթոդաբանությունն առաջին անգամ ներկայացվել է 2002 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրատարակված «ՀՀ դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում»: Ընդհանուր առմամբ, ցանկացած վիճակագրական վերլուծության, մշակման կամ ցուցանիշի նկատմամբ օգտագործողների վստահությունը բարձրացնելու, այս կամ այն ցուցանիշը ճիշտ ընկալելու և վերլուծելու նպատակով խիստ կարևորվում է դրա իրականացման մեթոդաբանության, հիմնական սկզբունքների և մոտեցումների մատչելիության ապահովումը: Ավելին՝ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության մշակման տեխնոլոգիաների հրապարակայնությունը և մատչելիությունը վիճակագրության վարման գործընթացը բարձրացնում են ինստիտուցիոնալ մակարդակի վրա: Այդ առումով մեծ կարևորություն է ձեռք բերում ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի կազմումը: Վերջինս ընդգրկում է այնպիսի հասկացություններ, սահմանումներ և կատեգորիաներ, որոնք ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև տվյալների հավաքագրումը, մշակումը, ներկայացումը և օգտագործումը հեշտացնելու և մատչելի դարձնելու նպատակ ունեն:

1. Ազգային վիճակագրության մակրոտնտեսական համակարգերը

Ազգային վիճակագրության մակրոտնտեսական համակարգում հիմնական դերը պատկանում է Ազգային հաշիվների համակարգին: Վիճակագրության մակրոտնտեսական համակարգերը համադրելի և փոխկապակցված մակրոտնտեսական հաշիվների ամբողջություն են՝ հիմնված միջազգայնորեն ընդունված և համաձայնեցված տեսությունների, սահմանումների, դասակարգումների և հաշվառման կանոնների վրա: Դրանք ապահովում են հաշվառման այնպիսի կանոններ, որոնք համապատասխան կտրվածքով մակրոտնտեսական

[1] *Տես՝ https://www.imf.org/en/Publications/Manuals-Guides/Issues/2018/09/21/Monetary-and-Financial-Statistics-Manual-and-Compilation-Guide-43001:*

վիճակագրության հավաքագրում, մշակում և ներկայացում իրականացնելու հնարավորություն են ընձեռում: Վիճակագրական չափանիշները սահմանվում ու դասակարգումները կատարվում են այնպես, որ հասկանալի լինեն օգտագործողների, քաղաքականություն իրականացնողների և լայն հասարակության համար: Վիճակագրության հիմնական մակրոտնտեսական համակարգերը բաժանվում են չորս խմբի.

- ***Ազգային հաշիվներ և իրական հատվածի այլ վիճակագրություն:*** Իրական հատվածի վիճակագրությունում կենտրոնական տեղ է զբաղեցնում ազգային հաշիվների վիճակագրությունը: Այս բնագավառում ներկայումս գործում է «Ազգային հաշիվների համակարգ» ձեռնարկը (SNA 2008 և SNA 2025), որը ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդին է առաջարկվել ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից և ընդունվել է որպես միջազգային չափորոշիչ ազգային հաշիվների վիճակագրության բնագավառում: Համակարգի մշակմանը մասնակցել են մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ: Համակարգը փոխկապված, հաջորդական և ամբողջական հաշիվների համախումբ է՝ հիմնված միջազգայնորեն փոխհամաձայնեցված հասկացությունների, սահմանումների, դասակարգումների, հաշվառման կանոնների վրա: Այն հնարավորություն է տալիս ամբողջական հաշվառման համակարգի օգնությամբ իրականացնել տնտեսական վիճակագրության հավաքագրում, մշակում և ներկայացում՝ տնտեսական վերլուծությունների, որոշումների կայացման և քաղաքականության իրականացման նպատակով: Համակարգի հաշիվներն ընդգրկում են ապրանքների արտադրությանը և ծառայությունների մատուցմանը, եկամուտների գոյացմանը, բաշխմանը և վերաբաշխմանը, սպառմանը, խնայողություններին և ներդրումներին վերաբերող տվյալներ, ինչպես նաև ազգային ու ճյուղային հաշվեկշիռները և ֆինանսական հոսքերը: Ըստ էության, համակարգը հնարավորություն է տալիս հաշվեկշռել ապրանքային և ֆինանսական հոսքերը տնտեսության հատվածների միջև, ինչպես նաև հետևել ազգային հարստության փոփոխություններին: Իրական հատվածի վիճակագրությունում առանձնացվում են նաև տնտեսության ճյուղերի և ոչ ֆինանսական կազմակերպությունների վիճակագրությունը (ուսումնասիրում է տնտեսության ճյուղերում գործող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները), գների վիճակագրությունը (ուսումնասիրում է սպառողական շուկայի և արտադրողների գների միտումները) և բնակչության եկամուտների, ծախսերի և աշխատանքի շուկայի վիճակագրությունը (ուսումնասիրում է բնակչության եկամուտների գոյացման աղբյուրները, ծախսերի ուղղությունները և աշխատանքի շուկայի վիճակը):
- ***Արտաքին հատվածի վիճակագրություն:*** Արտաքին հատվածի վիճակագրությունը ներառում է տնտեսության ռեզիդենտ[2] սուբյեկտների և արտաքին աշխարհի (ոչ ռեզիդենտների) փոխհարաբերություններին վերաբերող տեղեկատվություն: Գործող միջազգային չափորոշիչը ԱՄՀ-ի կողմից մշակված և 2009թ. հրատարակված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկն» է (BPM6), որին կից մշակվել է նաև «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի կազմման ուղեցույցը» (2014թ.): 2025 թվականին հրապարակվել է «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» յոթերորդ հրատարակությունը (BPM7): «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկը» արտաքին տնտեսական գործունեությանը վերաբերող հաշիվների շրջանակներում տվյալների հավաքագրման, մշակման և ներկայացման համար նախատեսված, միջազգայնորեն փոխհամաձայնեցված մեթոդաբանական սկզբունքների ամբողջություն է: Այդ տեղեկատվությունը մի կողմից՝ հնարավորություն է ընձեռում իրականացնել արտաքին տնտեսական

[2] *«Ռեզիդենտություն» հասկացությունը ավելի մանրամասն ներկայացված է «Տնտեսության հատվածներ» բաժնում:*

հոսքերի քանակական գնահատում, որն ամփոփվում է երկրի վճարային հաշվեկշռում, մյուս կողմից՝ գնահատել երկրի արտաքին ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որն էլ իրենից ներկայացնում է միջազգային ներդրումային դիրքը: Հստակ ներկայացվում է նաև արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ու որոշակի ժամանակահատվածում դրանց ծավալներում տեղի ունեցած փոփոխությունների միջև կապը: Ընդ որում, նման փոփոխություններն արտացոլում են արտաքին տնտեսական գործառնությունները, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների հետ կապված վերագնահատումները և այլ տիպի ճշգրտումները:

- ***Պետական ֆինանսների վիճակագրություն:*** Պետական ֆինանսների վիճակագրությունն ընդգրկում է պետական կառավարման հատվածի գործառնությունների, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն: Այդ տեղեկատվությունն օգտագործվում է հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնողների, ինչպես նաև վերլուծողների կողմից և հնարավորություն է տալիս գնահատել հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա: Մասնավորապես, գնահատել և վերլուծել պետական հատվածի դիրքը տնտեսությունում, դրա մասնակցությունը համախառն պահանջարկի, ներդրումների և խնայողությունների ձևավորմանը, ազդեցությունը ռեսուրսների օգտագործման և դրամավարկային պայմանների վրա, հարկային բեռը, ինչպես նաև մասնակցությունը եկամուտների վերաբաշխման գործընթացին: Պետական ֆինանսների վիճակագրության բնագավառում ներկայումս գործում է ԱՄՀ-ի կողմից մշակված և 2014թ. հրատարակված «Պետական ֆինանսների վիճակագրություն» ձեռնարկը (GFSM): Այս ձեռնարկում սահմանված են պետական ֆինանսների վիճակագրության հավաքագրման, մշակման և ներկայացման համար օգտագործվող տնտեսական և հաշվառման սկզբունքները:
- ***Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:*** Ընդգրկում է տնտեսության ֆինանսական հատվածի վերաբերյալ վիճակագրությունը: Ինչպես արդեն նշվել է, այս բնագավառում ներկայումս օգտագործվում է ԱՄՀ մասնագետների մշակած «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն ձեռնարկը և կազմման ուղեցույցը» (MSFMCG 2016):

Հարկ է նշել, որ վիճակագրության բոլոր միջազգային չափանիշները հնարավորինս փոխհամաձայնեցված են, այսինքն՝ վիճակագրության մակրոտնտեսական՝ վերը նշված համակարգերում հիմնականում օգտագործվում են միևնույն սահմանումները, դասակարգման միևնույն չափանիշները, հաշվառման նույն սկզբունքները և այլն:

Վիճակագրության մակրոտնտեսական համակարգերի նման դասակարգումը հիմնված է տնտեսության հատվածավորման սկզբունքի վրա: Այս առումով անհրաժեշտ է ներկայացնել տնտեսության առանձին հատվածների համառոտ նկարագիրը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության մեջ, ֆինանսական գործիքները դասակարգելիս, պետք է հիմնվել տնտեսության հատվածավորման սկզբունքների վրա:

Տարբեր երկրների վիճակագրական համակարգերի միասնականացման կարևոր քայլ է ԱՄՀ վիճակագրական համակարգերի՝ Տվյալների տարածման ընդհանուր համակարգի (SSԸՀ, անգլերեն՝ GDDS), Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի (SSՀՉ, անգլերեն՝ SDDS) և Տվյալների տարածման հատուկ չափորոշիչ պլյուսի (SSՀՉ պլյուս, անգլերեն՝ SDDS plus) ստեղծումը: Նշված համակարգերից վերջին երկուսը հնարավոր են դարձնում մասնակից երկրների վիճակագրության՝ միասնական չափանիշների հիման վրա կազմումը: SSՀՉ պահանջները բավականին խիստ են և պարտադիր՝ բոլոր անդամների համար: Այն երկրները, որոնք չեն կարող միանգամից բավարարել SSՀՉ պահանջները, իրենց վիճակագրական համակարգերի զարգացման նպատակով կարող են անդամակցել SSԸՀ-ին: SSՀՉ պլյուսը կառուցված է SSՀՉ-ի հիման վրա և ի լրումն SSՀՉի, ընդգրկում է լրացուցիչ

տվյալների կատեգորիաներ և սահմանում է տվյալների տարածման ավելի խիստ պայմաններ:

Հայաստանի Հանրապետությունը 2001թ. մարտից պաշտոնապես հանդիսանում էր ՏՏԸՀ մասնակից, իսկ 2003թ. նոյեմբերին դարձավ ՏՏՀՉ-ի անդամ՝ այդպիսով հանդիսանալով ՏՏՀՉ-ին անդամակցող 54-րդ երկիրը և ԱՊՀ երկրներից երկրորդը, որն անցում կատարեց ՏՏԸՀ-ից ՏՏՀՉին:

ՏՏԸՀ-ն հիմնադրվել է 1997թ. դեկտեմբերին, և այսօր Համակարգին անդամակցում են 105 անդամ երկրներ[3]: Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ երկրներից երրորդն էր, որ անդամագրվել էր այս Համակարգին: ՏՏԸՀ-ի հիմնական նպատակը ազգային վիճակագրական համակարգերի զարգացման գործում անդամ երկրներին օժանդակելն է: Համակարգի շրջանակներում տվյալների որակի և դրանց տարածման խնդիրները կենտրոնանում են տնտեսության չորս՝ իրական, ֆինանսական, հարկաբյուջետային և արտաքին հատվածների, ինչպես նաև սոցիալ-ժողովրդագրական վիճակագրության վրա:

ՏՏՀՉ-ն հիմնադրվել է 1996 թ. մարտին, որին ներկայումս անդամակցում են 48 անդամ երկրներ[3]: Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ երկրներից երրորդն է, որ անդամագրվում է ՏՏՀՉ-ին: ՏՏՀՉ-ի հիմնական նպատակը համաշխարհային կապիտալի շուկաներին մասնակցություն ունեցող կամ մասնակցություն փնտրող անդամ երկրներին ուղղորդելն է (աջակցելը) իրենց տնտեսական և ֆինանսական տեղեկատվության տարածումը կազմակերպելու գործում:

ՏՏՀՉ պլյուսը ստեղծվել է 2012թ. փետրվարին, որին ներկայումս անդամակցում են 31 անդամ երկրներ[3]: ՏՏՀՉ պլյուսը կառուցված է ՏՏՀՉ-ի շրջանակներում ձեռք բերված առաջընթացի վրա և ի լրումն ՏՏՀՉ ներքո գոյություն ունեցող պահանջների՝ ՏՏՀՉ պլյուսը շեշտադրում է կատարում տվյալների տարածման ավելի խիստ պայմանների կիրառման վրա՝ նպատակ ունենալով բարձրացնել տեղեկատվության թափանցիկությունը և աջակցել միջազգային ֆինանսական համակարգի ամրապնդմանը: ՏՏՀՉ պլյուսը նպատակ ունի ընդգրկելու այն երկրները, որոնց տնտեսությունները միջազգային կապիտալի շուկայում խաղում են առաջատար դեր: Այդպիսով՝ ՏՏՀՉ պլյուսը դուրս է գալիս ՏՏՀՉ-ի շրջանակներից միջազգային կապիտալի շուկաներ մուտք գործելու առումով՝ շեշտը դնելով այն երկրների վրա, որոնց ֆինանսական կազմակերպությունները ունեն գլոբալ համակարգային նշանակություն և հանդիսանում են միջազգային դրամավարկային և ֆինանսական համակարգի անբաժանելի մասը: Բոլոր ՏՏՀՉ անդամները կարող են մասնակցել ՏՏՀՉ պլյուսին և, ըստ էության, խորհուրդ է տրվում մասնակցել համակարգին:

ՀՀ կենտրոնական բանկը Հայաստանի՝ ՏՏՀՉ-ին անդամակցության շրջանակներում պատասխանատու է տնտեսության ֆինանսական հատվածի և արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի) վիճակագրության համար:

2. Տնտեսության հատվածներ

Տնտեսության բաղադրատարրերն են՝ ինստիտուցիոնալ (տնտեսական) միավորները, հաստատությունները, ճյուղերը և հատվածները: Տնտեսությունը, որին առնչվում է ֆինանսական հատվածը, առաջին հերթին բաժանվում է ներքին տնտեսության և արտաքին աշխարհի: Ներքին տնտեսությունը ներառում է ռեզիդենտ տնտեսական բոլոր միավորները (սուբյեկտները):

Ինստիտուցիոնալ միավորները այն տնտեսական միավորներն են, որոնք իրենց անունից կարող են՝

[3] *Աղբյուրը՝ http://dsbb.imf.org.*

- տնօրինել սեփական ակտիվներ,
- ներգրավել պարտավորություններ,
- իրականացնել տնտեսական գործունեություն լայն իմաստով[4] և կատարել գործարքներ այլ սուբյեկտների հետ,
- ունենալ հաշվառման ամբողջական համակարգ:

Ինստիտուցիոնալ (տնտեսական) միավորներն ընդհանուր առմամբ կարող են լինել երկու տեսակի՝ անհատներ կամ անհատների խմբեր՝ տնային տնտեսությունների ձևով և իրավական կամ սոցիալական սուբյեկտներ (միավորներ):

Տնային տնտեսություններն այն անհատների խմբերն են, որոնք ապրում են միասին, ունեն ընդհանուր ռեսուրսներ և եկամուտներ, համատեղ սպառում են ապրանքներ և ծառայություններ՝ հիմնականում կացարանային ծառայություններ և սննդամթերք, ինչպես նաև կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Տնային տնտեսության (տնտեսությունների) կողմից ստեղծված ձեռնարկության գույքը առանձնացված չէ սեփականատերերի անձնական գույքից, այսինքն՝ նման ձեռնարկությունը ենթակա է անսահմանափակ պատասխանատվության:

Իրավական կամ սոցիալական միավորները (իրավաբանական անձինք) այն սուբյեկտներն են, որոնց գոյությունը ճանաչված է օրենքով կամ հասարակության կողմից, և որոնք գործում են իրենց սեփականատերերից առանձին, իրականացնում են տնտեսական գործունեություն, կայացնում են որոշումներ, իրենց անունից կատարում են գործարքներ և կնքում են պայմանագրեր: Իրավական կամ սոցիալական միավորներն իրենց հերթին բաժանվում են երեք խմբի՝ կորպորացիաներ կամ ձեռնարկություններ, պետական կառավարման միավորներ և շահույթ չհետապնդող կազմակերպություններ[5]:

Կորպորացիաները կամ ձեռնարկություններն այն իրավական միավորներն են, որոնք ստեղծվել են շուկայական ապրանքներ արտադրելու կամ ծառայություններ մատուցելու համար՝ իրենց սեփականատերերին շահույթ ապահովելու նպատակով, և որոնք օրենքով ճանաչված են որպես իրենց սեփականատերերից առանձին իրավաբանական անձիք: Այստեղ առանցքային է համարվում «շուկայական ապրանքներ արտադրող և ծառայություններ մատուցող» լինելու հասկացությունը: Մակրոտնտեսական վիճակագրությունում, տնտեսավարող սուբյեկտին որպես կորպորացիա դասակարգելու առանցքը հանդիսանում է ոչ թե դրա իրավական կարգավիճակը, այլ ավելի շուտ սուբյեկտի տնտեսական գործունեության բնույթը:

«Կորպորացիա» տերմինը Հայաստանի Հանրապետությունում դեռևս լայն տարածում չի գտել, որի պատճառով սույն ձեռնարկում հազվադեպ է օգտագործվում: Այսպիսով՝ վերը նշված միավորները հիմնականում անվանում ենք «ձեռնարկություններ կամ կազմակերպություններ»:

Շահույթ չհետապնդող կազմակերպություններն այն իրավական կամ սոցիալական միավորներն են, որոնք ստեղծվել են ապրանքներ արտադրելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով, սակայն դրանց կարգավիճակը թույլ չի տալիս ստացված շահույթը բաշխել հիմնադիրների, մասնակիցների և/կամ ֆինանսավորողների միջև, այսինքն՝ վերջիններիս համար դրանք չեն կարող հանդիսանալ եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական օգուտների ստացման աղբյուր[6]:

---

[4] *Լայն իմաստով տնտեսական գործունեությունը ներառում է ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցումը, ինչպես նաև եկամուտների ստացումը, ծախսերի, ներդրումների և սպառման իրականացումը, խնայողությունների կուտակումը և այլն:*

[5] *Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, իրավաբանական անձինք կարող են իրենց գործունեությամբ լինել՝ առևտրային կազմակերպություններ (շահույթ ստանալու նպատակ հետապնդող) կամ ոչ առևտրային կազմակերպություններ (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող):*

[6] *Շահույթ չհետապնդող կազմակերպությունների վիճակագրական սահմանումը համընկնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տրված ոչ առևտրային (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող) կազմակերպությունների ընդհանուր սահմանման հետ:*

Պետական կառավարման միավորները յուրահատուկ իրավական միավորներ են, որոնց առաջնային խնդիրը պետական գործառույթների իրականացումն է, այսինքն՝ որոշակի ոլորտում գործող այլ միավորների նկատմամբ նրանք ունեն օրենսդրական, դատական կամ գործադիր իշխանություն: Այս միավորներն իրականացնում են հետևյալ հիմնական գործառույթները. արտադրում և ամբողջ հասարակությանը կամ առանձին տնային տնտեսություններին տրամադրում են որոշակի ապրանքներ և ընդհանրական ծառայություններ հիմնականում ոչ շուկայական հիմունքներով, վերաբաշխում են հասարակության եկամուտները և հարստությունը տրանսֆերտային վճարումների միջոցով, արտադրում և մատուցում են հիմնականում ոչ շուկայական ապրանքներ ու ծառայություններ: Պետական կառավարման միավորներն իրենց գործունեությունը ֆինանսավորում են տնտեսության այլ հատվածների ինստիտուցիոնալ միավորներից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված հարկերի կամ այլ վճարումների հաշվին:

Երկրի ներքին տնտեսությունը տարբերվում է արտաքին աշխարհից ռեզիդենտության սկզբունքով, այլ ոչ թե արտարժույթի, քաղաքացիության կամ ազգության սկզբունքով: Տվյալ երկրի սուբյեկտներն իրենց գործունեության ընթացքում կարող են առնչվել ինչպես տվյալ երկրի ռեզիդենտների, այնպես էլ այլ երկրների ռեզիդենտների հետ (վերջիններս տվյալ երկրի համար համարվում են ոչ ռեզիդենտներ):

Ռեզիդենտության սկզբունքը հիմնվում է երկու հիմնական հասկացությունների վրա՝ *տնտեսական տարածք և գերակա տնտեսական շահերի կենտրոն*: Երկրի տնտեսական տարածք սովորաբար համարվում է տվյալ պետության տնտեսական վերահսկողության ներքո գտնվող տարածքը: Տնտեսական միավորների կապը որևէ տնտեսական տարածքի հետ որոշվում է այնպիսի դրույթների հիման վրա, ինչպիսիք են իրենց ֆիզիկական ներկայությունը և տվյալ տարածքի պետության օրենսդրության ներքո գտնվելը: Հարկ է նկատել, որ տնտեսական տարածքը կարող է տարբերվել երկրի վարչաքաղաքական տարածքից:

Այսպիսով՝ տնտեսական միավորը համարվում է տվյալ տնտեսության համար ռեզիդենտ, եթե նրա գերակա տնտեսական շահերի կենտրոնը այդ երկրի տնտեսական տարածքում է: Ընդ որում, տվյալ երկրում տնտեսական շահեր ունենալը նշանակում է, որ տվյալ երկրի տնտեսական տարածքում գոյություն ունի բնակավայր՝ տուն կամ բնակարան, արտադրության կազմակերպման համար նախատեսված շենք, շինություն կամ այլ տարածք, որտեղ կամ որտեղից տնտեսական միավորն իրականացնում է և հետագայում էլ մտադրություն ունի իրականացնել նշանակալի ծավալի[7] տնտեսական գործունեություն և գործառնություններ այլ սուբյեկտների հետ՝ անորոշ ժամանակով կամ որոշակի երկար ժամանակահատվածում (սովորաբար՝ 1 տարի կամ ավելի): Մեկ տարին հիմնականում օգտագործվում է պայմանականորեն և նախատեսված է միջազգային համադրելիության ապահովման համար:

Այսպիսով՝ վիճակագրությունում ռեզիդենտությունը հիմնված չէ ազգության, քաղաքացիության կամ այլ իրավական չափորոշիչների վրա, այլ սահմանվում է զուտ տնտեսագիտական մոտեցումներից և սահմանումներից ելնելով: Ռեզիդենտության որոշումն, այնուհանդերձ, միշտ չէ, որ պարզ է և որոշակիորեն կապված է նաև տվյալ սուբյեկտի տեսակի և բնույթի հետ: Հաճախ սուբյեկտի ռեզիդենտությունը որոշելու պայմանները հստակ չեն լինում, ինչը բարդացնում է դասակարգման իրականացումը: Ստորև բերվում են ռեզիդենտության որոշման մի քանի սկզբունքներ:

Ֆիզիկական անձանց և տնային տնտեսությունների ռեզիդենտությունը: Տնային տնտեսությունը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ տնային տնտեսության անդամները ունեն կացարան, և այդ կացարանն է համարվում իրենց բնակվելու հիմնական վայրը: Որոշակի տնտեսական տարածքում մեկ տարի և ավել ժամանակահատվածում գտնվելը կամ այդպիսի մտադրություն ունենալը բավարար պայման է տվյալ տարածքը որպես հիմնական կացության վայր որակելու

[7] *«Նշանակալի ծավալ» արտահայտությունը նշանակում է, որ տվյալ ինստիտուցիոնալ միավորն ունի առնվազն մեկ արտադրական հաստատություն տվյալ երկրում:*

համար: Եթե կա անորոշություն, թե ո՞ր երկրում է տնային տնտեսության հիմնական կացության վայրը, ապա հաշվի է առնվում տվյալ երկրում անցկացրած ժամանակահատվածի տևողությունը, այլ ոչ թե այնպիսի գործոններ, ինչպիսիք են ընտանիքի այլ անդամների ներկայությունը, կացարանի արժեքը, չափսը և այլն: Ընդ որում, տնային տնտեսությանը պատկանող բոլոր անդամները համարվում են նույն տնտեսության ռեզիդենտներ:

Եթե ֆիզիկական անձը որոշակի կարճ (մինչև մեկ տարի) ժամանակով բացակայում է տվյալ երկրի տնտեսական տարածքից, ապա նա դեռևս շարունակում է համարվել տվյալ տնտեսության ռեզիդենտ: Տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս գտնվող անհատների հետևյալ խմբերը՝ անկախ բացակայության ժամկետից, շարունակում են համարվել տվյալ երկրի ռեզիդենտներ.

- **ուսանողները՝** այն անձիք**,** որոնք ուսման նպատակով մեկնել են արտերկիր սովորելու, նույնիսկ եթե նրանց ուսման տևողությունը մեկ տարի և ավել է: Բացառություն են կազմում այն ուսանողները, որոնք սովորելուց հետո մտադիր են ապրել և աշխատել տվյալ երկրում:
- **Բուժման նպատակով մեկնածներ՝** այն անձիք**,** որոնք մեկնել են արտերկիր բուժման նպատակով, նույնիսկ եթե նրանց բուժման տևողությունը մեկ տարի և ավել է: Ինչպես ուսանողների դեպքում, նրանց մեկնելու շարժառիթը նույնպես ժամանակավոր է: Նույնը վերաբերում է բուժման նպատակով մեկնած մարդկանց ուղեկցողներին:
- **Նավերի, ինքնաթիռների և նմանատիպ այլ շարժական կառուցվածքների անձնակազմի անդամները**, որոնք գործում են իրենց երկրի տնտեսական տարածքից դուրս:
- Տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս տեղակայված **դեսպանատներում, ռազմաբազաներում և այլ նմանատիպ ներկայացուցչություններում** աշխատանքի մեկնած անհատները և նրանց ընտանիքի անդամները: Միևնույն ժամանակ տվյալ երկրի տնտեսական տարածքում գործող այլ երկրների դեսպանատներում, ռազմաբազաներում և այլ նմանատիպ ներկայացուցչություններում աշխատող տեղաբնակները շարունակում են համարվել տվյալ երկրի ռեզիդենտներ:
- **Միջազգային կազմակերպությունների** աշխատողները համարվում են այն երկրի ռեզիդենտ, որտեղ գտնվում է իրենց բնակության հիմնական վայրը:
- **Սահմանային և սեզոնային աշխատողները՝** սահմանային աշխատողներն ամեն օր կամ ամեն շաբաթ հատում են իրենց երկրի սահմանը, աշխատում այլ երկրի տնտեսական տարածքում և վերադառնում: Սեզոնային աշխատողները նույնպես մեկնում են արտերկիր աշխատելու նպատակով՝ ավելի երկար ժամկետով և հետո նորից վերադառնում իրենց տնտեսական շահերի կենտրոն: Այս դեպքում գործում է վերը նկարագրված հիմնական բնակության վայրի և մեկ տարվա սկզբունքը:

Փախստականների դեպքում հատուկ մոտեցում չի կիրառվում, նրանք համարվում են այն տնտեսության ռեզիդենտ, որտեղ բնակվում են կամ նպատակ ունեն բնակվել մեկ տարուց ավել, անգամ եթե նրանց հետագա կարգավիճակն անորոշ է:

Հաճախ տեղաշարժվող անհատների համար, որոնք ունեն մի քանի երկրում հավասարապես բաշխված տնտեսական շահեր, ռեզիդենտությունը որոշվում է տարվա մեջ մեկ տնտեսական տարածքում գտնվելու գերակշիռ օրերի թվաքանակով:

Ձեռնարկությունների կամ կորպորացիաների ռեզիդենտությունը: Ձեռնարկությունը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա գերակա տնտեսական շահերի կենտրոնը և որի տնտեսական տարածքում իրականացնում է նշանակալի ծավալի տնտեսական գործունեություն՝ ապ-

րանքների արտադրություն և ծառայությունների մատուցում և/կամ հողի, շենքերի, շինությունների սեփականատերն է: Օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունը համարվում է տվյալ երկրի ռեզիդենտ, եթե այն տվյալ տնտեսությունում իրականացնում է նշանակալի տնտեսական գործունեություն կամ մտադիր է տնտեսական գործունեություն իրականացնել մեկ տարուց ավելի ժամանակով: Բացի վերը նշվածից, որոշ սահմանային դեպքերում հաշվի են առնվում նաև այնպիսի պայմաններ, ինչպիսիք են՝ սուբյեկտի գրանցման վայրը, հարկերի վճարման վայրը, ինքնուրույն ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունը, սուբյեկտի կողմից իրականացվող գործառնությունների առանձին հաշվառման հնարավորությունը (հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի հաշվետվություն և այլն): Այն դեպքում, երբ ձեռնարկությունը ունի այլ երկրում գործող մասնաճյուղ, ապա այդ մասնաճյուղը պետք է դիտարկել որպես այն երկրի ռեզիդենտ, որտեղ այն գործում է՝ անկախ այն հանգամանքից, թե մասնաճյուղը առանձին իրավաբանական անձ է, թե ոչ:

Շահույթ չհետապնդող կազմակերպությունների ռեզիդենտությունը: Շահույթ չհետապնդող կազմակերպությունը համարվում է այն երկրի կամ տնտեսական տարածքի ռեզիդենտ, որի գործող օրենսդրությամբ կամ սահմանված կանոններով է ստեղծվել տվյալ կազմակերպությունը, և որտեղ նրա՝ որպես իրավական կամ սոցիալական միավորի գոյությունը պաշտոնապես ճանաչված և գրանցված է: Շահույթ չհետապնդող կազմակերպությունների մասնաճյուղերի դեպքում հաշվի է առնվում տվյալ երկրում գործունեության ժամկետը: Եթե արտասահմանյան երկրի կազմակերպությունը տվյալ երկրում մասնաճյուղի միջոցով գործունեություն է ծավալում մեկ տարուց ավելի ժամանակով, ապա տվյալ մասնաճյուղը համարվում է այդ երկրի ռեզիդենտ, իսկ գլխամասային կազմակերպությունից ստացվող ֆինանսավորումը դիտարկվում է որպես արտասահմանից ստացվող տրանսֆերտ:

Պետական կառավարման մարմինների ռեզիդենտությունը: Տվյալ երկրի պետական կառավարման բոլոր մարմինները համարվում են տվյալ երկրի ռեզիդենտներ, նույնիսկ եթե դրանք տեղակայված են այլ երկրների տարածքում:

Այսպես՝ ռեզիդենտ են համարվում.

- տվյալ երկրի տարածքում գտնվող կենտրոնական, տեղական կառավարման մարմինների բոլոր ստորաբաժանումները,
- տվյալ երկրի՝ այլ երկրներում տեղակայված դեսպանատները, հյուպատոսարանները, ներկայացուցչությունները, ռազմական բազաները:

Այլ երկրների դեսպանատները, հյուպատոսարանները, ներկայացուցչությունները, ռազմական բազաները, որոնք տեղակայված են տվյալ երկրի տարածքում, համարվում են ոչ ռեզիդենտներ:

Միջազգային կազմակերպությունների ռեզիդենտությունը: Միջազգային կազմակերպությունները որևէ երկրի ռեզիդենտ չեն համարվում, նույնիսկ այն երկրի, որտեղ դրանք գործում են: Միջազգային կազմակերպությունների աշխատակիցները, սակայն, ինչպես արդեն նշվել է, համարվում են այն երկրի ռեզիդենտներ, որի տարածքում տեղակայված է տվյալ կազմակերպությունը:

Այսպիսով՝ բոլոր այն տնտեսական միավորները, որոնց տնտեսական շահերը տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս են, համարվում են ոչ ռեզիդենտներ, իսկ նրանց հետ իրականացվող բոլոր գործառնությունները դիտարկվում են որպես գործառնություններ ոչ ռեզիդենտների հետ: Տվյալ տնտեսության տեսանկյունից՝ ոչ ռեզիդենտների հետ փոխհարաբերությունները դիտվում են իբրև փոխհարաբերություններ արտաքին աշխարհի հետ: Տվյալ երկրի վիճակագրական դասակարգումների իմաստով՝ ոչ ռեզիդենտների հետագա տարանջատումը ըստ տնտեսության հատվածների (սեկտորների) էական նշանակություն չունի:

Ի տարբերություն ոչ ռեզիդենտների՝ ռեզիդենտ ինստիտուցիոնալ միավորների դասակարգումը և խմբավորումը ըստ տնտեսության հատվածների (սեկտորիզացիա) տվյալ երկրի վիճակագրության համար սկզբունքային նշանակություն ունի, քանի որ հնարավորություն է տալիս որոշել և արտացոլել

տվյալ տնտեսական միավորի փոխհարաբերությունները այլ ռեզիդենտ սուբյեկտների հետ:

Սահմանված ռեզիդենտ ինստիտուցիոնալ միավորների տեսակներն են.

- ձեռնարկությունները կամ կազմակերպությունները (կորպորացիաները),
- պետական կառավարման միավորները,
- տնային տնտեսությունները,
- շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Այս սուբյեկտները ըստ տնտեսության հատվածների խմբավորելու համար անհրաժեշտ է ևս մի քանի դասակարգում իրականացնել: Մասնավորապես, ձեռնարկությունները կամ կազմակերպությունները (կորպորացիաները) բաժանվում են երկու խմբի՝ ֆինանսական կազմակերպություններ և ոչ ֆինանսական կազմակերպություններ:

Շահույթ չհետապնդող կազմակերպություններն ըստ իրենց բնույթի կարող են լինել երկու տիպի՝ շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող և ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող: Ընդ որում, ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող կազմակերպությունները ևս բաժանվում են երկու խմբի՝ պետության կողմից վերահսկվող և տնային տնտեսություններին սպասարկող (ՏՏՍՈՒԿ):

Այսպիսով՝ տնտեսությունում գործող բոլոր ինստիտուցիոնալ միավորները խմբավորվում են ըստ ինստիտուցիոնալ հատվածների՝ ելնելով դրանց տնտեսական նպատակներից, գործառույթներից և վարքագծից: Ընդ որում, յուրաքանչյուր ինստիտուցիոնալ միավոր կարող է պատկանել թվարկված հինգ հատվածներից միայն մեկին՝

- ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- պետական կառավարման մարմիններ,
- տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններ (ՏՏՍՈՒԿ),
- տնային տնտեսություններ:

Այս հինգ ինստիտուցիոնալ հատվածները միասին կազմում են ամբողջ տնտեսությունը:

Այսպիսով՝ ռեզիդենտ տնտեսության հինգ հատվածները ստանալու համար անհրաժեշտ է խմբավորել ռեզիդենտ ինստիտուցոինալ միավորներն ըստ ստորև բերված աղյուսակի.

Աղյուսակ 1. Տնտեսության հատվածների դասակարգումը

Ինստիտուցիոնալ միավորի տեսակը	***Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածը***				
	Ֆինանսական հատված	**Ոչ ֆինանսական հատված**	**Պետական կառավարման հատված**	**Տնային տնտեսությունների հատված**	**ՏՏՍՈՒԿ[8]**
Ձեռնարկություններ կամ կազմակերպություններ (կորպորացիաներ)	Ֆինանսական կազմակերպություններ	Ոչ ֆինանսական կազմակերպություններ			
Պետական կառավարման			Պետական կառավարման		

[8] *Տնային տնտեսություններին սպասարկող, շահույթ չհետապնդող կազմակերպություններ (ոչ առևտրային կազմակերպություններ):*

մարմիններ			մարմիններ		
Տնային տնտեսություններ				Տնային տնտե-սություններ	
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	Ֆինանսական շուկան սպա-սարկող կազ-մակերպու-թյուններ	Շուկայական ապրանքներ և ծառայություն-ներ արտադրող	Ոչ շուկայական ապրանքներ և ծառայությունն եր արտադրող		Ոչ շուկայական ապրանքներ և ծառայությունն եր արտադրող

Ներքին տնտեսությունը կարելի է խմբավորել նաև երեք ավելի մեծ հատվածների՝ ոչ ֆինանսական կազմակերպությունները (կորպորացիաները), տնային տնտեսությունները և SSUՈԱԿ-ները ընդգրկելով իրական հատվածում: Այսպիսով՝ կունենանք ներքին տնտեսության հետևյալ երեք հատվածները՝

- պետական կառավարման հատված,
- իրական հատված,
- ֆինանսական հատված:

Ներքին տնտեսության հատվածավորումը դրամավարկային վիճակագրության տեսանկյունից կարևորվում է նաև տնտեսության՝ փող թողարկող և փող պահող կամ տնօրինող հատվածները սահմանելու առումով: Այսպիսով՝ տնտեսության փող թողարկող հատվածը ֆինանսական հատվածն է, տնտեսության փող տնօրինող կամ փող պահող հատվածը՝ իրական հատվածը, իսկ պետական կառավարման հատվածը, չնայած որ իր գործողություններով ազդում է տնտեսությունում փողի քանակի վրա, սակայն չի հանդիսանում փող տնօրինող կամ պահող, այլ համարվում է փողի նկատմամբ չեզոք հատված:

2.1 Պետական կառավարման հատված

Պետական կառավարման հատվածում ընդգրկված են վերը սահմանված պետական կառավարման բոլոր միավորները: Հարկ է նկատել, որ պետական հատվածի սուբյեկտների ընտրությունը կատարվում է ոչ թե ըստ սեփականության ձևի, այլ ըստ սուբյեկտի գործունեության նպատակների և նրա կողմից իրա-կանացվող գործառույթների: Պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործառույթներն ընդհանուր առմամբ հետևյալն են.

- հասարակությանը կամ առանձին տնային տնտեսություններին որոշակի ապրանքներով և ընդհանրական ծառայություններով ապահովելը հիմնականում ոչ շուկայական հիմունքներով,
- հասարակության եկամուտները և հարստությունը տրանսֆերտային վճարումների միջոցով վերաբաշխելը,
- ոչ շուկայական ապրանքներ արտադրելը և ծառայություններ մատուցելը,
- իրենց գործունեության ֆինանսավորումը՝ հարկային կամ այլ վճարումներից:

Պետական կառավարման մարմինների գործունեության ոլորտներն են՝ կառա-վարում, պաշտպանություն կամ բանակ, կրթություն, առողջապահություն, ազգային անվտանգություն, սոցիալական ապահովություն և այլն:

Պետական կառավարման հատվածում ընդգրկվում են հետևյալ ենթահատ-վածները՝

- Կենտրոնական կառավարություն,
- Տարածքային կառավարման մարմիններ,
- Տեղական ինքնակառավարման մարմիններ,

- Սոցիալական ապահովության հիմնադրամներ:

Կենտրոնական կառավարությունը բաղկացած է պետական կառավարման այն մարմիններից, որոնց իշխանությունը տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, ինչպես նաև այդ մարմինների կողմից կառավարվող և ֆինանսավորվող ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող շահույթ չհետապնդող կազմակերպություններից: Կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն իրականացվում է հիմնականում կենտրոնական կառավարության միջոցով: Կենտրոնական կառավարությունը կարող է նաև տրանսֆերտային վճարումներ իրականացնել պետական կառավարման այլ ենթահատվածներին:

Տարածքային կառավարման մարմինները պետական կառույցներ են, որոնք գոյություն ունեն միայն որոշ երկրներում և կենտրոնական կառավարությունից անկախ, իրականացնում են կառավարման գործառույթներ երկրի որոշակի տարածքում: Տարածքային կառավարման մարմինների հատվածում են ներառվում նաև դրանց կողմից կառավարվող և ֆինանսավորվող ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման հատվածի միավորներ են, որոնք ունեն անկախ վարչական իրավունքներ տվյալ երկրի տարածքում գտնվող առանձին քաղաքներում և շրջաններում՝ ներառյալ հարկերի հավաքագրումը և ծախսերի կատարումը: Այստեղ կարող են ընդգրկվել շրջանների, խոշոր և փոքր քաղաքների իշխանությունները: Տեղական կառավարման մարմինների հատվածում են ներառվում նաև դրանց կողմից կառավարվող և ֆինանսավորվող՝ ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Սոցիալական ապահովության հիմնադրամները կառավարության բոլոր մակարդակներում գործող պետական կառավարման յուրահատուկ միավորներ են, որոնք առանձնացված սուբյեկտներ են, և որոնց հիմնական նպատակը ամբողջ հասարակության կամ դրա մեծ մասի սոցիալական ապահովության խնդիրների կարգավորումն է: Սոցիալական ապահովության հիմնադրամը կարող է հանդես գալ կամ որպես առանձին ենթահատված, կամ կարող է ընգգրկվել պետական կառավարման այն ենթահատվածներում (կենտրոնական կառավարություն, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ), որտեղ այն գործում է:

Հայաստանի Հանրապետության դեպքում պետական կառավարման հատվածը բաժանվում է՝

- Կենտրոնական կառավարման մարմինների,
- Տեղական ինքնակառավարման մարմինների:

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությունն ընդգրկվում է կենտրոնական կառավարությունում ու գործում է ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության կառավարման ոլորտում:

Ըստ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ բյուջետային համակարգը իրավական նորմերով կարգավորվող, ՀՀ տնտեսական հարաբերությունների և ՀՀ պետական կառուցվածքի վրա հիմնված երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է. առաջին մակարդակը պետական բյուջեն է, երկրորդ մակարդակը՝ համայնքների բյուջեները: Պետական և համայնքների բյուջեները հիմնվում են ֆինանսական և հարկային միասնական քաղաքականության վրա:

Բյուջետային հիմնարկ են համարվում բյուջեներից (պետական և համայնքային) ֆինանսավորվող պետական և համայնքային հիմնարկները:

2.2 Իրական հատված

Տնտեսության իրական հատվածը, ինչպես արդեն նշվել է, բաղկացած է ձեռնարկություններից (ոչ ֆինանսական կազմակերպություններից), տնային տնտեսություններից և տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններից: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից, որոշ դեպքերում տնային տնտեսությունները և տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպությունները միավորվում են մեկ ենթահատվածում՝ «Տնային տնտեսություններ և SSUՈԱԿ» անվանմամբ:

2.2.1. Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատված

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են բոլոր այն ռեզիդենտ սուբյեկտները, որոնց հիմնական գործունեությունը շուկայական ապրանքների արտադրությունը և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումն է: Շուկայական արտադրանք կամ ծառայություն ասելով՝ հասկանում ենք այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք իրացվում են շուկայական գներով: Ոչ ֆինանսական հատվածում կազմակերպության ներառվելը կախված չէ տվյալ սուբյեկտի սեփականատերերի հատվածային պատկանելությունից: Այս հատվածում ընդգրկված կազմակերպությունների սեփականատերերը կարող են լինել ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, կարող են լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, կարող է լինել նաև պետությունը: Միակ սկզբունքն այն է, որ դրանց հիմնական գործունեությունը լինի շուկայական ապրանքների արտադրությունը և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումը: Ըստ սահմանման՝ այս հատվածում են ընդգրկվում նաև շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Այսպիսով՝ ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածն ընդգրկում է հետևյալ ռեզիդենտ ինստիտուցիոնալ միավորները՝

- բոլոր ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպություններն անկախ իրենց բաժնետերերի ռեզիդենտությունից,
- ոչ ռեզիդենտ ձեռնարկությունների մասնաճյուղերը, որոնք տվյալ տնտեսական տարածքում երկարաժամկետ հիմունքներով զբաղվում են ոչ ֆինանսական ապրանքների և ծառայությունների արտադրությամբ,
- բոլոր այն ռեզիդենտ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք ապրանքների կամ ոչ ֆինանսական ծառայությունների շուկայական արտադրողներ են:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածը (ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների հատվածը), ըստ սեփականատերերի բնույթի, տարանջատվում է հետևյալ ենթահատվածների՝

- պետական կազմակերպություններ (ձեռնարկություններ),
- ազգային մասնավոր կազմակերպություններ (ձեռնարկություններ),
- օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ (ձեռնարկություններ):

Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածը տարանջատվում է միայն երկու ենթահատվածների՝ պետական և մասնավոր: Վերջինս ընդգրկում է ինչպես ազգային մասնավոր, այնպես էլ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ոչ ֆինանսական կազմակերպությունները:

Ձեռնարկությունը համարվում է պետական, եթե կառավարվում է պետության

կողմից, հետևյալ երկու դեպքերում. պետության բաժնեմասը տվյալ ձեռնարկությունում կազմում է ավելի քան 50% կամ պետությունն օրենսդրորեն օժտված է այդ ձեռնարկությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ: Մասնավոր ձեռնարկությունների ենթահատվածը ընդգրկում է բոլոր ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունները, որոնք պետության կողմից չեն վերահսկվում:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ գոյություն ունեն ձեռնարկությունների հետևյալ տեսակները՝

- լիակատար տնտեսական ընկերակցություններ,
- կոմանդիտային ընկերակցություններ,
- բաժնետիրական ընկերություններ,
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ,
- լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններ,
- առևտրային կոոպերատիվներ:

2.2.2. Տնային տնտեսությունների հատված

Տնային տնտեսությունների հատվածը ներառում է բոլոր ռեզիդենտ տնային տնտեսությունները: Տնային տնտեսությունները ֆիզիկական անձինք կամ անձանց խմբեր են, որոնք.

- ապրում են համատեղ,
- ունեն ընդհանուր ռեսուրսներ, եկամուտներ և հարստություն,
- համատեղ սպառում են ապրանքներ և ծառայություններ (հիմնականում կացարանային ծառայություններ և սննդամթերք),
- կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Այսպիսով՝ տնային տնտեսությունների շարքին են դասվում նաև այն ֆիզիկական անձինք, որոնք զբաղվում են ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ՝ սեփական սպառման կամ շուկայում իրացման նպատակով:

Տնային տնտեսությունների հատվածը, ըստ եկամուտների ստացման հիմնական աղբյուրների, կարելի է բաժանել հետևյալ չորս ենթահատվածների.

- ձեռներեցներ կամ ձեռնարկատերեր (գործատուներ),
- սեփական սպառման համար արտադրողներ,
- վարձու աշխատողներ,
- սեփականությունից եկամուտ ստացողներ և տրանսֆերտ ստացողներ:

Տնային տնտեսություններին պատկանող և շուկայական արտադրությամբ զբաղվող չկորպորացված ձեռնարկությունները դասակարգվում են տնային տնտեսությունների հատվածում: Սակայն եթե այդ ձեռնարկությունների բոլոր ակտիվները հնարավոր է առանձնացնել տնային տնտեսությանը (որպես սպառողի) պատկանող ակտիվներից, ապա այդ ձեռնարկությունները որակվում են որպես քվազիկորպորացիաներ և ընդգրկվում ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում:

2.2.3. Տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների հատված

Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են ոչ առևտրային այն կազմակերպությունները, որոնք արտադրում են ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ,

տրամադրում դրանք իրենց անդամներին, այլ տնային տնեսություններին կամ ամբողջ հասարակությանը՝ անհատույց կամ որոշակի ոչ շուկայական գներով: Այն կազմակերպությունները, որոնք վերահսկվում և ֆինանսավորվում են պետական կառավարման մարմինների կողմից, այս հատվածում չեն ընդգրկվում, այլ ներառվում են պետական կառավարման հատվածում: Եթե շահույթ չհետապնդող կազմակերպությունները արտադրում են շուկայական ապրանքներ և ծառայություններ, ապա նրանք ընդգրկվում են ֆինանսական կամ ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում:

Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններից են՝ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական հիմնադրամները, եկեղեցիները և կրոնական կազմակերպությունները, արհմիությունները, պրոֆեսիոնալ և այլ տիպի միությունները, մշակութային կազմակերպությունները, որոշ կրթական և գիտահետազոտական կազմակերպություններ և այլն:

2.3 Ֆինանսական հատված

2.3.1. Ֆինանսական հատվածի ընդհանուր նկարագիրը

Ֆինանսական հատվածը դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից ամենակարևոր հատվածն է, քանի որ հենց այս հատվածի սուբյեկտներն են տնտեսության փող թողարկողները:

Ֆինանսական հատվածն ընդգրկում է այն կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեությունը ֆինանսական ծառայությունների մատուցումն է, մասնավորապես ֆինանսական միջնորդությունը կամ ֆինանսական միջնորդությանը նպաստող ծառայությունների մատուցումը: Ֆինանսական միջնորդությունը այնպիսի գործունեություն է, որի դեպքում սուբյեկտն իր անունից պարտավորություններ է ներգրավում՝ ֆինանսական շուկայում գործառնությունների միջոցով ֆինանսական ակտիվներ ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական միջնորդությունը ներկայացնենք մի քանի օրինակով.

Օրինակ 1. Կազմակերպությունն ավանդներ է ընդունում տնտեսության տարբեր սուբյեկտներից և վարկեր տրամադրում:

Օրինակ 2. Կազմակերպությունը ներգրավում է փոխառություններ և տրամադրում վարկեր ու փոխառություններ:

Օրինակ 3. Կազմակերպությունն իր փայատերերից միջոցներ է ներգրավում՝ ձեռնարկություններում ներդրումներ կատարելու նպատակով:

Օրինակ 4. Կազմակերպությունն իր կողմից ստացված ապահովագրական վճարները ներդնում է արժեթղթերի մեջ:

Նման գործառնություններ կատարող կազմակերպություններն ընդգրկվում են ֆինանսական հատվածում և հանդիսանում են ֆինանսական միջնորդներ:

Օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները ֆինանսական միջնորդներ չեն, այսինքն՝ իրենց անունից չեն ընդունում պարտավորություններ ֆինանսական ակտիվների ձեռքբերման նպատակով, այլ իրականացնում են միջնորդությանը նպաստող գործունեություն: Այդպիսի կազմակերպություններ են՝

- բորսաները և արտարժույթի ու արժեթղթերի կազմակերպված շուկաները,
- դեպոզիտարիաները և քլիրինգային կազմակերպությունները,
- բրոքերները և գործակալները,
- արտարժույթի փոխանակման ընկերությունները,
- ֆինանսական երաշխիքների հետ գործ ունեցող կազմակերպությունները,

- ֆինանսական ածանցյալ գործիքների հետ գործ ունեցող կազմակերպությունները,
- ակտիվների կառավարիչները, այդ թվում՝ կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի կառավարիչները,
- ապահովագրական և կենսաթոշակային կազմակերպություններին օժանդակող անձինք (գործակալներ),
- վարկանիշային գործակալություններ և այլն:


Այսպիսով՝ ֆինանսական հատվածը կարելի է բաժանել 2 հատվածների.

- ֆինանսական միջնորդ կազմակերպություններ,
- օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից առավել հետաքրքրություն են ներկայացնում ֆինանսական միջնորդ կազմակերպությունները, որոնք այս կամ այն չափով կարող են մասնակցել փողի ստեղծման գործընթացին:

Ֆինանսական կազմակերպությունների դասակարգումն ըստ ենթահատվածների ներկայացված է ստորև բերված գծապատկեր 1-ում.

Գծապատկեր 1. Ֆինանսական կազմակերպությունների դասակարգումն ըստ ենթահատվածների



Ֆինանսական հատվածի դասակարգումը կարելի է ներկայացնել նաև հետևյալ կերպ՝ ավանդային կազմակեպություններ և այլ ֆինանսական կազմակերպություններ, որտեղ այլ ֆինանսական կազմակերպությունների ենթահատվածն ընդգրկում է ոչ ավանդային կազմակերպությունները, ապահովագրական ընկերություններն ու կենսաթոշակային ֆոնդերը, ինչպես նաև օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները:

2.3.2. Ֆինանսական միջնորդ կազմակերպությունների տեսակները

Սովորաբար կազմակերպությունը ֆինանսական միջնորդ է համարվում, եթե ֆինանսական միջնորդությունը նրա հիմնական գործունեությունն է: Լինում են դեպքեր, երբ կառավարությունը կամ այլ տիպի կազմակերպությունները որոշ ֆինանսական միջնորդային գործարքներ են կատարում, որոնք, սակայն, նրանց հիմնական գործունեությունը չեն: Նման դեպքերում այդպիսի կազմակերպությունները ֆինանսական միջնորդներ չեն համարվում:

Ֆինանսական միջնորդների հատվածը սույն ձեռնարկում քննարկվող ռեզիդենտ տնտեսության հիմնական հատվածն է:

Ավանդային կազմակերպություններ

Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից ավանդային կազմակերպություններն այն ֆինանսական կազմակերպություններն են, որոնց կողմից թողարկված պարտավորություններն ընգրկվում են տվյալ տնտեսության «փող» սահմանման մեջ: Կենտրոնական բանկը, ելնելով իր առանձնահատկություններից, ավանդային կազմակերպությունների առանձին ենթահատված է, իսկ մյուս ավանդային կազմակերպությունները ձևավորում են «այլ ավանդային կազմակերպությունների» ենթահատվածը:

Կենտրոնական բանկ

Կենտրոնական բանկը յուրահատուկ ֆինանսական հաստատություն է, որը ֆինանսական համակարգի կարևորագույն ոլորտների կարգավորման և վերահսկման գործառույթներ է իրականացնում: Կենտրոնական բանկին է վերապահված նաև տնտեսությունում փող թողարկելու բացառիկ իրավունքը, որով էլ պայմանավորված են նրա հիմնական գործառույթների յուրահատկությունները: Այս հիմնական խնդիրների հետ մեկտեղ, Կենտրոնական բանկը ֆինանսական միջնորդության գործառույթներ է իրականացնում: Ընդհանուր առմամբ, կենտրոնական բանկերի հիմնական գործառույթներն են՝ արժույթի թողարկում, դրամավարկային, մակրո և միկրոպրուդենցիալ քաղաքականությունների իրականացում, միջազգային պահուստների կառավարում, ԱՄՀ-ի հետ գործառնությունների իրականացում, այլ ավանդային կազմակերպությունների վարկավորում և կառավարության բանկային սպասարկում[9]:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսության ֆինանսական հատվածի «կենտրոնական բանկ» ենթահատվածը ներառում է միայն ՀՀ կենտրոնական բանկը *(այսուհետ՝ Կենտրոնական բանկ կամ ԿԲ)*, քանի որ կենտրոնական բանկերին բնորոշ վերոնշյալ բոլոր գործառույթները Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ՀՀ ԿԲ-ն:

Այլ ավանդային կազմակերպություններ

Ֆինանսական հատվածի այս ենթահատվածում ընդգրկվում են այն բոլոր ռեզիդենտ ֆինանսական միջնորդ կազմակերպությունները, որոնց պարտավորությունները հիմնականում բաղկացած են ավանդներից[10] կամ ավանդներին բնույթով շատ մոտ ֆինանսական գործիքներից և ընդգրկվում են տվյալ տնտեսության «փող» հասկացության կամ սահմանման մեջ: Այս ենթահատվածի կազմակերպություններն իրականացնում են փողի պահառուի գործառույթ:

[9] *Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործառնությունները ներկայացված են «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում:*

[10] *Սույն ձեռնարկում «ավանդ» հասկացությունը ներառում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանված «հաշիվները»:*

Ավանդային կազմակերպությունների կողմից ընդունված ավանդները կարող են լինել երկու տեսակի՝ փոխանցելի և ոչ փոխանցելի[11]: Փոխանցելի ավանդները ենթակա են վճարման պահանջի դեպքում՝ առանց լրացուցիչ ծախսերի և սահմանափակման, կամ դրանցով կարելի է ուղղակի վճարումներ կատարել վճարման հանձնարարականներով, չեկերով, քարտերով կամ վճարման այլ միջոցներով:

Ոչ փոխանցելի ավանդները ֆինանսական միջնորդների այն ավանդները կամ բնույթով դրանց շատ մոտ պարտավորություններն են, որոնց օգտագործումը ենթակա է որոշակի սահմանափակումների.

- ենթակա է վճարման որոշակի ժամկետում կամ ցանկացած պահի՝ միայն որոշ լրացուցիչ ծախսերի իրականացման պայմանով,
- չի կարող ծառայել որպես ուղղակի վճարումների իրականացման գործիք,
- առկա են այլ տիպի սահմանափակումներ (սառեցված հաշիվներ, գրավադրված միջոցներ և այլն):

Հաշվի առնելով ավանդային կազմակերպությունների պարտավորությունների վերոնշյալ երկու տեսակները՝ «Այլ ավանդային կազմակերպություններ» ենթահատվածը բաժանվում է երկու խմբի. բանկեր և ոչ բանկ ավանդային կազմակերպություններ:

Սույն ձեռնարկի իմաստով՝ բանկեր են համարվում այն ֆինանսական միջնորդ ավանդային կազմակերպությունները, որոնք կարող են ներգրավել ինչպես փոխանցելի, այնպես էլ ոչ փոխանցելի ավանդներ և այլ պարտավորություններ:

Ֆինանսական միջնորդների շատ այլ տեսակներ նույնպես ընդունում են ավանդներ և/կամ թողարկում այլ տիպի պարտավորություններ, որոնք իրենց բնույթով բավականին մոտ են ավանդներին և, հետևաբար, ներառվում են փողի ագրեգատներում: Այս ֆինանսական միջնորդներին, որոնք ներգրավում են հիմնականում ոչ փոխանցելի ավանդներ և այլ տիպի պարտավորություններ, կարելի է խմբավորել «ոչ բանկ ավանդային կազմակերպությունների» ենթահատվածում:

Ոչ բանկ ավանդային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները՝

- ավանդների կամ ավանդներին բնույթով շատ մոտ ֆինանսական գործիքների ներգրավում, ֆինանսական գործիքների թողարկման միջոցով դրամական միջոցների ներգրավում
- բաժնետոմսերի կամ փայաբաժինների թողարկում,
- կարող են լինել զարգացման բանկեր, օֆշորային բանկեր,
- մասնագիտացված միջնորդներ, որոնք մեծ տարածում ունեն զարգացած երկրներում՝ շինարարական, վարկային միություններ, մուրհակային գործակալություններ:

Միջազգային պրակտիկայում բավականաչափ տարածված են դրամական շուկայի ֆոնդերը: Դրանք կոլեկտիվ ներդրումային միավորներ են, որոնք փայերի կամ բաժնետոմսերի թողարկման միջոցով դրամական միջոցներ են ներգրավում հանրությունից: Դրամական շուկայի ֆոնդերը միավորելով իրենց փայատերերի միջոցները, ներդրումներ են կատարում հիմնականում կարճաժամկետ ֆինանսական ակտիվներում, մասնավորապես, դրամական շուկայի գործիքներում, դրամական շուկայի ֆոնդի փայերում կամ բաժնետոմսերում, մինչև մեկ տարի մնացորդային մարման ժամկետ ունեցող փոխանցելի պարտքային գործիքներում, բանկային ավանդներում և այն գործիքներում, որոնց եկամտաբերությունը մոտ է դրամական շուկայի գործիքների տոկոսադրույքներին:

[11] *Այստեղ փոխանցելի և ոչ փոխանցելի ավանդների սահմանումը տրված է ֆինանսական միջնորդ կազմակերպությունները դասակարգելու նպատակով: Այս հասկացությունները մանրամասն բացատրվում են ձեռնարկի 4-րդ բաժնում:*

Դրամական շուկայի ֆոնդերում կատարված ներդրումները, չնայած իրավական տեսանկյունից փայամասնակցություն են համարվում, սակայն այնքան իրացվելի են, որ իրենց բնույթով մոտ են փոխանացելի և այլ (ոչ փոխանացելի) ավանդներին: Ուստի, դրամական շուկայի ֆոնդի փայերը կամ բաժնետոմսերը ընդգրկվում են փողի ագրեգատներում, իսկ դրամական շուկայի ֆոնդերը դասակարգվում են որպես այլ ավանդային կազմակերպություններ:

Որպեսզի ներդրումային ֆոնդը ճանաչվի որպես դրամական շուկայի ֆոնդ, այն պետք է բավարարի հետևյալ պայմաններին. (1) կապիտալի պահպանման որոշակի աստիճան (անվանական արժեքի պահպանում), և (2) առաջին իսկ պահանջով միջոցների դուրսբերման հնարավորություն: Եթե նշված պայմանները բավարարված չեն, ապա կազմակերպությունը դասակարգվում է որպես ոչ դրամական շուկայի ներդրումային ֆոնդ:

Այսպիսով, եթե ֆինանսական կազմակերպության պարտավորություններն ընդգրկվում են փողի ագրեգատներում, նրանք պետք է դասակարգվեն որպես ոչ բանկ ավանդային կազմակերպություններ, նույնիսկ եթե այդ կազմակերպության պարտավորությունները, օրենսդրության համաձայն, «ավանդ» չեն կոչվում:

ՀՀ-ում ոչ բանկ ավանդային կազմակերպությունները ներառում են վարկային կազմակերպությունները, որոնք օրենքով սահմանված կարգով ներգրավվում են այնպիսի պարտավորություններ՝ փոխառություններ, որոնք իրենց բնույթով մոտ են ավանդներին: Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային հաշիվներ, իսկ անկանխիկ դրամական հաշվարկները կատարում են վարկային կազմակերպությանը սպասարկող բանկի միջոցով: Այլ ոչ բանկ ավանդային կազմակերպություններ, ինչպես, օրինակ, դրամական շուկայի ֆոնդեր, Հայաստանում դեռևս չեն գործում:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսության ֆինանսական հատվածի «Ավանդային կազմակերպություններ» ենթահատվածը բաղկացած է ՀՀ կենտրոնական բանկից և այլ ավանդային կազմակերպություններից: «Այլ ավանդային կազմակերպություններ» ենթահատվածը ընդգրկում է ՀՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները:

Ոչ ավանդային ֆինանսական կազմակերպություններ

Ոչ ավանդային ֆինանսական կազմակերպությունների պարտավորությունների իրացվելիությունն ավելի ցածր է, քան ավանդային կազմակերպություններինը, և դրանք փողի ագրեգատներում չեն ընդգրկվում:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն տարբեր տեսակի ոչ ավանդային ֆինանսական միջնորդներ, որոնք կարող են ունենալ տարբեր աստիճանի իրացվելիության պարտավորություններ.

Ոչ դրամական շուկայի ներդրումային ֆոնդեր: Այս կազմակերպությունները կոլեկտիվ ներդրումային միավորներ են, որոնք փայերի կամ բաժնետոմսերի թողարկման միջոցով դրամական միջոցներ են ներգրավում հանրությունից: Ստացված միջոցները ներդրվում են հիմնականում երկարաժամկետ ֆինանսական ակտիվներում, ինչպիսիք են բաժնետոմսերը, պարտատոմսերը, հիփոթեքային վարկերը, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներում, ինչպես, օրինակ, անշարժ գույքը: Ոչ դրամական շուկայի ներդրումային ֆոնդերի օրինակներ են փոխադարձ ֆոնդերը, ներդրումային փուլերը, ներդրումային թրաստերը կամ այլ կոլեկտիվ ներդրումներով զբաղվող կազմակերպությունները: Ոչ դրամական շուկայի ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված փայերը կամ բաժնետոմսերը չեն բավարարում «փողի» սահմանմանը[12] և, հետևաբար չեն ներառվում փողի

[12] *Փողի սահմանումը մանրամասն ներկայացված է «Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները» բաժնում:*

ագրեգատներում, քանի որ չեն կարող փոխանցվել երրորդ անձանց՝ չեկերի կամ ուղղակի վճարման այլ միջոցներով, և դրանց գինը կարող է տատանվել կախված շուկայական պայմաններից, և հետևաբար, դրանք չեն կարող հանդիսանալ անվանական արժեքի պահպանման կամ հարստության կուտակման հուսալի միջոց:

Ֆինանսական ընկերություններ: Այս կազմակերպությունների գործունեության հիմնական բնույթը ոչ ֆինանսական կազմակերպությունների և տնային տնտեսությունների վարկավորումն է: Ֆինանսական ընկերությունների պարտավորությունները սովորաբար իրացվելի չեն: Այս կազմակերպություններն առաջարկում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են սպառողական, հիպոթեքային վարկերը, վարկային քարտերը, փոքր բիզնես վարկերը, տնտեսական զարգացման վարկերը, և բանկային ակցեպտների ու առևտրային դեբիտորական պարտքերի գնումները:

Ֆինանսական լիզինգային ընկերություններ: Այս կազմակերպություններն իրականացնում են հիմնական միջոցների ձեռքբերման ֆինանսավորումը: Լիզինգային ընկերությունները գնված հիմնական միջոցների իրավական սեփականատեր են հանդիսանում, սակայն տնտեսական սեփականատիրությունը փոխանցվում է վարձակալին, որը տնօրինում է հիմնական միջոցներից ստացվող օգուտները և պատասխանատու է դրա տիրապետման հետ կապված բոլոր վնասների և ռիսկերի համար: Տարբեր երկրներ տարբեր ձևերով են կանոնակարգում ֆինանսական լիզինգային ընկերությունների կողմից միջոցների ներգրավումը: Դրանից կախված՝ այս ընկերությունները կարող են դասակարգվել իրացվելի կամ ոչ իրացվելի պարտավորություններով ֆինանսական կազմակերպություններում:

Ներդրումային բանկեր: Այս կազմակերպությունները օժանդակում են կորպորացիաներին ներգրավել դրամական միջոցներ կապիտալի և պարտքային գործիքների շուկաներում և մատուցում են ռազմավարական խորհրդատվական ծառայություններ՝ միաձուլումների, կլանումների և այլ տիպի ֆինանսական գործարքների վերաբերյալ: Ի լրումն նշվածի, ներդրումային բանկերը նաև կատարում են ներդրումներ իրենց սեփական միջոցներով, այդ թվում՝ իրենց հաճախորդների արժեթղթերի առաջարկներում և հեջ ֆոնդերում, որոնք զբաղվում են կորպորացիաներում ուղղակի ներդրումներով:

Դիլերներ և անդերրայթերներ: Այս կազմակերպությունները մասնագիտացված են արժեթղթերի շուկայի գործառնություններում, որոնք իրականացվում են բորսաների, արտաբորսայական շուկաների և մասնավոր՝ ոչ հրապարակային կնքվող գործարքների միջոցով: Նրանք օժանդակում են այլ ձեռնարկություններին/կազմակերպություններին արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործում՝ արժեթղթերի նոր թողարկումների անդերրայթինգի և շուկայական տեղաբաշխման միջոցով, և կարող են իրենց հաշվին ու ռիսկով կնքել նոր թողարկված կամ արդեն տեղաբաշխված արժեթղթերի առք ու վաճառքի գործարքներ: Այս կազմակերպությունների մեջ ներառվում են այն դիլերներն ու անդերրայթերները, որոնք հանդես են գալիս որպես ֆինանսական միջնորդներ: Արժեթղթերի բրոկերները, որոնք սեփական հաշվին արժեթղթերի առք ու վաճառք չեն կատարում, այս տիպի կազմակերպությունների շարքը չեն դասվում, այլ ընդգրկվում են օժանդակ ֆինանսական կազմակերպություններում:

Ֆինանսական ածանցյալների միջնորդներ: Թողարկում են ածանցյալ ֆինանսական գործիքներ կամ զբաղվում են այդ գործիքների առք ու վաճառքով:

Ակտիվների արժեթղթավորում իրականացնող կազմակերպություններ: Այս կազմակերպությունները դրամական միջոցներ են ներգրավում՝ վաճառելով որոշակի ակտիվներով կամ եկամտի ապագա հոսքերով ապահովված արժեթղթեր: Արժեթղթավորումը մի գործընթաց է, որի դեպքում ակտիվը կամ դրամական հոսքեր գեներացնող ակտիվների համախումբը փոխարկվում են շուկայական արժեթղթերի:

Մասնագիտացված ֆինանսական միջնորդներ: Այս կազմակերպություններն իրենցից ներկայացնում են խոր մասնագիտացված միջնորդների խումբ: Այս խմբի մեջ մտնում են ֆինանսական միջնորդության որոշակի ուղղություններով զբաղվող կազմակերպությունները, ինչպես, օրինակ, (1) արտահանման և ներմուծման ֆինանսավորմամբ զբաղվող ընկերությունները, որոնք առաջարկում են միջազգային առևտրի հետ կապված ֆինանսական և փաստաթղթային ծառայությունների լայն շրջանակ, (2) ֆակտորինգային ընկերությունները, որոնք առևտրային կազմակերպություններից ձեռք են բերում դեբիտորական պարտքեր, տրամադրում են վարկեր դեբիտորական պարտքերի զեղչման միջոցով, և տրամադրում են երաշխիքներ, որոնք ծածկում են ուշացած կամ ժամկետանց վճարումները, (3) վենչուրային կապիտալ ֆոնդեր, որոնք միավորում են երրորդ կողմի ներդրողների միջոցները սկսնակ (ստարտափ) ընկերություններում, (4) մեզոնին ընկերությունները (mezzanine companies), որոնք տրամադրում են կարճաժամկետ ֆինանսավորում կորպորատիվ միաձուլումների և ձեռքբերումների համար:

Կապակցված (captive) ֆինանսական կազմակերպություններ և վարկ տրամադրող ընկերություններ: Այս կազմակերպությունները մատուցում են ֆինանսական ծառայություններ, որտեղ իրենց ակտիվներում կամ պարտավորություններում կատարված գործառնությունների մեծ մասը չեն իրականացվում բաց ֆինանսական շուկաներում: Նրանք ընդգրկում են այն կազմակերպությունները, որոնք գործառնություններ են իրականացնում միայն միևնույն հոլդինգային կորպորացիայի միավորների կամ դուստր ընկերությունների սահմանափակ խմբի շրջանակում, ինչպես նաև ընդգրկում են այն կազմակերպությունները, որոնք տրամադրում են վարկեր սեփական միջոցների կամ մեկ հովանավորի կողմից տրամադրված միջոցների հաշվին: Այս ենթահատվածի մեջ ընդգրկվում են հետևյալ ֆինանսական կազմակերպությունները՝

- *Կապակցված (captive) ֆինանսական կազմակերպությունները* դուստր ընկերություններ են, որոնք հանդես են գալիս որպես իրենց մայր կազմակերպության (կորպորացիայի) ֆինանսական գործակալ՝ ներգրավելով միջոցներ իրենց մայր կազմակերպությունների վարկավորման կամ նրանց դեբիտորական պարտքերի գնման համար,
- *Հոլդինգային կազմակերպությունները* (*կորպորացիաները)* միավորներ են, որոնք տիրապետում են դուստր ձեռնարկությունների խմբի ակտիվները որպես իրենց հիմնական գործունեություն և որևէ այլ ծառայություն չեն տրամադրում ձեռնարկություններին, որոնցում գտնվում է իրենց կապիտալը (այսինքն՝ նրանք չեն կառավարում և չեն ղեկավարում այդ դուստր կազմակերպությունները և այլ միավորներ): Հոլդինգային կազմակերպությունները միշտ պատկանում են ֆինանսական կազմակերպությունների հատվածին և համարվում են որպես կապակցված ֆինանսական կազմակերպություններ, նույնիսկ եթե բոլոր դուստր ընկերությունները ոչ ֆինանսական կազմակերպություններ են:
- *Հատուկ նշանակության կազմակերպությունները (special purpose entities)* սովորաբար ստեղծվում են մեկ, հստակ սահմանված կոնկրետ գործունեություն իրականացնելու համար: Սովորաբար, դրանք ստեղծվում են բաց ֆինանսական շուկաներում միջոցներ ներգրավելու համար՝ իրենց մայր կազմակերպության (կորպորացիայի) կողմից օգտագործելու նպատակով:
- *Պետական բարեկեցության հիմնադրամները (sovereign wealth funds)* կառավարության կողմից ստեղծված հատուկ նշանակության պետական ֆոնդեր են, որոնք տիրապետում և կառավարում են ակտիվները՝ ֆինանսական նպատակներին հասնելու համար: Նրանք կիրառում են մի շարք ներդրումային ռազմավարություններ, որոնք ներառում են օտարերկրյա ֆինանսական ակտիվներում ներդրումներ կատարելը:
- *Վարկ տրամադրող կազմակերպությունները* ֆինանսական ծառայություններ են մատուցում հաճախորդների որոշակի խմբին՝ բացառապես սեփական

միջոցների կամ հովանավորի միջոցների հաշվին և կրում են պարտապանի կողմից պարտավորությունների չկատարելու (դեֆոլտի) ֆինանսական ռիսկը: Այստեղ ընդգրկվում են այն միավորները, որոնք որակվում են որպես քվազիկորպորացիա՝ (1) վաշխառուները (անձինք կամ խմբեր), որոնք առաջարկում են փոքր անհատական վարկեր բարձր տոկոսադրույքով, (2) վարկավորմամբ զբաղվող կազմակերպությունները (օրինակ՝ ուսանողական վարկեր, ներմուծման և արտահանման վարկեր), որոնք վարկեր են տրամադրում հովանավորից ստացված միջոցներից, ինչպես օրինակ պետական կառավարման միավորներից կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններից և (3) գրավատները, որոնք վարկեր են տրամադրում ֆիզիկական անձանց՝ նրանց անձնական գույքը օգտագործելով որպես գրավ:

Ներկայումս, Հայաստանում ոչ ավանդային ֆինանսական կազմակերպություններն են ներդրումային ընկերությունները, ներդրումային ֆոնդերը և գրավատները:

Ապահովագրական ընկերություններ և կենսաթոշակային ֆոնդեր

Այս ենթահատվածը բաղկացած է ապահովագրական ընկերություններից և կենսաթոշակային ֆոնդերից: Գործունեության յուրահատուկ բնույթի պատճառով ապահովագրական ընկերությունները և կենսաթոշակային ֆոնդերն այլ ֆինանսական միջնորդներից առանձնացվում և ընդգրկվում են առանձին ենթահատվածում:

Ապահովագրական ընկերությունները ֆինանսական միջնորդներ են, որոնք առաջարկում են ուղղակի ապահովագրության կամ վերաապահովագրության ծառայություններ՝ ապահովելով ֆինանսական պաշտպանություն վնասներից կամ կորուստներից: Ապահովագրական ընկերությունները ապահովագրական պայմանագրով սահմանված որոշակի վճարի դիմաց ստանձնում են պարտավորություն՝ հատուցել ապահովագրական պայմանագրով նախատեսված պատահարների հետևանքով ապահովադիրների կրած փաստացի վնասը կամ կորուստները:

Ապահովագրական ընկերությունների հիմնական գործունեությունը ապահովագրված անձի կյանքի, առողջության, անաշխատունակության, գույքի, երրորդ անձանց կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև նրանց գույքին պատճառած վնասի հատուցման հետ կապված ծառայությունների մատուցումն է ինստիտուցիոնալ միավորներին կամ դրանց խմբերին, ինչպես նաև վերաապահովագրական ծառայությունների մատուցումը այլ ապահովագրական ընկերություններին:

Ապահովագրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունները տարանջատվում են ըստ հետևյալ տեսակների՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն (կյանքի ապահովագրությունից բացի այլ ապահովագրություն) և վերաապահովագրություն:

Կյանքի ապահովագրական ընկերությունները կնքում են անձի կյանքի, լրակեցության և կենսաթոշակային ապահովվածության (կյանքի ապահովագրություն) պայմանագրեր և ստացված ապահովագրավճարները ներդնում են երկարաժամկետ, եկամտաբեր ակտիվներում՝ ապահովադիրների ապագա հատուցումները իրականացնելու համար:

Ոչ կյանքի ապահովագրական ընկերությունները կնքում են անձի առողջության, անաշխատունակության, գույքի, դրա տիրապետման, օգտագործման և տնօրինման, երրորդ անձանց կյանքի կամ առողջության, ինչպես նաև նրանց գույքին պատճառած վնասի հատուցման հետ կապված պայմանագրեր: Ոչ կյանքի ապահովագրական ընկերությունները ապահովադիրներին տրամադրում են ֆինանսական հատուցում՝ պատահարների, հրդեհի, գույքի կորստի, առողջության հետ կապված ծախսերի և այլ ապահովագրական պատահարների տեղի ունենալու դեպքում՝ ընթացիկ ռիսկերը կամ ծախսերը բաշխելով հաճախորդների միջև:

Վերաապահովագրական ընկերությունները ապահովագրավճարի դիմաց ապահովագրում են այլ ապահովագրական ընկերությունների կողմից

ապահովագրական պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կամ պարտավորությունների մի մասը: Ըստ էության, ապահովագրական ընկերությունները վերաապահովագրությանն են փոխանցում ապահովագրական պայմանագրերով ստանձնած ռիսկերը՝ ապահովագրական պատահարի հետևանքով ի հայտ եկած զուտ վնասները նվազեցնելու նպատակով:

Ներկայումս, Հայաստանում ապահովագրական ընկերություններն իրականացնում են միայն ոչ կյանքի ապահովագրական գործունեություն:

Այս ենթահատվածում ընդգրկված կենսաթոշակային ֆոնդերը տարբերվում են պետական կառավարման հատվածում ընդգրկված սոցիալական ապահովության հիմնադրամներից: Դրանք սովորաբար չեն ֆինանսավորվում պետական կառավարման մարմինների կողմից և, ի տարբերություն սոցիալական ապահովության հիմնադրամների, դրանց նպատակը ոչ թե ամբողջ հասարակության, այլ առանձին աշխատողների խմբերի կենսաթոշակային ապահովության խնդիրների կարգավորումն է:

Կենսաթոշակային ֆոնդերի ենթահատվածը բաղկացած է ինքնավար կենսաթոշակային ֆոնդերից, որոնք ստեղծվում են անհատների առանձին խմբերին կենսաթոշակներով ապահովելու նպատակով: Այս կենսաթոշակային ֆոնդերն ունեն իրենց առանձին կենսաթոշակային ակտիվները և պարտավորությունները, իսկ իրենց ներդրողների նկատմամբ ունեն կոնկրետ պարտավորություններ: Կենսաթոշակային սխեմաները կարող են ստեղծվել ինչպես կամավոր հիմունքներով, այնպես էլ կարող են լինել պարտադիր, որի դեպքում պարտադիր կուտակային վճարներ են կատարվում աշխատողի, գործատուի կամ երկուսի կողմից:

Կենսաթոշակային ֆոնդերի գործնեությունը ՀՀ-ում սկսվել է 2014 թվականից, երբ ներդրվել է կուտակային կենսաթոշակային համակարգը: Համաձայն գործող կարգի՝ կենսաթոշակային կուտակային համակարգի մասնակիցների օգտին վճարները կատարվում են ինչպես աշխատողների, այնպես էլ պետության կողմից: Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ձևավորվում են հավաքագրված կուտակային վճարների և դրանց ներդրման հաշվին, իսկ մասնակիցներին վճարումները կատարվում են կենսաթոշակի ձևով՝ մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում[13]:

3. Ֆինանսական գործիքներ

Դրամավարկային վիճակագրության մշակման և ներկայացման ամենակարևոր փուլերից մեկը ֆինանսական գործիքների դասակարգումն ու դրանց բնույթի բացահայտումն է: Ինչպես դրամավարկային վիճակագրությունում կիրառվող այլ դասակարգումների դեպքում, այստեղ ևս նպատակահարմար է հետևել ընդունված միջազգային չափանիշներին, որը թույլ կտա մշակվող վիճակագրությունը համեմատական դարձնել այլ երկրների հետ, ինչպես նաև ապահովել դրա միասնականացումը: Իհարկե, դասակարգելիս անպայման անհրաժեշտ է, բացի միջազգային սկզբունքների կիրառումից, հաշվի առնել նաև տվյալ երկրի ֆինանսական համակարգի յուրահատկությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դրանց զարգացման հեռանկարներին:

Ֆինանսական գործիքները տնտեսական (ինստիտուցիոնալ) միավորների միջև կնքված ամենատարբեր բնույթի ֆինանսական պայմանագրեր են, որոնք ընդգրկում են միավորների ֆինանսական պահանջների և պարտավորությունների ամբողջությունը՝ ներառյալ այնպիսի պայմանական պարտավորություններ, ինչպիսիք են երաշխավորագրերը, պարտավորագրերը և այլն: Ֆինանսական գործիքը սահմանվում է որպես ցանկացած պայմանագիր, որի արդյունքում կարող է առաջանալ ֆինանսական ակտիվ՝ մի կողմի համար և ֆինանսական

[13] *ՀՀ օրենք «Կուտակային կենսաթոշակների մասին»:*

պարտավորություն կամ կապիտալում մասնակցություն՝ մյուս կողմի համար:

Ֆինանսական գործիքը կարող է գոյություն ունենալ միայն երկու տնտեսական միավորների միջև: Այն դեպքերում, երբ ֆինանսական գործիքները բաղադրյալ են, այսինքն՝ իրենցից ներկայացնում են մի քանի գործիքների փաթեթ, վիճակագրության մշակման ընթացքում անհրաժեշտ է դրանք տարանջատել առանձին գործիքների, որպեսզի դրանցից յուրաքանչյուրն ընդգրկի տնտեսական սուբյեկտների միայն մեկ զույգ:

Ֆինանսական ակտիվները պայմանագրեր են, որոնք պայմանականություն չեն պարունակում, այսինքն՝ դրանց արդյունքում, անկախ որևէ պայմանից, առաջանում են հաշվառելի արժեք ունեցող ֆինանսական պահանջներ, որոնց նկատմամբ կիրառելի են անհատական կամ կոլեկտիվ սեփականության իրավունքները, և որոնց օգտագործումից կամ տնօրինումից կարող են տնտեսական օգուտներ ստացվել:

Հաշվի առնելով, որ «ֆինանսական գործիք» հասկացությունն ավելի ընդգրկուն է, քան 2008 թվականի «Ազգային հաշիվների համակարգում» սահմանված «ֆինանսական ակտիվներ» հասկացությունը, առաջանում է ֆինանսական գործիքների հետևյալ ընդհանուր դասակարգումը՝ ֆինանսական ակտիվներ և այլ ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը իրականացվում է դրանց հետևյալ երկու հիմնական բնութագրերի հիման վրա՝ իրացվելիություն և իրավական բնութագրիչներ:

Աղյուսակ 2. Ֆինանսական գործիքների դասակարգումը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ	*ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ*	Մոնետար ոսկի ՀՓԻ (SDR) Կանխիկ Ավանդներ Պարտքային արժեթղթեր Փոխառություններ Վարկեր Բաժնային գործիքներ և ներդրումային ֆոնդերի փայեր կամ բաժնետոմսեր Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաներ Ֆինանսական ածանցյալներ և աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոններ Ստացման կամ վճարման ենթակա հաշիվներ
	ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ	Երաշխավորագրեր Ակրեդիտիվներ Ֆինանսական պարտավորագրեր Գրավադրված ֆինանսական ակտիվներ

3.1 Մոնետար ոսկի և ՀՓԻ (SDR)

Մոնետար ոսկին և ՀՓԻ-ն, որը թողարկվում է ԱՄՀ-ի կողմից, ֆինանսական ակտիվներ են, որոնք սովորաբար տնօրինվում են միայն դրամավարկային կարգավորման մարմինների (կենտրոնական բանկի կամ կառավարության)[14] կողմից:

Մոնետար ոսկի՝ Մոնետար ոսկին ընդգրկում է միայն դրամավարկային կարգավորման մարմինների կողմից տնօրինվող ոսկին, որը ներառված է միջազգային պահուստների կազմում: Հետևաբար, մոնետար ոսկին կարող է

[14] *Հայաստանի Հանրապետությունում որպես դրամավարկային կարգավորման մարմին հանդիսանում է Կենտրոնական բանկը:*

լինել ֆինանսական ակտիվ միայն կենտրոնական բանկի կամ կենտրոնական կառավարության համար:

Մոնետար ոսկին ընդգրկում է ոսկու ստանդարտացված ձուլակտորները (ներառյալ տեղաբաշխված ոսկու հաշիվներում պահվող ոսկին) և ոչ ռեզիդենտների մոտ չտեղաբաշխված ոսկու հաշիվները[15], որոնք իրավունք են տալիս պահանջելու ոսկու առաքումը (մատակարումը): Տեղաբաշխված ոսկու հաշիվները ոսկու կոնկրետ քանակի նկատմամբ ապահովում են սեփականության իրավունք, մինչդեռ չտեղաբաշխված ոսկու հաշիվները իր տնօրինողին առարկայական (ֆիզիկական) ոսկու նկատմամբ սեփականության իրավունք չեն տալիս, սակայն ոսկու մատակարարման գծով ապահովում են պահանջի իրավունք հաշվի օպերատորի նկատմամբ: Ըստ էության, վերջինս հանդես է գալիս որպես ավանդ՝ արտահայտված ոսկով:

Ոսկու ստանդարտացված ձուլակտորները (ներառյալ տեղաբաշխված ոսկու հաշիվներում պահվող ոսկին) դասակարգվում են որպես մոնետար ոսկի, եթե դրամավարկային կարգավորման մարմինների կողմից պահվում են որպես միջազգային պահուստների մաս: Հակառակ դեպքում, եթե դրանք միջազգային պահուստների մաս չեն, ապա դասակարգվում են որպես ոչ ֆինանսական ակտիվ:

Չտեղաբաշխված ոսկու հաշիվները, որոնք ոսկու մատակարարման գծով պահանջի իրավունք են տալիս, դասակարգվում են որպես մոնետար ոսկի, եթե դրամավարկային կարգավորման մարմինների կողմից պահվում են որպես միջազգային պահուստների մաս: Ակտիվներում արտացոլված չտեղաբաշխված ոսկու հաշիվները, որոնք միջազգային պահուստների մաս չեն կազմում, ինչպես նաև պարտավորություններում արտացոլված չտեղաբաշխված ոսկու հաշիվները դասակարգվում են որպես արտարժութային ավանդներ: Նույն սկզբունքը կիրառվում է այլ թանկարժեք մետաղներով չտեղաբաշխված հաշիվների դեպքում, որոնք նույնպես դասակարգվում են որպես արտարժութային ավանդներ:

Մոնետար ոսկու մեջ ընդգրկված ոսկու ստանդարտացված ձուլակտորները միակ ֆինանսական ակտիվն են, որոնք չունեն համապատասխան ֆինանսական պարտավորություն, այսինքն՝ չեն հանդիսանում պահանջ որևէ այլ կողմի նկատմամբ: Դրանց հետ կապված գործարքները ոսկու առք ու վաճառքի գործառնություններ են և կատարվում են միայն կենտրոնական բանկերի միջև կամ կենտրոնական բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջև: Այս շրջանակից դուրս իրականացվող ոսկու ստանդարտացված ձուլակտորների հետ կապված գործարքները դիտարկվում են որպես գործարքներ ոչ ֆինանսական ակտիվների հետ:

Տնտեսության բոլոր հատվածների կողմից կարող են բացվել տեղաբաշխված և չտեղաբաշխված ոսկու հաշիվներ համապատասխան ծառայություններ մատուցող ֆինանսական կազմակերպություններում: Սակայն ֆինանսական կազմակերպությունների (բացի կենտրոնական բանկից) և տնտեսության այլ հատվածների կողմից պահվող ոսկու ստանդարտացված ձուլակտորները և ոսկով արտահայտված ավանդները ոչ մոնետար ոսկի են, իսկ նրանց կողմից ոսկով իրականացվող գործառնությունները դիտարկվում են որպես արժեքների ձեռքբերման և օտարման գործառնություններ: Հետևաբար, տնտեսության այս հատվածների կողմից պահվող ոսկու ստանդարտացված ձուլակտորները (ներառյալ տեղաբաշխված ոսկու հաշիվները) համարվում են ոչ ֆինանսական ակտիվ:

ՀՓԻ (SDR) – ՀՓԻ-ն (Հատուկ փոխառության իրավունք) ԱՄՀ-ի կողմից թողարկվող[16] միջազգային պահուստային ակտիվ է, որը բաշխվում է անդամ երկրներին՝

[15] *Չտեղաբաշխված ոսկու հաշիվները դրանք ոսկու առարկայազուրկ մետաղական հաշիվներներն են:*

[16] *ԱՄՀ-ի հետ իրականացվող գործառնությունները մանրամասն նկարագրված են 6-րդ բաժնում:*

առկա միջազգային պահուստները համալրելու նպատակով: Ընդ որում, ՀՓԻ-ն բաշխվում է ԱՄՀ այն անդամներին, որոնք ՀՓԻ վարչության մասնակցներ են (ներկայումս ԱՄՀ բոլոր անդամ երկրները): Այսպիսով՝ ՀՓԻ-ով միջոցները տնօրինվում են ՀՓԻ վարչության մասնակիցներ հանդիսացող ԱՄՀ անդամ երկրների, ինչպես նաև ԱՄՀ-ի (ընդհանուր ռեսուրսների հաշվի միջոցով) և ԱՄՀ-ի կողմից լիազորված սահմանափակ թվով միջազգային ֆինանսական ու դրամավարկային կազմակերպությունների կողմից: Այդ միջոցները պահվում են բացառապես պաշտոնական մարմինների կողմից, որոնք սովորաբար կենտրոնական բանկերն են: ՀՓԻ-ով գործարքները ԱՄՀ անդամների միջև կամ ԱՄՀ և իր անդամների միջև դիտարկվում են որպես ֆինանսական գործարքներ: ՀՓԻ-ով միջոցները անվերապահ իրավունք են տալիս դրանք տնօրինողին ԱՄՀ այլ անդամներից ձեռք բերել արտարժույթ կամ այլ պահուստային ակտիվներ: Ընդ որում, ՀՓԻ-ն չի համարվում ԱՄՀ պարտավորություն, այլ ՀՓԻ վարչության մասնակից ԱՄՀ անդամ երկրների միասնական կոլեկտիվ պարտավորություն է: Կենտրոնական բանկի հաշվեկշռում ՀՓԻ-ով միջոցները գրանցվում են որպես համախառն աիտիվներ, իսկ ՀՓԻ-ի բաշխումը՝ որպես համախառն պարտավորություն[17]:

3.2 Կանխիկ և ավանդներ

Կանխիկը և ավանդները համեմատաբար ամենաիրացվելի ֆինանսական ակտիվներն են՝ բաղկացած շրջանառությունում կանխիկ դրամից, ազգային արժույթով և արտարժույթով ավանդների բոլոր տեսակներից:

Կանխիկ դրամ՝ Կանխիկ դրամը հաստատագրված անվանական արժեքով և առանց մարման ժամկետի շրջանառվող թղթադրամների և մետաղադրամների ամբողջությունն է: Ընդ որում, թողարկված թղթադրամները և մետաղադրամները հանդիսանում են կենտրոնական բանկի պարտավորություններ: Կանխիկ դրամն ընդհանրապես օգտագործվում է վճարումներ իրականացնելու համար: Վիճակագրական նպատակներով անհրաժեշտ է միշտ տարբերակում կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կենտրոնական բանկերի կողմից թողարկված թղթադրամների և մետաղադրամների միջև, այսինքն՝ պետք է տարանջատել ազգային արժույթը օտարերկրյա արժույթից: Եթե ազգային արժույթը տվյալ երկրի պարտավորությունն է (մասնավորապես կենտրոնական բանկի), ապա արտարժույթը՝ այլ երկրների պարտավորությունը:

Տնտեսության բոլոր հատվածները և ոչ ռեզիդենտները կարող են պահել և տնօրինել կանխիկը որպես ակտիվ, սակայն միայն դրամավարկային մարմինները կամ կենտրոնական բանկերը այն թողարկելու իրավասություն ունեն: Շատ երկրներում միայն ազգային արժույթն է ընդգրկված փողի ագրեգատներում, որովհետև միայն ազգային արժույթը կարող է ուղղակիորեն օգտագործվել ռեզիդենտների միջև գործարքներ իրականացնելու համար: Այնուամենայնիվ, մի շարք երկրներում արտարժույթը շրջանառվում է ազգային արժույթի հետ միասին և կարող է կարևոր լինել դրամավարկային քաղաքականության տեսանկյունից:

Որոշ երկրներ թողարկում են ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից հատված մետաղադրամներ, որոնք կարող են որպես վճարման միջոց օգտագործվել: Սովորաբար, այսպիսի մետաղադրամները պահվում են դրանց դրամագիտական արժեքի համար և, հետևաբար, եթե ակտիվորեն շրջանա-

[17] *ՀՓԻ-ի դասակարգման մեջ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ, մասնավորապես, մինչև 2009 թվականը, համաձայն 2000թ. ԱՄՀ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության» ձեռնարկի (MFSM), ՀՓԻ-ն, ինչպես որ մոնետար ոսկին, դասակարգվում էր որպես ֆինանսական ակտիվ՝ առանց համապատասխան պարտավորության, այսինքն՝ ֆինանսական ակտիվ՝ առանց պահանջի որևէ այլ կողմի նկատմամբ:*

ռության մեջ չեն գտնվում, դասակարգվում են որպես ոչ ֆինանսական ակտիվներ:

Ավանդներ՝ Ավանդները չշրջանառվող պայմանագրեր են, որոնք հավաստիացնում են դրամական միջոցների ներդնումը՝ դրանց հետագա դուրսբերման նպատակով: Որպես կանոն՝ ավանդը ստանդարտ պայմանագիր է, որն ընդհանուր առմամբ հասանելի է հանրության համար, ինչը թույլ է տալիս տարբեր չափի գումարների ներդնում:

Ավանդներն ընդգրկում են բոլոր պահանջները կենտրոնական բանկի և այլ ավանդային կազմակերպությունների նկատմամբ՝ արտահայտված բանկային ավանդների ձևով և հաստատված ավանդի վերաբերյալ վկայագրով: Որոշ դեպքերում ավանդներ կարող են ներգրավել նաև այլ ֆինանսական կազմակերպությունները: Ավանդային կազմակերպությունների կողմից ընդունված ավանդները կարող են լինել երկու տեսակի՝ փոխանցելի ավանդներ և այլ (ոչ փոխանցելի) ավանդներ: Սովորաբար առանձին ենթակատեգորիաներ են օգտագործվում նաև ազգային արժույթով ավանդների և արտարժույթով ավանդների համար:

Փոխանցելի ավանդներ՝ Փոխանցելի ավանդները (ազգային արժույթով կամ արտարժույթով) ենթակա են վճարման պահանջի դեպքում՝ առանց որևէ լրացուցիչ ծախսի և սահմանափակման, կարող են օգտագործվել երրորդ կողմին ուղղակի վճարումներ իրականացնելու համար (վճարման հանձնարարականներով, չեկերով, քարտերով կամ այլ վճարման միջոցներով) կամ օգտագործվել այլ կերպ՝ որպես վճարման կամ շրջանառության միջոց: Փոխանցելի ավանդներն ընդգրկում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններում փոխանցելի ավանդները: Տնտեսության բոլոր հատվածները և ոչ ռեզիդենտները կարող են բացել և վարել փոխանցելի ավանդային հաշիվներ:

Այլ (ոչ փոխանցելի) ավանդներ՝ «Այլ ավանդներ» ենթակատեգորիան ընդգրկում է բոլոր տեսակի ավանդները (ազգային արժույթով կամ արտարժույթով)՝ բացի վերը սահմանված փոխանցելի ավանդներից: Այլ ավանդները ֆինանսական միջնորդների այն ավանդները կամ իրենց բնույթով դրանց շատ մոտ պարտավորություններն են, որոնք չեն կարող օգտագործվել ցանկացած պահին երրորդ կողմին վճարում կատարելու համար: Դրանք փոխանակելի չեն կանխիկի կամ փոխանցելի ավանդի՝ առանց որոշակի սահմանափակումների կամ տուգանքների, իսկ դրանց օգտագործումը ենթակա է որոշակի սահմանափակումների.

- ենթակա է վճարման սահմանված ժամանակահատվածում կամ ցանկացած պահի՝ միայն որոշակի լրացուցիչ ծախսերի իրականացման պայմանով,
- չի կարող ծառայել որպես անմիջական վճարումների իրականացման գործիք,
- առկա են այլ տիպի սահմանափակումներ (սառեցված հաշիվներ, գրավադրված միջոցներ և այլն):

Տնտեսության բոլոր հատվածները և ոչ ռեզիդենտները կարող են այսպիսի ավանդային հաշիվներ բացել և վարել:

Այլ ավանդներում ընդգրկվող ավանդների բնորոշ ձևերն են՝

- ժամկետային ավանդներ,
- ռեպո համաձայնագրեր, որոնք ընդգրկված են փողի զանգվածի ընդունված սահմանման մեջ:

3.3 Պարտքային արժեթղթեր

Արժեթղթերն ընդգրկում են պարտքային արժեթղթերը և բաժնային արժեթղթերը: Պարտքային արժեթղթերը ֆինանսական շուկայում շրջանառվող գործիքներ են, որոնք վկայում են, որ այդ գործիքները թողարկող սուբյեկտները դրանք մարելու պարտավորություններ են ստանձնել՝ փողով, այլ ֆինանսական գործիքով կամ տնտեսական արժեք ներկայացնող որևէ այլ գործիքով: Պարտքային արժեթղթերը, ի տարբերություն բաժնային արժեթղթերի[18], իրենց սեփականատիրոջը այն թողարկող սուբյեկտի նկատմամբ սեփականության իրավունք չեն տալիս: Պարտքային արժեթղթերի հիմնական ձևերից են՝ պետական գանձապետական մուրհակները, պետական պարտատոմսերը, կորպորատիվ պարտատոմսերն ու չապահովված երկարաժամկետ պարտատոմսերը (չապահովված պարտքային պարտավորություններ-debenture), ձեռնարկությունների կարճաժամկետ պարտատոմսերը (կարճաժամկետ շրջանառու գործիքներ- commercial paper), ավանդային կազմակերպությունների շրջանառվող ավանդային հավաստագրերը և նմանատիպ այլ գործիքներ, որոնք սովորաբար վաճառվում են ֆինանսական շուկաներում: Այն վարկերը կամ պարտավորությունները, որոնք այս կամ այն պատճառով փաստացի դարձել են շուկայում շրջանառվող, ևս պետք է ընդգրկվեն այս դասակարգման մեջ:

Պարտքային արժեթուղթը վկայում է, որ գոյություն ունի այն թողարկողի նկատմամբ ֆինանսական պահանջ և հիմնականում սահմանում է տոկոսավճարների և հիմնական գումարի մարման գրաֆիկը: Դրամավարկային վիճակագրություն իրականացնելիս պարտքային արժեթղթերը դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական ձևերի.

- *արժեկտրոնային պարտատոմսեր,* որոնց տոկոսավճարները կամ կուպոնային վճարումները պարբերաբար կատարվում են գործիքի գոյության ամբողջ ընթացքում, իսկ հիմնական գումարը վճարվում է արժեթղթի մարման ժամանակ,
- *ամորտիզացվող պարտատոմսեր,* որոնց և՛ տոկոսավճարները, և՛ հիմնական գումարի մասնակի վճարումները հավասար չափաբաժիններով պարբերաբար կատարվում են գործիքի գոյության ամբողջ ընթացքում,
- *զեղչատոկոսային կամ զրոյական արժեկտրոնով պարտատոմսեր*, որոնք թողարկվում և տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գնով և վճարման օրը մարվում են անվանական արժեքով,
- *մեծ զեղչատոկոսով պարտատոմսեր (deep discount),* որոնք թողարկվում և տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գնով, ընդ որում, տոկոսների մի մասը վճարվում է պարբերաբար՝ արժեթղթի գոյության ընթացքում, իսկ հիմնական գումարի մարումը և տոկոսների հիմնական մասի վճարումը կատարվում է արժեթղթի մարման ժամանակ:
- *ինդեքսավորվող պարտատոմսեր,* որոնց դիմաց վճարվող տոկոսները և/կամ հիմնական գումարի վճարումները փոխկապվածության մեջ են դրվում գնաճի, տոկոսադրույքի կամ փոխարժեքի հետ:

Այն արտոնյալ բաժնետոմսերը, որոնց դիմաց ստացվում է հաստատագրված (ֆիքսված) եկամուտ, սակայն թողարկող ձեռնարկության կապիտալում մասնակցություն չեն ենթադրում, դասակարգվում են որպես պարտքային արժեթղթեր: Փոխարկելի պարտատոմսերը, որոնք ֆիքսված տոկոսադրույքով պարտատոմսեր են, և որոնք կարող են փոխարկվել բաժնետոմսերի, մինչև փոխարկումը նույնպես պետք է դասակարգվեն այս կատեգորիայում:

Պարտքային արժեթղթերի թողարկման հնարավորություններից մեկը ֆինանսական ակտիվների արժեթղթավորումն է: Արժեթղթավորումն, ըստ էության, այնպիսի ֆինանսական ակտիվների դիմաց արժեթղթերի թողարկումն է, ինչպիսիք են, օրինակ, հիփոթեքային վարկերը, վարկային քարտի տնօրինողների նկատմամբ

[18] *Բաժնային արժեթղթերի նկարագիրը տրված է «Բաժնային գործիքներ և ներդրումային ֆոնդերի փայեր կամ բաժնետոմսեր» բաժնում (3.6 կետ):*

պահանջները և վարկերի այլ տեսակներ: Նման ֆինանսական ակտիվները շարունակում են մնալ հաշվեկշռում՝ որպես դրանք ձեռք բերողների ակտիվներ, մինչդեռ թողարկողներն իրենց համապատասխան պարտավորությունները գրանցում են որպես արժեթղթեր:

Բանկային ակցեպտը դրա հաստատման պահից դիտարկվում է որպես պարտքային արժեթուղթ, չնայած միջոցների փոխանակում կամ ֆինանսական հոսք կարող է տեղի չունենալ: Բանկային ակցեպտը պարտավորեցնում է այն ակցեպտավորող ֆինանսական կազմակերպությանը՝ որոշակի ժամկետում որոշակի վճարում կատարել փոխանցելի մուրհակի (bill of exchange) դիմաց: Բանկային ակցեպտը ներկայացնում է անվերապահ պահանջ այն տնօրինողի համար և անվերապահ պարտավորություն՝ ընդունող ֆինանսական կազմակերպության նկատմամբ:

Իրականացվում է նաև պարտքային արժեթղթերի այլընտրանքային դասակարգում՝ ըստ ժամկետայնության (կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ)՝ հիմնված հետևյալ չափանիշների վրա՝

Կարճաժամկետ արժեթղթեր՝ Ընդգրկում է այն պատքային արժեթղթերը, որոնք ունեն 1 տարի կամ մեկ տարուց պակաս մարման ժամկետ:

Միջինժամկետ արժեթղթեր՝ Այս պատքային արժեթղթերի մարման ժամկետները կախված են տվյալ երկրի ֆինանսական շուկաներում կիրառվող պատքային արժեթղթերի ժամկետայնություններից: Որպես կանոն, նշված ենթակատեգորիայում են ընդգրկվում մեկից մինչև հինգ տարի մարման ժամկետ ունեցող պատքային արժեթղթերը:

Երկարաժամկետ արժեթղթեր՝ Ընդգրկում է այն պարտքային արժեթղթերը, որոնց մարման ժամկետներն ավելի երկար են, քան կարճաժամկետ և միջինժամկետ պատքային արժեթղթերինը:

3.4 Փոխառություններ

Փոխառությունները, սովորաբար, որպես առանձին ֆինանսական գործիք չեն տարանջատվում: Փոխառության գործառնություններն իրականացվում են այլ ֆինանսական գործիքների միջոցով, օրինակ՝ վարկերի, ավանդների և այլն: Այնուամենայնիվ, ելնելով ՀՀ օրենսդրության առանձնահատկություններից, փոխառությունները ՀՀ-ում կարելի է դիտարկել որպես առանձին ֆինանսական գործիք, քանի որ վարկային կազմակերպությունների համար միջոցների ներգրավման աղբյուր են: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ փոխառության պայմանագրով փոխատուն փոխառուին սեփականության իրավունքով տրամադրում է փող, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը պայմանագրով նախատեսված համապատասխան ժամկետում և կարգով: Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Այսպիսով՝ փոխառությունները, ինչպես և ավանդները, կարող են լինել ցպահանջ և ժամկետային:

Փոխառությունները, ի տարբերություն ժամկետային ավանդների, ավելի ցածր իրացվելիություն ունեն, քանի որ փոխատուի փոխառության գումարի վերադարձման պահանջը ենթակա է սահմանափակումների, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Սովորաբար փոխառության գործառնության դեպքում փոխատուն տոկոսներ է ստանում տրամադրած գումարի դիմաց:

3.5 Վարկեր

3.5.1. Վարկեր

Վարկերը ֆինանսական ակտիվներ են, որոնք.

- առաջանում են կրեդիտորների կողմից դեբիտորներին (փոխառուներին) ուղղակիորեն վարկային միջոցների տրամադրման դեպքում,
- հաստատված են համապատասխան չշրջանառվող փաստաթղթերով:

Վարկերը բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝

- վարկի տրամադրման պայմանները կամ սահմանվում են վարկ տրամադրող ֆինանսական կազմակերպության կողմից, կամ համաձայնեցվում են վարկատուի և վարկառուի կողմից ուղղակիորեն կամ բրոքերի միջոցով,
- վարկ վերցնելու նախաձեռնությունը սովորաբար ցուցաբերվում է վարկառուի կողմից,
- վարկը անվերապահ պարտք է վարկատուի նկատմամբ, որը պետք է մարման ժամկետում մարվի և, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ:

Վերլուծական նպատակներից ելնելով՝ վարկերը կարելի տարանջատել ըստ արժույթների՝ դրամով և արտարժույթով, ինչպես նաև ըստ ժամկետայնության:

Կարճաժամկետ վարկեր՝ Կարճաժամկետ վարկերը սովորաբար ընդգրկում են այն վարկերը, որոնց մարման ժամկետը մեկ տարի կամ մեկ տարուց պակաս է: Բոլոր վարկերը, որոնք մարվելու են պահանջի դեպքում, դասակարգվում են որպես կարճաժամկետ, եթե անգամ սպասվում է, որ այդ վարկերը չեն մարվելու մեկ տարուց ավելի:

Միջինժամկետ վարկեր՝ Երկրներում կիրառվող չափանիշներից կախված՝ որպես միջինժամկետ վարկեր են դասակարգվում մեկից մինչև հինգ տարի ժամկետայնություն ունեցող վարկերը:

Երկարաժամկետ վարկեր՝ Երկարաժամկետ վարկերն ընդգրկում են այն վարկերը, որոնց մարման ժամկետը գերազանցում է կարճաժամկետ և միջինժամկետ վարկերի մարման ժամկետները:

Վարկերի տեսակներն են՝ օվերդրաֆտները, սպառողական վարկերը, հիփոթեքային վարկերը, առևտրային վարկերը և այլ տիպի վարկեր: Փոխանցելի ավանդային հաշիվների վրա առկա օվերդրաֆտների օգտագործված միջոցները դասակարգվում են որպես վարկ, այլ ոչ թե որպես բացասական մնացորդով փոխանցելի ավանդ:

Ըստ վիճակագրական դասակարգման՝ վարկերի և փոխատվությունների կարգին են դասվում նաև ռեպո համաձայնագրերը, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգային գործառնությունները և նմանատիպ այլ պայմանագրերը:

3.5.2. Ռեպո համաձայնագրեր

Ռեպո համաձայնագիրը արժեթղթերի հետգնման համաձայնագիր է, համաձայն որի՝ մի կողմը մյուսին արժեթղթեր է վաճառում՝ դրանք կամ նույն ծավալի նմանատիպ այլ արժեթղթեր ապագայում հետ գնելու պայմանով: Ընդ որում, արժեթղթերի գնորդ կողմը իրավունք է ստանում պայմանագրի գործողության ընթացքում, մինչև հետգնման (հետվաճառքի) ամսաթիվը ռեպո արժեթղթերով գործառնություններ կատարել, իսկ պայմանագրի մարման պահին պետք է նմանատիպ արժեթղթեր հետ վաճառի մյուս կողմին: Այս գործարքում հետ գնելու պայմանը ռեպո համաձայնագիրն ավելի նման է դարձնում գրավադրված վարկին, քան արժեթղթերի առք ու վաճառքին: Հետևաբար, ռեպո համաձայնագրերում արժեթղթեր վաճառող կողմը պետք է շարունակի իր հաշվեկշռում ցույց տալ հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը:

Մակրոտնտեսական վիճակագրությունում ռեպո համաձայնագրի ներքո դրամական միջոցների տրամադրումը և ստացումը կարող է դիտարկվել որպես վարկ կամ ավանդ: Որպես կանոն, ռեպո համաձայնագիրը դասակարգվում է որպես վարկ, սակայն եթե այն հանդիսանում է ավանդային կազմակերպության պարտավորություն փող պահող հատվածի նկատմամբ, ապա դասակարգվում է որպես ոչ փոխանցելի ավանդ և կարող է ընդգրկվել փողի ագրեգատներում:

3.5.3. Սվոփ համաձայնագրեր[19]

Չնայած սվոփը ընդհանուր առմամբ համարվում է ֆինանսական ածանցյալ, սակայն կախված դրանց իրականացման բնույթից և համապատասխան գործարքի պայմաններից, որոշ դեպքերում կարող է ավելի մոտ լինել ռեպո համաձայնագրերին:

Սվոփ համաձայնագրերի տարածված տարատեսակներն են.

Ոսկով սվոփ գործառնությունները հետգնման պայմանագրերի տարատեսակ են: Ոսկու սվոփի դեպքում ոսկին որոշակի գնով փոխանակվում է արտարժույթով՝ սահմանված ժամկետում որոշակի գնով հետ գնելու պայմանով: Ոսկու սվոփները պետք է արտացոլվեն որպես գրավադրված վարկեր: Գրավադրված ոսկին պետք է մնա սկզբնական սեփականատիրոջ հաշվեկշռում (ԿԲ-ի դեպքում՝ մոնետար ոսկի):

ՀՀ ԿԲ-ն կիրառում է *արժութային սվոփ գործառնություններ*, որի դեպքում կողմերը պայմանավորվում են ՀՀ դրամը սփոթ ձևով փոխանակել արտարժույթի հետ, պայմանով, որ հետադարձ առաջիկա (ֆորվարդ) փոխանակման ֆորվարդ-փոխարժեքը չի նշվում, այլ նշվում է գործարքի սկզբնական արժեքը ՀՀ դրամով՝ գումարած պայմանագրով սահմանված փոխանակման (սվոփ) տոկոսադրույքը: Այսպիսով՝ արժութային սվոփն իր բնույթով նման է արտարժույթի գրավադրմամբ տրվող վարկին կամ արտարժութային ռեպո գործառնություններին:

3.5.4. Ֆինանսական լիզինգ

Լիզինգը համաձայնագիր է, որի մի կողմը՝ վարձատուն (լիզինգատու), մյուս կողմին՝ վարձակալին (լիզինգառու), փոխանցում է որոշակի գույքի (շենք, կառույց, սարքավորում և այլն) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում և փոխհամաձայնեցված պայմաններով: Սովորաբար այդպիսի համաձայնագիրը նախատեսում է օգտագործվող սարքավորման դիմաց պարբերական վճարումներ՝ դրա շահագործման ժամկետի ամբողջ ընթացքում: Լիզինգային գործառնությունների առարկա կարող են հանդիսանալ հիմնական միջոցները՝ տարբեր տեսակի մեքենաներ և սարքավորումներ, տեխնոլոգիական համալիրներ, տրանսպորտային միջոցներ, տեղեկատվական համակարգեր և նմանատիպ այլ սարքավորումներ: Գործնականում կիրառվում են լիզինգի տարբեր ձևեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը, սակայն լիզինգի հիմնական ձևերն են՝ գործառնական լիզինգը և ֆինանսական լիզինգը: Ընդ որում, վարկերի այս ենթակատեգորիային է դասվում միայն ֆինանսական լիզինգը, որն իր բնույթով բավականին մոտ է վարկին:

Ֆինանսական լիզինգը (վարձակալությունը) պայմանագիր է, որի համաձայն վարձատուն, որպես ակտիվի իրավական սեփականատեր, վարձակալին է փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Այսպիսով՝ վարձակալը դառնում է տնտեսական իմաստով ակտիվի սեփականատերը: Ֆինանսական լիզինգը, ըստ էության, հիմնական միջոցների (հիմնականում՝ մեքենաներ և սարքավորումներ) ձեռքբերումը ֆինանսավորելու այլընտրանքային մեթոդ է: Այն երկարաժամկետ համաձայնագիր է վարձատուի և վարձակալի միջև, ըստ որի՝ վարձատուն ձեռք է բերում և վարձակալին տրամադրում համապատասխան մեքենաներ կամ սարքավորումներ, իսկ վարձակալը պարտավորվում է համաձայնագրի գործողության ընթացքում պարբերաբար

[19] *Սվոփի՝ որպես ֆինանսական ածանցյալ գործիքի նկարագիրը տրված է «Ֆինանսական ածանցյալներ և աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոններ» բաժնի 3.8.1. կետում:*

վճարել այնպիսի վարձավճար, որով հնարավոր կլինի ծածկել վարձատուի բոլոր ծախսերը, այդ թվում՝ սարքավորման լրիվ արժեքը, լրացուցիչ ծախսերը և տոկոսները (եկամուտները)։ Ֆինանսական լիզինգի դեպքում համարվում է, որ վարձատուն վարձակալին տրամադրում է վարկ, որով վարձակալը ձեռք է բերում որոշակի ակտիվ (մեքենաներ կամ սարքավորումներ)։ Ուստի, վարձակալված ակտիվն արտացոլվում է ոչ թե վարձատուի, այլ վարձակալի հաշվեկշռում, իսկ համապատասխան վարկն արտացոլվում է որպես վարձատուի ակտիվ և վարձակալի պարտավորություն։ Ֆինանսական լիզինգի գծով վճարները դիտարկվում են ոչ թե որպես ակտիվի վարձավճարներ, այլ որպես տոկոսավճարներ և հիմնական մայր գումարի մարում՝ պայմանական վարկի գծով։

Ֆինանսական լիզինգի առանձնահատկություններն են՝ լիզինգի պայմանագրի՝ համեմատաբար երկար տևողություն, որը մոտավորապես հավասար է ակտիվի (մեքենայի կամ սարքավորման) ծառայության ժամկետին, վարձակալության պայմանագրի ժամկետի վերջում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին, որը վճարում է մնացորդային արժեքը կամ վերադարձնում ակտիվը վարձատուին։

Ֆինանսական լիզինգի հիմնական առանձնահատկությունն է նաև այն, որ համաձայնագրի գործողության ընթացքում տվյալ ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները ակտիվի իրավական սեփականատիրոջից (լիզինգատու) փոխանցվում են ակտիվի օգտագործողին (լիզինգառու)։ Սա նշանակում է, որ փաստորեն սեփականատիրոջ փոփոխություն է տեղի ունեցել, իսկ վարձատուն իր սեփականության փոխարեն ձեռք է բերել ֆինանսական պահանջ վարձակալի նկատմամբ։ Այդ իսկ պատճառով էլ ֆինանսական լիզինգը վիճակագրորեն դասակարգվում է որպես վարկ։

3.5.5. Ֆակտորինգ

Ֆակտորինգը տնտեսական միավորների միջև ապրանքների և ծառայությունների իրացման ժամանակ առևտրային վարկի պայմաններով առաջացած պարտավորությունների (վճարային փաստաթղթերի) պահանջատիրոջ իրավունքների ստանձնումն է ֆինանսական կազմակերպության (ֆակտորի) կողմից, որը զուգակցվում է նաև հաշվապահական, տեղեկատվական, ապահովագրական և այլ ծառայությունների մատուցմամբ։ Ֆակտորինգային գործառնության մասնակիցներ են ֆակտորը, ֆակտորի հաճախորդը՝ մատակարարը (սկզբնական վարկատուն) և վճարողը (պարտապանը)։ Մատակարարը (ֆակտորի հաճախորդը) ֆակտորին է փոխանցում իր հաճախորդների նկատմամբ ունեցած պահանջատիրական իրավունքը՝ դրանց իրավաբանական զիջման ճանապարհով վճարումներ ստանալու համար։

Ֆակտորինգի առարկա կարող են լինել ինչպես դրամական պահանջները, որոնց վճարման ժամկետն արդեն լրացել է (գոյություն ունեցող պահանջ), այնպես էլ ապագայում դրամական միջոցներ ստանալու իրավունքը (ապագա պահանջ)։

Ֆակտորինգային պայմանագրեր կարող են կնքել բանկերը և վարկային կազմակերպությունները, ինչպես նաև այդ տիպի գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպությունները։

Ֆակտորինգային գործառնությունը կարող է միաժամանակ ընդգրկել հետևյալ պայմանները.

- ֆակտորի կողմից լրիվ պարտավորությունների կամ դրանց մի մասի դիմաց նախնական վճարման ձևով մատակարարին ֆակտորինգային վարկի տրամադրում՝ նրանից այն հետ պահանջելու իրավունքով,
- մատակարարի վարկային ռիսկի ընդունում՝ առանց գումարը հետ պահանջելու իրավունքի՝ տրամադրելով նրան նախնական վճար, որը փոխհատուցվում է ստանձնած պարտավորությունների դիմաց վճարային փաստաթղթերով պարտապանից մուտք եղած գումարների հաշվին,

- մատակարարի վարկային ռիսկի ընդունումը, երբ ֆակտորը նախնական վճարում չի կատարում, սակայն ստանձնում է վճարումները լրիվ ծավալով և որոշակի ժամկետում կատարելու պարտավորություն,
- ֆակտորինգային վարկի կառավարում՝ պարտավորությունների ինկասացիայի ձևով,
- ֆակտորինգային պայմանագրի գործողության ժամկետում մատակարարի բոլոր գործարքների կամ դրանց մի մասի հաշվապահական և իրացման հաշվառում:

Փաստորեն ֆակտորինգը վարկի տարատեսակ է, ըստ որի՝ մասնագիտացված կազմակերպությունները ձեռք են բերում մատակարարի դեբիտորական պարտքերը և ինքնուրույն գանձում են պարտապանից:

3.6 Բաժնային գործիքներ և ներդրումային ֆոնդերի փայեր կամ բաժնետոմսեր

Բաժնային գործիքները ֆինանսական գործիքներ են, որոնք ներկայացնում են կամ հավաստում են դրանք տնօրինողների սեփականության իրավունքները՝ ձեռնարկությունների կամ կազմակերպությունների (այդ թվում՝ ֆինանսական) նկատմամբ: Բաժնային գործիքները ընդգրկում են բոլոր այն գործիքները, որոնք հաստատում են (բոլոր կրեդիտորների պահանջները բավարարելուց հետո) ձեռնարկությունների (ընկերությունների, կորպորացիաների) մնացորդային արժեքի նկատմամբ դրանց տնօրինողների պահանջները: Այս ֆինանսական ակտիվները, որպես կանոն, տնօրինողին իրավունք են տալիս ձեռնարկությունների կամ կազմակերպությունների շահույթում ունենալ մասնաբաժին (փայաբաժին) և լուծարման դեպքում բաշխել սեփական միջոցները: Բաժնային գործիքների սեփականության իրավունքը, որպես կանոն, հաստատվում է բաժնետոմսերով, փայամասնակցությամբ և նմանատիպ այլ գործիքներով: Այն ընդգրկում է նաև արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ապահովում են լուծարման ենթակա ձեռնարկության մնացորդային արժեքում մասնակցություն:

Բաժնային գործիքների գծով ստացվող եկամուտները շահաբաժիններն (դիվիդենդներն) են: Բաժնային գործիքները հիմնականում չեն երաշխավորում սեփականության եկամտի նախապես որոշված գումարներ, այնուհանդերձ, արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինները սահմանված են նախապես: Բաժնային գործիքների տեսակներն են՝

- սովորական բաժնետոմսեր,
- արտոնյալ բաժնետոմսեր,
- փայամասնակցություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում:

Դրամավարկային վիճակագրության տեսանկյունից, ֆինանսական կազմակերպությունների կապիտալը բաժանվում է հետևյալ առանձին խմբերի.

- Սեփականատերերի կողմից ներդրված միջոցներն ընդգրկում են բաժնետոմսերի կամ կազմակերպությունների սեփականության այլ ձևերի սկզբնական և հետագա թողարկումների ընդհանուր գումարը (կանոնադրական կապիտալ):
- Չբաշխված շահույթն ընդգրկում է նախորդ տարիների առանց հարկերի ամբողջ շահույթը, որը չի բաշխվել բաժնետերերին կամ նախատեսված է որպես ընդհանուր կամ հատուկ պահուստներ:
- Ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքը ընթացիկ շահույթի/վնասի կուտակումն է ֆինանսական տարվա սկզբից:
- Ընդհանուր կամ հատուկ պահուստները ֆինանսական կազմակերպու-

թյունների կողմից չբաշխված շահույթից միջոցների առանձնացումն է՝ հատուկ նպատակներով:

- Վերագնահատման պահուստները հիմնական միջոցների, արտարժույթի, արժեթղթերի, թանկարժեք մետաղների շուկայական արժեքի փոփոխության հետևանքով բանկի չիրացված շահույթն (վնասը) է:

Ներդրումային ֆոնդերի փայերը կամ բաժնետոմսերը՝ որպես այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումների տեսակ, հատուկ դեր են խաղում ֆինանսական միջնորդությունում, հետևաբար, դրանք դիտարկվում են առանձին: Ներդրումային ֆոնդերը կոլեկտիվ ներդրումային միավորներ են, որոնց միջոցով ներդրողների միջոցները միավորվում են՝ ֆինանսական և/կամ ոչ ֆինանսական ակտիվներում ներդրումներ կատարելու նպատակով: Ներդրումային ֆոնդերի փայերը կամ բաժնետոմսերը թողարկվում են բոլոր տեսակի ներդրումային ֆոնդերի կողմից, ներառյալ դրամական և ոչ դրամական շուկայի ֆոնդերի կողմից[20]:

Դրամական շուկայի ֆոնդերի փայերը կամ բաժնետոմսերը բնույթով շատ մոտ են ավանդներին և ընդգրկվում են փողի ագրեգատներում: Ելնելով դրամավարկային վիճակագրության նպատակներից՝ դրամական շուկայի ֆոնդերի փայերը կամ բաժնետոմսերը պետք է առանձին հաշվառվեն հաշվեկշռի ակտիվներում և պարտավորություններում: Ոչ դրամական շուկայի ֆոնդերի փայերը կամ բաժնետոմսերը փոխանցելի չեն և, որպես կանոն, չեն համարվում ավանդներին բնույթով մոտ գործիքներ:

3.7 Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաներ

Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաները դիտարկվում են առանձին՝ հաշվի առնելով դրանց առանձնահատուկ բնույթը և արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում և մակրոտնտեսական վիճակագրությունում: Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաների գծով գործառնությունները ներառում են ապահովադրի (շահառուի) կողմից կատարված կանխավճարները, որոնք հետագայում որոշակի վճարումներ ստանալու իրավունք են տալիս՝ կախված պայմանական իրադարձությունից:

Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաները սովորաբար իրականացվում են ֆինանսական կազմակերպությունների միջնորդությամբ: Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված երաշխիքային սխեմաներում առանձնացվում են պահուստների հետևյալ 5 տեսակները՝

1. Ոչ կյանքի ապահովագրության գծով տեխնիկական պահուստներ,
2. Կյանքի ապահովագրություն և անուիտետների վճարման ենթակա գումարներ,
3. Կենսաթոշակային և ոչ կենսաթոշակային վճարման ենթակա գումարներ,
4. Կենսաթոշակային ֆոնդերի պահանջները կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ,
5. Ստանդարտացված երաշխիքների գծով պահանջների կարգավորման պահուստներ:

Այս պահուստները և վճարման ենթակա գումարները (բացի կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ կենսաթոշակային ֆոնդերի պահանջներից)

[20] *Դրամական և ոչ դրամական շուկայի ֆոնդերի նկարագիրը մանրամասն տրված է «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածներ» բաժնում:*

իրենցից ներկայացնում են մի կողմից՝ ապահովագրողի, կենսաթոշակային ֆոնդի և ստանդարտացված երաշխիք թողարկողի պարտավորությունը, իսկ մյուս կողմից՝ ապահովադրի կամ շահառուի համապատասխան ակտիվը: Ֆինանսական կազմակերպությունների հաշվեկշռում որպես ակտիվ կարող են արտացոլվել միայն ոչ կյանքի ապահովագրության տեխնիկական պահուստների գծով պահանջները, կենսաթոշակային ֆոնդերի պահանջները կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ և ստանդարտացված երաշխիքների գծով կարգավորման պահուստներին առնչվող պահանջները, իսկ որպես պարտավորություն կարող են արտացոլվել միայն կյանքի ապահովագրությունը և անուիտետների վճարման ենթակա գումարները և կենսաթոշակային վճարման ենթակա գումարները, որոնց շահառուները և ապահովադիրները տնային տնտեսություններն են:

3.7.1. Ոչ կյանքի ապահովագրության գծով տեխնիկական պահուստներ

Ոչ կյանքի ապահովագրությունը ապահովադիրներին տրամադրում է հատուցում պատահարների, հրդեհի, գույքի կորստի, առողջության հետ կապված ծախսերի և այլ ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած կորուստները և վնասները ծածկելու համար: Ոչ կյանքի ապահովագրության գծով տեխնիկական պահուստներն ընդգրկում են զուտ ոչ կյանքի ապահովագրության գծով ապահովագրավճարների կանխավճարները և ոչ կյանքի ապահովագրության գծով չկարգավորված պահանջների պահուստները: Ընդ որում, այս պահուստները ձևավորվում են ինչպես ուղղակի ապահովագրության, այնպես էլ վերաապահովագրության գծով ընդունված ռիսկերի համար:

Զուտ ոչ կյանքի ապահովագրության ապահովագրավճարների գծով կանխավճարներ: Ապահովագրական ծածկույթը (ապահովագրական պայմանագրի) ձեռք բերողը համապատասխան ծառայության դիմաց ապահովագրողին վճարում է ապահովագրավճար: Որպես կանոն, հաճախորդը ապահովագրավճարի գծով վճարումը կատարում է ապահովագրական ծածկույթի ժամանակաշրջանի սկզբում: Ոչ կյանքի ապահովագրության ապահովագրավճարների գծով կանխավճարը այն կատեգորիաներից է, որի համար ֆինանսական կազմակերպությունների հաշվեկշռում առկա են դիրքեր և՛ ակտիվներում, և՛ պարտավորություններում:

Ոչ կյանքի ապահովագրության գծով չկարգավորված պահանջների պահուստները առանձնացված միջոցներ են, որոնք ապահովագրական ընկերությունների կողմից հատկացվում են՝ ծածկելու այն պահանջների գծով սպասվող վճարումները, որոնք դեռևս կարգավորված չեն կամ կարող են վիճարկվել: Այս պահուստներում ընդգրկվում են ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստը և տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստը: Նշված պահանջների գծով պահուստները շահառուների ակտիվները և ապահովագրական ընկերությունների պարտավորություններն են:

Վերաապահովագրությունը ապահովագրություն է, որի դեպքում ապահովագրության երկու կողմերը ապահովագրական ծառայություններ մատուցողներ են: Վերաապահովագրությունը թույլ է տալիս ապահովագրողի կողմից ապահովադիրների նկատմամբ ունեցած ամբողջ պարտավորությունների կամ դրանց մի մասի կատարման հետ կապված ռիսկերը ապահովագրել այլ ապահովագրողի մոտ, այսինքն՝ ապահովագրական ռիսկը փոխանցել մեկ ապահովագրողից մյուսին: Ընդ որում, որպես ապահովագրողներ հանդես են գալիս ինչպես ուղղակի ապահովագրողները, այնպես էլ վերաապահովագրողները: Վերաապահովագրական տեխնիկական պահուստները դասակարգվում են որպես ոչ կյանքի ապահովագրության գծով տեխնիկական պահուստներ:

3.7.2. Կյանքի ապահովագրություն և անուիտետների վճարման ենթակա գումարներ

Կյանքի ապահովագրությունը և անուիտետների վճարման ենթակա գումարները ապահովադիրների ֆինանսական պահանջներն են այն ինստիտուցիոնալ միավորների նկատմամբ, որոնք առաջարկում են կյանքի ապահովագրություն կամ տրամադրում են անուիտետներ: Այս կատեգորիան բաղկացած է կյանքի ապահովագրական ընկերությունների և անուիտետներ տրամադրող ընկերությունների՝ վճարված ապահովագրավճարների, ինչպես նաև կյանքի ապահովագրության ապահովադիրների ու անուիտետների շահառուների նկատմամբ հաշվեգրված պարտավորությունների պահուստներից:

3.7.3. Կենսաթոշակային և ոչ կենսաթոշակային վճարման ենթակա գումարներ

Կենսաթոշակային վճարումները կիրառվում են աշխատողների որոշակի խմբերին կենսաթոշակ տրամադրելու համար: Կենսաթոշակային վճարումները ֆինանսական պահանջներ են, որոնք ինչպես ներկա, այնպես էլ ապագա կենսաթոշակառուները ներկայացնում են իրենց գործատուին կամ գործատուի կողմից ընտրված ֆոնդին՝ վճարելու կենսաթոշակները գործատուի և աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրին համապատասխան:

3.7.4. Կենսաթոշակային ֆոնդերի պահանջները կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ

Գործատուն կարող է երրորդ կողմի հետ պայմանագիր կնքել՝ իր աշխատակիցների կենսաթոշակային ֆոնդերի կառավարման նպատակով: Եթե գործատուն շարունակում է որոշել կենսաթոշակային սխեմաների պայմանները և պատասխանատվություն է կրում ցանկացած պակասուրդի ֆինանսավորման համար, ինչպես նաև պահպանում է իր իրավունքը ցանկացած ավելցուկային միջոցների նկատմամբ, ապա գործատուն բնութագրվում է որպես կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, իսկ գործատուի կառուցվածքում գործող կենսաթոշակային ֆոնդի կառավարմամբ զբաղվող միավորը՝ որպես կենսաթոշակային ֆոնդի ադմինիստրատոր: Եթե գործատուի և երրորդ կողմի միջև համաձայնությունն այնպիսին է, որ գործատուն վերը նշված պատասխանատվությունը, իրավունքը և ռիսկերը փոխանցում է երրորդ կողմին, ապա երրորդ կողմը դառնում է կենսաթոշակային ֆոնդի և՛ կառավարիչ, և՛ ադմինիստրատոր:

3.7.5. Ստանդարտացված երաշխիքների գծով պահանջների կարգավորման պահուստներ

Ստանդարտացված երաշխիքների գծով պահանջների կարգավորման պահուստները ստանդարտացված երաշխիքներ տնօրինողների ֆինանսական պահանջներն են այդ երաշխիքները տրամադրող ինստիտուցիոնալ միավորների նկատմամբ: Դրանք ներառում են տարբեր ֆինանսական գործիքների գծով երաշխիքներ, ինչպես, օրինակ, ավանդների, պարտքային արժեթղթերի, վարկերի և առևտրային վարկերի: Ստանդարտացված երաշխիքները թողարկվում են մեծ քանակությամբ, սովորաբար բավականին փոքր գումարներով: Այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ միավորը առաջարկում է ստանդարտացված երաշխիքներ, նա դրա դիմաց գանձում է վճար և ստանձնում է երաշխիքի գծով պահանջի կատարման պարտավորություններ: Նման պայմանագրերին մասնակցում են երեք կողմ՝ վարկառուն, վարկատուն և երաշխավորը: Երաշխավորի հետ պայմանագիր կարող են կնքել թե վարկառուն և թե վարկատուն՝ վարկառուի անվճարունակության դեպքում վարկատուի պարտքը մարելու նպատակով: Ստանդարտացված երաշխիքային սխեմաներով պահանջների բավարարող կամ վճարող կողմը երաշխավորն է, իսկ ստացող կողմը՝ վարկատուն, անկախ նրանից թե վճարը ում կողմից է կատարվել՝ վարկառուի, թե վարկատուի:

Ստանդարտացված երաշխիքների գծով պահանջների կարգավորման պահուստները բաղկացած են զուտ վճարների գծով կանխավճարներից և

ստանդարտացված երաշխիքների գծով չկարգավորված պահանջների պահուստներից: Ինչպես ոչ կյանքի ապահովագրության պահուստների դեպքում, ստանդարտացված երաշխիքների գծով պահանջների կարգավորման պահուստները ներառում են չվաստակած վճարները (պարգևավճարներ) և չկարգավորված պահանջները:

3.8 Ֆինանսական ածանցյալներ և աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոններ

3.8.1. Ֆինանսական ածանցյալ գործիքներ

Ֆինանսական ածանցյալները այնպիսի ֆինանսական գործիքներ են, որոնք կապված են որոշակի ակտիվների (այլ ֆինանսական գործիքների, ապրանքների) հետ, և որոնց միջոցով որոշ ֆինանսական ռիսկեր (տոկոսադրույքի ռիսկ, արտարժութային ռիսկ, բաժնետոմսերի և ապրանքների գների տատանումների հետ կապված ռիսկ, վարկային ռիսկ) կարող են գնվել և վաճառվել ֆինանսական շուկաներում ինքնուրույն՝ անկախ դրանց հիմքում ընկած ակտիվից:

Ֆինանսական ածանցյալները կիրառվում են մի շարք նպատակների համար, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, հեջավորման, շուկաների միջև արբիտրաժի և սպեկուլյատիվ գործարքների համար: Ֆինանսական ածանցյալների արժեքը կախված է իր հիմքում ընկած ակտիվի կամ գործիքի՝ բազիսային ակտիվի գնից: Բազիսային ակտիվի գինը կարող է կապված լինել ապրանքի, ֆինանսական ակտիվի, տոկոսադրույքի, փոխարժեքի, այլ ածանցյալ գործիքի, երկու գների միջև սփրեդի, ինչպես նաև ինդեքսի կամ գների զամբյուղի հետ:

Այսպիսով՝ ածանցյալ գործիքները դրանք տնօրինող սուբյեկտների համար կնքման պահին ֆինանսական պահանջ կամ պարտավորություն չեն: Այնուհանդերձ, ֆինանսական ածանցյալները կարող են շուկայում գնվել կամ վաճառվել, որի դեպքում դրանք շուկայական արժեք կունենան՝ կապված դրանց հիմքում ընկած ֆինանսական ակտիվի կամ ապրանքի շուկայական գնի փոփոխության հետ: Այսինքն՝ տվյալ ածանցյալ գործիքի գինը «ածանցվում» է այն ակտիվի գնից, որի հետ այն կապված է (բազիսային ակտիվ): Այն դեպքում, երբ ֆինանսական ածանցյալի հիմքում ընկած ակտիվի պայմանագրային գինը նախընտրելի է, քան ընթացիկ շուկայական գինը, ածանցյալը կունենա դրական շուկայական արժեք: Բնականաբար, եթե ֆինանսական ածանցյալ գործիքը շուկայական արժեք ունենա, պետք է հաշվեկշռում հաշվառվի որպես ֆինանսական ակտիվ (համապատասխան օրինակները ներկայացված են հավելված 3.1-ում):

ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից, ածանցյալ գործիքների հաշվեկշռային հաշվառում իրականացնելու նպատակահարմարությունը կապված է ֆինանսական շուկայի զարգացումների հետ: Այս գործիքներով իրականացված գործառնությունների հաշվառումն իրականացվում է ֆինանսական կազմակերպությունների հաշվապահական հաշվեկշիռներում: Ընդ որում, հաշվեկշռում արտացոլվում է ածանցյալ գործիքի իրական արժեքը, այսինքն՝ ածանցյալի հիմքում ընկած ակտիվի (ֆինանսական կամ ապրանքային) պայմանագրային ու շուկայական գների տարբերության և պայմանագրային ծավալի արտադրյալը: Կախված պայմանագրային ու շուկայական գների տարբերությունից (դրական կամ բացասական)՝ ածանցյալ գործիքների գծով համապատասխան դիրքերը կարող են արտացոլվել ինչպես ակտիվային, այնպես էլ պասիվային հաշիվներում:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական ածանցյալները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի՝ օպցիոններ և ֆորվարդային տիպի պայմանագրերի:

Ֆորվարդային տիպի պայմանագրեր՝ Ֆորվարդային տիպի պայմանագրերով երկու կողմեր պարտավորվում են որոշակի ժամանակահատված հետո, որոշակի գնով և որոշակի քանակությամբ որևէ ակտիվ (ֆինանսական կամ

ապրանքային) փոխանակել: Ֆորվարդային պայմանագրի կատարումը պարտադիր է, բայց միայն պայմանագրում նշված ժամանակահատվածը լրանալու դեպքում: Պայմանագրի յուրաքանչյուր կողմ կատարման պահին ունի և՛ պահանջ, և՛ պարտավորություն, և գործիքի զուտ արժեքը (պահանջների և պարտավորությունների տարբերությունը) կնքման (կատարման) պահին զրո է:

Ֆորվարդները գնվում և վաճառվում են արտաբորսայական շուկաներում՝ դիլերների համակարգչային ցանցերի միջոցով կամ հեռախոսով: Մինչդեռ, ֆյուչերսները, որոնք ֆորվարդային տիպի պայմանագրեր են, գնվում և վաճառվում են կարգավորվող շուկաներում՝ բորսաներում: Ընդ որում, ֆյուչերսային պայմանագրերը ունեն գործարքների կնքման ստանդարտ պայմաններ, որոնք սահմանվում են ֆյուչերսային բորսաների կողմից, իսկ ֆորվարդային պայմանագրերը ստանդարտացված չեն:

Օպցիոն՝ Օպցիոնը որոշակի ակտիվ գնելու կամ վաճառելու իրավունք (բայց ոչ՝ պարտավորություն) է տալիս այն ձեռք բերողին: Օպցիոնի դեպքում օպցիոնի գնորդը որոշակի պարգևավճարի դիմաց իրավունք է ձեռք բերում գնել (վաճառել) որոշակի բազիսային ակտիվ՝ պայմանագրում նշված ժամկետում և գնով, իսկ օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում վաճառել (գնել) այդ ակտիվը: Ընդ որում, օպցիոններ ձեռք բերողը կարող է նաև չօգտվել իր իրավունքից, սակայն եթե նա օգտագործում է այդ իրավունքը, ապա օպցիոն վաճառողը պարտավորվում է գնել կամ վաճառել բազիսային ակտիվը:

Այսպիսով՝ օպցիոն գնորդը որոշակի գումար է վճարում օպցիոն վաճառողին և դրա դիմաց ձեռք է բերում ինչ-որ ժամանակահատվածի ընթացքում, նախապես սահմանված գնով որոշակի ակտիվ վաճառելու կամ գնելու իրավունք (բայց ոչ՝ պարտավորություն): Ընդ որում, օպցիոնի գնորդը կարող է վաճառել օպցիոնի պայմանագիրը, այսինքն՝ օպցիոնով իրեն վաճառված իրավունքը, այդ դեպքում արդեն օպցիոնը շուկայական արժեք է ստանում: Օպցիոնի արժեքը պայմանագրի կնքման պահին օպցիոնի գծով վճարված պարգևավճարն է: Օպցիոնների վիճակագրական հաշվառումը պետք է կատարվի նույն սկզբունքով, ինչ որ ֆորվարդներինը:

Սվոփ՝ Սվոփը ֆորվարդ տիպի պայմանագիր է, որի դեպքում կողմերը ըստ նախապես համաձայնեցված պայմանների փոխանակում են դրամական հոսքեր՝ հիմնվելով պայմանագրի հիմքում ընկած ակտիվի՝ բազիսային ակտիվի գնի վրա: Սվոփի ամենատարածված տեսակներն են՝ տոկոսադրույքի սվոփը և արժութային սվոփը[21]:

Հարկ է նշել, որ ածանցյալները կարող են կապված լինել ոչ միայն ֆինանսական ակտիվների, այլև որոշակի ապրանքների հետ: Ապրանքային ածանցյալների իրացվելիությունը ֆինանսականների համեմատ ավելի ցածր է, սակայն դա չի բացառում վերջիններիս առք ու վաճառքի հնարավորությունը: Ասվածից կարելի է եզրակացնել, որ ապրանքային ածանցյալ գործիքների վիճակագրական հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ ֆինանսական ածանցյալներինը:

Անկախ ածանցյալների շուկայի զարգացման աստիճանից, դրանց վիճակագրական հաշվառումը մեծ նշանակություն ունի բանկերի հնարավոր ռիսկերը, դրամավարկային քաղաքականության վրա ունեցած ազդեցությունը գնահատելու տեսանկյունից: Ածանցյալ գործիքները ցույց են տալիս բանկի՝ ապագայում հնարավոր պահանջները կամ պարտավորությունները, որոնք կարող են էապես փոխել բանկի ֆինանսական վիճակը: Ուստի անհրաժեշտ է համապատասխան ուշադրություն դարձնել դրանց զարգացման, դասակարգման, հաշվառման և վիճակագրական արտացոլման խնդիրներին:

---

[21] *Այս բաժնում ներկայացվող սվոփ գործիքը որոշակիորեն տարբերվում է սույն բաժնի 3.5.3 կետում ներկայացված սվոփ գործիքից, որը կիրառվում է հիմնականում ՀՀ ԿԲ-ի կողմից:*

3.8.2 Աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոններ

Աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոնները ձեռնարկության կամ կազմակերպության բաժնետոմսերի գնման իրավունքի տրամադրումն է իրենց աշխատակիցներին: Բաժնետոմսերի օպցիոնները ծառայում են որպես կազմակերպության աշխատակիցների պարգևատրման ձև և խրախուսման միջոց, որպեսզի նրանք իրենց պարտականությունները կատարեն ի նպաստ ընկերության երկարաժամկետ զարգացմանը՝ ելնելով ընկերության և բաժնետերերի լավագույն շահերից: Շատ կազմակերպությունների համար աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոնները կոչվում են ղեկավարների բաժնետոմսերի օպցիոններ, քանի որ դրանք տրամադրվում են միայն ավագ ղեկավար անձնակազմին: Աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոնը որոշակի ամսաթվին (տրամադրման ամսաթիվ) կնքված պայմանագիր է, որի համաձայն աշխատակիցը կարող է ձեռք բերել գործատուի բաժնետոմսերի որոշակի քանակ՝ նախապես սահմանված գնով (կատարման գին) և նախատեսված ամսաթվին (իրավունքի իրացման ամսաթիվ)[22] կամ այդ ամսաթվին անմիջապես հաջորդող որոշակի ժամանակահատվածի ընթացքում (իրականացման ժամանակահատված): Ընդ որում, օպցիոնը չի կարող իրացվել բաժնետոմսերի գնման իրավունքի փոխանցման ժամկետից շուտ կամ իրականացման ժամանակահատվածի ավարտից հետո:Այսպիսով՝ աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոնը թույլ է տալիս աշխատակցին որոշակի ժամանակ անց, նախապես սահմանված գնով ընկերությունից գնել բաժնետոմսեր և դրանք իրացնելով կապիտալի շուկայում՝ ստանալ որոշակի եկամուտ:

3.9 Ստացման կամ վճարման ենթական հաշիվներ

Ստացման կամ վճարման ենթակա հաշիվներն ընդգրկում են առևտրային վարկերը, կանխավճարները և այլ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը: Առևտրային վարկերը ապրանքների և ծառայությունների մատակարարների կողմից իրենց հաճախորդներին, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների գնորդներին (ձեռնարկություններին, կառավարությանը, ՏՏՍՈԱԿ-ներին, տնային տնտեսություններին և ոչ ռեզիդենտներին) ուղղակիորեն տրամադրված առևտրային վարկերն են, իսկ կանխավճարները՝ որոշակի աշխատանքների կատարման կամ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացված նախնական վճարները: Ցանկացած դեպքում, երբ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կանխիկով կամ այլ ֆինանսական գործիքով անմիջապես վճարում չի իրականացվում, առաջանում է առևտրային վարկ՝ տրամադրված վաճառողի կողմից գնորդին: Խոսքը չի վերաբերում առևտրային վարկը ֆինանսավորելու համար ձեռք բերված վարկերին, քանի որ այդ վարկերը դասակարգվում են վերը սահմանված «վարկեր» ենթակատեգորիայում, իսկ այս ենթակատեգորիայում ներառվում են միայն ուղղակի առևտրային վարկերն ու կանխավճարները:

Ֆինանսական կազմակերպությունների համար առևտրային վարկերի գծով դեբիտորական պարտքերը սովորաբար կապված են նրանց կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունների վաճառքի հետ, իսկ առևտրային վարկերի գծով կրեդիտորական պարտքերն առաջանում են այլ ինստիտուցիոնալ միավորներից ապրանքների և ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցված ֆինանսական ծառայությունների գնման արդյունքում:

Այս ենթակատեգորիայում ընդգրկվում են նաև զանազան պատճառներով

[22] *Իրավունքի փոխանցման ամսաթիվը այն ամսաթիվն է, երբ բաժնետոմսերի ձեռքբերման իրավունքը կարող է իրացվել: Այդ ժամկետի լրանալուն պես, աշխատակցին թույլատրվում է իրացնել օպցիոնը և գնել ընկերության բաժնետոմսերը մինչև իրականացման ժամանակահատվածի ավարտը:*

առաջացած այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հարկային պարտավորությունները, շահութաբաժինները, աշխատավարձերը և ստացման կամ վճարման ենթակա այլ գումարները:

3.10 Պայմանական գործիքների վիճակագրական արտացոլումը

Գոյություն ունեն ֆինանսական գործարքների տեսակներ, որոնցում նախատեսվող ֆինանսական պահանջի իրականացումը կախված է որոշակի պայմանից (պայմաններից): Այս գործարքները սովորաբար փոխանցելի արժեք չեն ունենում:

Չնայած պայմանական գործիքները դրամավարկային վիճակագրությունում ուղղակի չեն ընդգրկվում, սակայն դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվության հավաքագրումը կարող է կարևոր լինել երկրի կամ տվյալ համակարգի ֆինանսական դիրքը և փոխհարաբերությունները վերլուծելու համար, քանի որ նման գործիքները ապագայում կարող են տարբեր ակտիվների ձեռքբերման և պարտավորությունների առաջացման պատճառ դառնալ և էական ազդեցություն ունենալ տվյալ սուբյեկտի ֆինանսական հոսքերի և վիճակի վրա: Որոշ դեպքերում երկրի տնտեսական քաղաքականության վերլուծության համար կարող է տնտեսական միավորների՝ պայմանական գործիքներով արտահայտված հնարավոր պարտավորությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության պահանջ առաջանալ: Անհրաժեշտ է նշել, որ նման վիճակագրության հավաքագրումը ավելի նպատակահարմար է իրականացնել ըստ երաշխիք տրամադրողների, ի տարբերություն մյուս դեպքերի, երբ հավաքագրումը և ամփոփումը իրականացվում են ըստ գործիքների:

Պայմանական ֆինանսական գործիքների թվին են դասվում երաշխիքները, ֆինանսական պարտավորագրերը, ակրեդիտիվները, ֆինանսական գրավները, վարկային գծերը և այլն: Այս բոլոր գործիքների գծով պահանջները կամ պարտավորությունները կծագեն միայն որոշակի պայմանի առկայության դեպքում: Այսպես՝ բանկը երաշխիքի գծով վճարում կիրականացնի միայն այն դեպքում, եթե այն կողմը, որի համար երաշխիք է տրված, չկարողանա մարել իր պարտավորությունները: Ակրեդիտիվի գծով վճարումներ կիրականացվեն պայմանագրով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում: Գրավադրված ֆինանսական ակտիվները բանկի սեփական ակտիվը կարող են դառնալ, եթե այդ ակտիվները վաճառող կողմը չի կարողանում դրանք հետ գնել: Վարկային գիծը ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն է դառնում միայն դրա օգտագործման դեպքում և օգտագործված մասի չափով:

Հարկ է նշել, որ պայմանական գործիքների դասակարգումը հարաբերական է՝ կոնկրետ գործիքի բնույթից և տվյալ երկրում դրա օգտագործման առանձնահատկություններից կախված:

3.10.1. Երաշխավորություններ

Երաշխավորությունը տնտեսական միավորի՝ այլ սուբյեկտի ֆինանսական պարտավորությունը ստանձնելն է՝ այդ սուբյեկտի կողմից այն չմարվելու դեպքում: Երաշխավորությունը տրամադրող սուբյեկտի համար չի համարվում ֆինանսական պարտավորություն, քանի դեռ այն կողմը, որի օգտին երաշխավորություն է տրվել, չի դրսևորել տվյալ պարտավորությունը կատարելու անկարողություն: Հետևաբար, մինչև տվյալ պայմանի առկայությունը, երաշխավորագրերի հաշվառումն իրականացվում է արտահաշվեկշռում (հավելված 3.2.1.):

Երաշխավորություններ կարող են տրամադրել կենտրոնական բանկերը, կառավարությունները, ֆինանսական կազմակերպությունները և որոշ դեպքերում՝ նաև այլ կազմակերպություններ: Դրանք կարող են որոշակի կարևորություն ունենալ նաև այլ ֆինանսական գործիքների դասակարգման տեսանկյունից, օրինակ՝ կառավարության երաշխիքով արժեթղթերը կարող են այլ կերպ

դասակարգվել, քան այլ արժեթղթերը:

Դրամավարկային վիճակագրության տեսանկյունից, պարտավորությունները միշտ դասակարգվում են որպես այն ստանձնող հատվածի, այլ ոչ թե երաշխավորություն տվողի պարտավորություն, քանի դեռ երաշխավորություն տրամադրողը նախատեսված պայմաններում փաստացի վճարման պարտավորություն ձեռք չի բերել:

Կառավարության և այլ հատվածների փոխհարաբերությունները ճշգրիտ արտացոլելու համար երբեմն նպատակահարմար է կառավարության կողմից տրամադրված տվյալ երաշխիքը որպես պարտավորություն դիտարկել:

3.10.2. Ակրեդիտիվներ

Ակրեդիտիվը ստացված փաստաթղթերի դիմաց վճարում կատարելու պարտավորություն է: Փաստաթղթերի ստացումից հետո ակրեդիտիվով նախատեսված վճարվելիք գումարները բանկի պարտավորություններն են դառնում: Ակրեդիտիվները օգտագործվում են արտաքին առևտրային գործառնությունները ֆինանսավորելու նպատակով:

Ռեզիդենտ ձեռնարկությունները ապրանքներ ներմուծելիս (կամ արտահանելիս) ակրեդիտիվ են բացում իրենց սպասարկող ՀՀ ռեզիդենտ բանկերում: Վերջիններս, ակրեդիտիվի պայմանների համաձայն, պարտավորվում են առևտրային պայմանագրի գումարը վճարել (կամ վճարման պահանջ ներկայացնել) օտարերկրյա գործընկերոջ բանկին՝ ակրեդիտիվով նախատեսված առաքման և այլ փաստաթղթերի ստացման դեպքում: Այսպիսով՝ առաքման և այլ փաստաթղթերի ստացումը պայման է, որի դեպքում ռեզիդենտ բանկը պարտավորություն կամ պահանջ է ձեռք բերում օտարերկրյա բանկի նկատմամբ (տե՛ս հավելված 3.2.3):

3.10.3. Ֆինանսական պարտավորագրեր

Ֆինանսական պարտավորագրերը համաձայնագրեր են տնտեսական միավորների միջև, որոնցով սուբյեկտները պայմանավորվում են ապագայում իրականացվելիք որոշակի ֆինանսական գործարքների շուրջ: Սովորաբար պարտավորություններ ստանձնող կողմը պարտավորվում է որոշակի պայմանների կատարման դեպքում ֆինանսական միջոցներ տրամադրել մյուս կողմին: Ի տարբերություն երաշխավորագրերի, երբ որոշակի պայմանի դեպքում երաշխավորություն տրամադրողը ստանձնում է այլ սուբյեկտի պարտավորությունը, պարտավորագրերի դեպքում համաձայնագրում նշված պայմանների իրականացման պատասխանատվությունը կրում է պարտավորագիր տրամադրողը: Այն պարտավորագրերը, որոնք իրենց բնույթով ֆինանսական չեն, ֆինանսական գործիքներ չեն համարվում:

Պարտավորագրերը կարող են լինել ամենատարբեր ձևի և բնույթի: Այդ իսկ պատճառով շատ դժվար է առանձնացնել դրանցով սահմանվող իրավունքների և պարտականությունների գնահատման որևէ ընդհանուր միասնական մոտեցում: Չնայած պարտավորագրերը ֆինանսական ակտիվներ չեն համարվում, դրանց հիմնական տեսակների գնահատումը կարող է կարևոր լինել վերլուծություններ կատարելու և հնարավոր ակտիվներն ու պարտավորությունները գնահատելու համար: Ամենատարածված ֆինանսական պարտավորագրերը վարկային գծերն ու օվերդրաֆտներն են:

Վարկային գիծը և /կամ/ օվերդրաֆտը վարկառուին միջոցների մշտական առկայության երաշխիք է տալիս որոշակի գումարի սահմաններում և նախօրոք սահմանված ժամանակահատվածի ընթացքում: Այնուհանդերձ, այդ միջոցները ֆինանսական ակտիվ չեն համարվում մինչև վարկի փաստացի տրամադրումը (հավելված 3.2.2.):

3.10.4. Գրավադրված ֆինանսական ակտիվներ

Որոշակի ֆինանսական ակտիվի դիմաց վարկերի տրամադրման պրակտիկան բավականին տարածված է: Ընդ որում, գրավադրվող ակտիվի մնացորդային ժամկետայնությունը պետք է ավելի երկար լինի, քան վարկի տևողությունը: Որպես վարկի դիմաց գրավադրվող ֆինանսական ակտիվներ կարող են հանդես գալ արժեթղթերը, ավանդները, կանխիկ արժույթը, բաժնետոմսերը և այլն: Վարկի մարման հետ միաժամանակ ֆինանսական ակտիվները հետ են վերադարձվում դրանց տիրոջը: Այսպիսով՝ գրավադրված ֆինանսական ակտիվների շուկայական արժեքի փոփոխության հետ կապված ռիսկերը, գրավադրված վարկի համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում, կրում է դրանց սկզբնական սեփականատերը (վարկառուն):

Հաշվի առնելով, որ վարկատու բանկը գրավադրված ֆինանսական ակտիվների սեփականատերը չէ, քանի դեռ վարկառուն չի հաստատել վարկի մարման անկարողությունը, վերջիններս տվյալ բանկի հաշվեկշռում չեն կարող հաշվառվել: Փոխարենը ֆինանսական ակտիվներում հաշվառվում են տրված վարկերը:

Պայմանական գործիքներին բնույթով շատ նման են նաև դուրս գրված վարկերը, տոկոսները և դեբիտորական պարտքերը: Այս պահանջները, չնայած բանկի ակտիվներ այլևս չեն համարվում, կարող են եկամուտ ապահովել, եթե վարկառուն վերադարձնի արդեն անհուսալի ճանաչված պարտքը:

4. Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները

Փողը կարևոր դեր է խաղում տնտեսության մեջ և իրականացվող դրամավարկային քաղաքականության՝ տնտեսական ակտիվության և գնաճի փոխանցման մեխանիզմի կարևոր բաղադրիչն է: Հետևաբար, փողի ագրեգատները մշտադիտարկվում են Կենտրոնական բանկի կողմից քաղաքականության տոկոսադրույքի (վերաֆինանսավորման տոկոսադրույքի) վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Ուստի, կարևոր է տալ «փողի» սահմանումը, որի դեպքում պետք է հաշվի առնել տվյալ տնտեսության առանձնահատկությունները, ֆինանսական համակարգի կառուցվածքը, ֆինանսական շուկաների զարգացվածությունը և այլ առանձնահատկություններ:

Այսպիսով՝ տնտեսությունում շրջանառվող «փողը» գործնականում քանակապես գնահատելու նպատակով անհրաժեշտ է սահմանել փողի ագրեգատների հետևյալ երեք բնութագրերը.

- ֆինանսական գործիքների տեսակները, որոնք պետք է ընդգրկվեն «փողի» սահմանման մեջ կամ փողի ագրեգատների կազմում,
- տնտեսությունում շրջանառվող «փողը» թողարկող կազմակերպությունների շրջանակը, այսինքն՝ տնտեսության այն ինստիտուցիոնալ հատվածները, որոնք տնտեսության փող թողարկող հատվածներ են,
- տնտեսության «փողը» տնօրինող կամ պահող հատվածները, ինչպես նաև «փողի» նկատմամբ չեզոք հատվածները, որոնք չեն հանդիսանում փող թողարկող կամ փող պահող:

Այս կամ այն ֆինանսական գործիքի ընդգրկումը փողի ագրեգատների կազմում կամ, այլ կերպ ասած, տնտեսությունում շրջանառվող «փողի» սահմանումը սերտորեն առնչվում է տնտեսական գործընթացներում փողի կատարած գործառույթների հետ: Կարելի է առանձնացնել փողի հետևյալ չորս հիմնական գործառույթները.

- *վճարման միջոց*՝ փողը որպես ապրանքների, ծառայությունների, ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման միջոց,

- *արժեքի պահպանման կամ հարստության կուտակման միջոց*՝ փողը որպես հարստության և խնայողությունների կուտակման միջոց,
- *հաշվառման կամ արժեքի չափի միավոր*՝ որպես ապրանքների, ծառայությունների, ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների արժեքների գնահատման կամ գների որոշման չափանիշ, փողը հնարավորություն է տալիս համեմատել դրանց արժեքները, ինչպես նաև ֆինանսական հաշիվներում արտացոլել և համեմատել տարբեր բնույթ ունեցող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները,
- *ժամանակի տարբեր պահերին կատարված վճարումների չափանիշ*՝ ֆինանսական պայմանագրերի ներկա և ապագա արժեքների գնահատման ու համեմատման միջոց:

Այսպիսով՝ տնտեսության «փողը», որը կարող է ընդունել ամենատարբեր ֆինանսական ակտիվների ձև, տնտեսական միավորների կողմից պահվում կամ տնօրինվում է որպես վճարման, արժեքի պահպանման կամ հարստության կուտակման միջոց օգտագործվելու հնարավորության շնորհիվ: Տվյալ ֆինանսական գործիքը փողի ագրեգատներում ընդգրկելու համար նախ՝ անհրաժեշտ է դիտարկել իրացվելիությունը, այնուհետև՝ արժեքի պահպանման հնարավորությունը: Ըստ բնույթի, բոլոր ֆինանսական ակտիվները որոշակի արժեք ունեն և արժեքի պահպանման կամ հարստության կուտակման գործառույթ են կատարում, սակայն տարբերվում են միմյանցից իրացվելիության աստիճանով: Այս առումով, փողի տարբեր ագրեգատները չեն կարող ընդգրկել բոլոր ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական գործիքի իրացվելիության աստիճանը որոշվում է՝ կախված դրա հետևյալ բնութագրերից.

- օրինական վճարամիջոց կամ համընդհանուր կիրառություն տնտեսությունում,
- հաստատագրված անվանական արժեք,
- փոխանցելիություն, այսինքն՝ ցանկացած պահի տվյալ ֆինանսական ակտիվով այլ անձի վճարում կատարելու կամ փոխանցելու հնարավորություն,
- գործառնության ծախսեր, այսինքն՝ ֆինանսական կամ ժամանակային ծախսեր, որոնք պահանջվում են տվյալ ակտիվը որպես վճարամիջոց օգտագործելու համար,
- բաժանելիություն, այսինքն՝ տվյալ ակտիվի բաժանելիության աստիճանը՝ հնարավորինս փոքր ծավալի վճարումներ իրականացնելու համար,
- ժամկետայնություն,
- եկամտաբերություն:

Ինչպես արդեն նշվել է, փողի ագրեգատների որոշման համար կարևորվում է նաև տնտեսության «փող թողարկողների» սահմանումը: Տնտեսության «փող թողարկողներ» են համարվում բոլոր այն ֆինանսական կազմակերպությունները, որոնց պարտավորություններն իրենցից ներկայացնում են «փող» հանդիսացող ֆինանսական գործիքներ: Այսպիսով՝ տնտեսության հատվածների տեսանկյունից, «փող թողարկողներ» են ֆինանսական հատվածի «ավանդային կազմակերպություններ» ենթահատվածում ընդգրկված սուբյեկտները՝ կենտրոնական բանկն ու այլ ավանդային կազմակերպությունները:

Եվ, վերջապես, փողի ագրեգատների որոշման համար անհրաժեշտ է սահմանել տնտեսության բոլոր այն սուբյեկտները, որոնք տվյալ տնտեսության «փող պահողները» կամ «տնօրինողներն» են: Որպես կանոն, տնտեսության «փող պահող» հատվածներ են համարվում բոլոր ռեզիդենտ հատվածները՝ բացի կենտրոնական կառավարությունից և ավանդային կազմակերպություններից: Այսպիսով՝ սովորաբար տնտեսության «փող պահողներն» են՝

- վերը սահմանված իրական հատվածը՝ ներառյալ ոչ ֆինանսական կորպո-

րացիաները, տնային տնտեսությունները և ՏՏՍՈԱԿ-ները,

- ֆինանսական հատվածի «ավանդային կազմակերպություններ» ենթահատվածից բացի, մյուս ենթահատվածները:

Ինստիտուցիոնալ միավորները, որոնք չեն պատկանում «փող թողարկող» կամ «փող պահող» հատվածներին, կոչվում են «փողի նկատմամբ չեզոք» հատվածներ: Վերջինիս մեջ ներառվում են կառավարությունը և ոչ ռեզիդենտները: Փողի ագրեգատներում, որպես կանոն, ոչ ռեզիդենտների և պետական կառավարման մարմինների ավանդները չեն ընդգրկվում հիմնականում հետևյալ պատճառներով.

- Ոչ ռեզիդենտների տնտեսական շահերի շրջանակը տվյալ երկրից դուրս է, և այդ պատճառով տվյալ երկրի բանկային համակարգում նրանց ունեցած ավանդները, անկախ ժամկետայնությունից, այդ երկրում գործառնությունների սպասարկման համար չեն նախատեսված[23] և, հետևաբար, չեն մասնակցում այդ երկրում արտադրվող ՀՆԱ-ի սպասարկմանը:
- Պետական կառավարման հատվածը, իր ծախսերն իրականացնելու տեսանկյունից, յուրահատուկ սուբյեկտ է: Ի տարբերություն անհատների և մյուս տնտեսական միավորների, կառավարության՝ ծախսելու հնարավորությունները նրա ավանդներով չեն սահմանափակվում և, բացի այդ, կառավարության ավանդների ծավալը, ըստ էության, կապված չէ իրացվելիության նախընտրելիության սկզբունքի հետ:

Այսպիսով՝ փողի զանգվածը «փող տնօրինող» հատվածների կողմից պահվող բոլոր իրացվելի ֆինանսական գործիքների հանրագումարն է, որոնք լայնորեն կիրառվում են տնտեսության մեջ որպես վճարման միջոց, ինչպես նաև այն գործիքները, որոնք կարճ ժամանակում կարող են փոխարկվել վճարամիջոցի՝ իրենց ամբողջ անվանական կամ դրան մոտ արժեքով:

Տարբեր երկրների փողի ագրեգատների կազմն ու կառուցվածքը զգալիորեն տարբերվում են, ինչը պայմանավորված է երկրների տնտեսությունների, դրանց ֆինանսական համակարգերի տարբերություններով և առանձնահատկություններով:

4.1 ՀՀ ֆինանսական շուկայի և փողի ագրեգատների առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության փողի ագրեգատների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել և՛ դրամավարկային վիճակագրության առկա միջազգային ստանդարտները, և՛ մեր երկրի տնտեսական իրավիճակն ու ֆինանսական շուկայի զարգացվածության աստիճանն ու առանձնահատկությունները: Հատկանշական է, որ տնտեսության փողի ցուցանիշները կարող են ժամանակի ընթացքում փոխվել՝ ելնելով կիրառվող ֆինանսական գործիքների զանազանությունից, շուկաների հետագա զարգացումից, ուստի այդ պարագայում անհրաժեշտություն է առաջանում դրանց զուգահեռ փոխել նաև փողի ցուցանիշների ազգային սահմանումները՝ համապատասխան փողի ագրեգատներ ստանալու համար:

Փողի ագրեգատների մեջ մտնում են այն տարրերը, որոնք կարելի է «փող» համարել: Նեղ իմաստով՝ «փողի» մեջ ընդգրկվում են այն միջոցները, որոնք վճարամիջոցի գործառույթ են կատարում, լայն իմաստով՝ «փողը» կատարում է նաև խնայողության գործառույթ: Որպես կանոն, վճարամիջոցի գործառույթ են իրականացնում շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները[24] (փոխանցելի ավանդներ):

Փողի նեղ զանգվածն ընդունված է անվանել M1: Փողի ավելի լայն ագրեգատ-

[23] *Եթե նույնիսկ որոշ դեպքերում ոչ ռեզիդենտները իրենց ավանդների միջոցներով տվյալ երկրում գործառնություններ են իրականացնում, միևնույն է, դրանց նպատակաուղղվածությունը այլ է, քան տվյալ տնտեսության ռեզիդենտների ավանդներինը:*

[24] *Ցպահանջ (փոխանցելի) ավանդներում են ընդգրկվում նաև հաշիվները:*

ներն ընդգրկում են ժամկետային ավանդները (ոչ փոխանցելի ավանդներ), ինչպես նաև ոչ բանկ ավանդային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներից ներգրավված իրացվելի պարտավորությունները: Որպես կանոն, փողի լայն ագրեգատների քանակը պայմանավորված է ֆինանսական գործիքների ընտրանիով: Վերջիններիս իրացվելիության աստիճանից կախված՝ առանձնացվում են M2, M3, M4 և ավելի ցածր իրացվելիություն ունեցող ագրեգատներ:

Զարգացած երկրների մեծ մասում, սովորաբար, փողի ագրեգատներում ընդգրկվում են միայն ռեզիդենտների՝ ազգային արժույթով ավանդները: Քանի որ արտարժույթը վճարման միջոց չէ, արտարժութային ավանդների իրացվելիությունը ներքին գործարքների տեսանկյունից բավականին ցածր է: ՀՀ-ում, չնայած ըստ ՀՀ օրենսդրության, արտարժույթը ևս ռեզիդենտների միջև վճարման օրինական միջոց չէ, և որպես վճարման միջոց կիրառվում է միայն վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի գործարքների դեպքում, այնուամենայնիվ բնակչության մի մասը բանկային խնայողությունները պահում է արտարժույթով: Բացի այդ, կանխիկ արտարժույթը շրջանառվում է տնտեսությունում և ստեղծում համապատասխան ավելացված արժեք տնտեսության տարբեր ճյուղերում: Հետևապես, դոլարայնացման պայմաններում արտարժութային ավանդները չեն կարող դուրս մնալ «փողի» սահմանումից և պետք է ընդգրկվեն փողի լայն ագրեգատներում:

ՀՀ-ում փողի ագրեգատներին բնորոշ են հետևյալ գծերը.

- փողի ագրեգատների տեսակները սահմանափակ են,
- ավանդային կազմակերպությունների կողմից ներգրավված արտարժութային միջոցները ներառվում են փողի ցուցանիշներում,
- Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառությունները ընդգրկվում են փողի ագրեգատներում:

4.2 ՀՀ փողի ագրեգատները

4.2.1. Փողի բազա

Փողի բազան իրենից ներկայացնում է կենտրոնական բանկի այն պարտավորությունները, որոնք նպաստում են փողի ստեղծմանը: Փողի բազան երբեմն անվանում են «հզորությամբ օժտված փող» (high-powered money), քանի որ փողի բազայի փոփոխությունները սովորաբար հանգեցնում են փողի ագրեգատների ավելի մեծ փոփոխությունների: Փողի բազան, ըստ էության, ոչ թե փողի ագրեգատ է, այլ ավելի շուտ՝ փողի ագրեգատների հիմքում ընկած այն բազան է, որը ենթարկվելով փողի բազմարկման էֆեկտին՝ նպաստում է փողի ստեղծման գործընթացին: ՀՀ փողի բազան հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից՝ ԿԲ հաշվեկշռային տվյալների հիման վրա՝ օրական կտրվածքով: Այն ընդգրկում է (հավելված՝ 1.1).

- ԿԲ-ից դուրս կանխիկ թղթադրամը և մետաղադրամը,
- առևտրային բանկերի պարտադիր և ավելցուկային միջոցները ԿԲ-ում,
- ռեզիդենտ իրական հատվածի (տնային տնտեսությունների, ձեռնարկությունների, SSՍՈԱԿ-ների) և այլ ֆինանսական կազմակերպությունների դրամով ու արտարժույթով հաշիվները ԿԲ-ում:

ՀՀ փողի բազայի հաշվարկման տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել մի քանի առանձնահատկություն.

- Դժվարություններ են առաջանում Կառավարության և իրական հատվածի ավանդները սահմանազատելիս: Որոշ պետական գերատեսչությունների հաշիվները, նրանց գործունեության բնույթից կախված, Կառավարության ավանդներից առանձին են հաշվառվում: Այս միջոցները հաշվառվում են իբրև ռեզիդենտ տնտեսության ավանդներ և ընդգրկվում են փողի բազայում:

- Հատուկ ուշադրության են արժանի Ծրագրերի իրագործման գրասենյակների (ԾԻԳ) միջոցները: Չնայած այս միջոցների որոշակի մասը կարող է լինել նաև արտարժույթով, այնուհանդերձ, պատկանում է ՀՀ կառավարությանը և այդ պատճառով տնտեսության ավանդ չի համարվում և չի ընդգրկվում փողի բազայում:
- Փողի բազայում չեն ընդգրկվում Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերից ներգրաված դրամական միջոցները, ինչպես նաև հակադարձ ռեպո համաձայնագրերով և արտարժույթի տրամադրման սվոփ գործարքներով ԿԲ-ում տեղաբաշխված միջոցները:
- Փողի բազայում չեն ընդգրկվում Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերը:
- Առևտրային բանկերի կապիտալի համալրման հաշիվները ԿԲ-ում ևս չեն ընդգրկվում փողի բազայում՝ հաշվի առնելով այդ միջոցների օգտագործման սահմանափակումները:

4.2.2. Փողի զանգված

Փողի զանգվածը ֆինանսական համակարգի այն պարտավորությունների ամբողջությունն է, որոնք համապատասխանում են «փողի»՝ վերը նշված բնութագրերին: ՀՀ-ում փողի զանգվածը (հավելվածներ 1.2 և 1.3) կազմվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ Կենտրոնական բանկի և այլ ավանդային կազմակերպությունների (առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների) հաշվեկշռային տվյալների հիման վրա: Առևտրային բանկերն իրենց հաշվեկշիռները Կենտրոնական բանկ են ներկայացնում շաբաթական և ամսական կտրվածքներով, իսկ վարկային կազմակերպությունները՝ միայն ամսական կտրվածքով: Այսպիսով՝ ՀՀ փողի լայն ագրեգատները հաշվարկվում են ամսական պարբերականությամբ:

Քաղաքականության և վերլուծական նպատակներով ՀՀ-ում օգտագործվում են փողի մի շարք ագրեգատներ (հավելված 1.4), որոնք կարելի է դիտարկել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ որպես մի ամբողջություն:

Շրջանառությունում կանխիկ դրամ: Այս ցուցանիշն ընդունված է անվանել նաև ավանդային կազմակերպություններից դուրս կանխիկ դրամ: Իհարկե, խոսքն այստեղ վերաբերում է շրջանառությունում գտնվող ՀՀ դրամին: Շրջանառությունում ՀՀ դրամը հաշվարկվում է՝ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամից հանած այլ ավանդային կազմակերպությունների դրամարկղերում առկա ՀՀ դրամը.

Շրջանառությունում կանխիկ = ԿԲ-ից դուրս կանխիկ - ՀՀ դրամ՝ այլ ավանդային կազմակերպությունների դրամարկղերում

Դրամային նեղ զանգված՝ M1: Դրամային նեղ զանգվածը ներառում է.

- Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը,
- Ռեզիդենտների (իրական հատվածի սուբյեկտների և այլ ֆինանսական կազմակերպությունների) դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):

Ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ ավանդները հաշվարկվում են որպես Կենտրոնական բանկում և առևտրային բանկերում ցպահանջ ավանդների հանրագումար: Ցպահանջ ավանդների մեջ հաշվառվում են ձեռնարկությունների, տնային տնտեսությունների և SSUՈԱԿ-ների, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներն ավանդային կազմակերպություններում:

M1-ը համարվում է փողի նեղ զանգված: Ընդգրկում է ավանդային կազմակերպությունների առավել իրացվելի և վճարման միջոցի գործառույթ իրականացնող պարտավորությունները: Արտարժույթով ցպահանջ ավանդները

փողի նեղ զանգվածի տարր չեն, քանի որ, ըստ օրենսդրության, ուղղակի վճարամիջոց համարվել չեն կարող: Վերլուծական նպատակներով կարելի է հաշվարկել նաև փողի այնպիսի նեղ զանգված, որն ընդգրկի նաև արտարժույթով ցպահանջ ավանդները:

Դրամային լայն զանգված՝ M2: Ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ավանդային կազմակերպություններում ռեզիդենտների (իրական հատվածի սուբյեկտների և այլ ֆինանսական կազմակերպությունների) դրամով բոլոր ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները: Այստեղ, բացի ավանդային կազմակերպություններում ձեռնարկությունների, տնային տնտեսությունների, ՏՏՍՈԱԿ-ների և այլ ֆինանսական կազմակերպությունների ցպահանջ և ժամկետային ավանդներից ու փոխառություններից, ներառվում են նաև.

- բանկերի՝ դրամով թողարկած ավանդային հավաստագրերը,
- իրական հատվածի սուբյեկտների և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ դրամով կնքված հակադարձ ռեպո համաձայնագրերը:

Այս գործիքներն իրենց բնույթով շատ մոտ են ժամկետային ավանդներին, չնայած դրանց իրացվելիությունն ավելի ցածր է: Հայաստանում այս գործիքների ծավալները դեռևս սահմանափակ են:

Փողի լայն զանգված՝ M2X: Իրենից ներկայացնում է՝ M2-ին գումարած ռեզիդենտների (իրական հատվածի սուբյեկտների և այլ ֆինանսական կազմակերպությունների) արտարժութային բոլոր ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները, ինչպես նաև վերջիններիս հետ կնքված արտարժույթով հակադարձ ռեպո համաձայնագրերը: Չնայած փողի ցուցանիշների նման դասակարգմանը՝ դրամավարկային քաղաքականության որոշումների կայացման գործընթացում մշտադիտարկվող հիմնական ագրեգատները փողի բազան և փողի զանգվածն են: Փողի նեղ զանգվածի ցուցանիշները մեծ կիրառություն չունեն, քանի որ ՀՀ ավանդային կազմակերպությունների փողը ամենալիարժեք ձևով արտահայտողը փողի լայն զանգվածն է: Վերլուծությունների ժամանակ կիրառելի է նաև դրամային լայն զանգվածը՝ M2-ը:

5. ՀՀ դրամավարկային վիճակագրության ամփոփման սկզբունքները

Դրամավարկային վիճակագրությունը, ըստ էության, ֆինանսական հատվածի ավանդային կազմակերպությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների հաշվեկշիռների վերլուծական ներկայացումն է: Դրամավարկային վիճակագրության մշակման և ներկայացման նպատակով ավանդային կազմակերպությունները տարանջատվում են հետևյալ ենթահատվածների՝ Կենտրոնական բանկ և այլ ավանդային կազմակերպություններ: Ընդ որում, ներկայումս ՀՀ «Այլ ավանդային կազմակերպություններ» ենթահատվածը ընդգրկում է առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները:

5.1 Հատվածային հաշվեկշիռների նկարագիրը

Հատվածային հաշվեկշիռներն օգտագործվում են տնտեսության տվյալ հատվածի վերաբերյալ տվյալների ամփոփման նպատակով: Հատվածային հաշվեկշիռների կազմման համար սկզբնական (մուտքային) տվյալները ստացվում են

հաշվետու միավորներից, ֆինանսական հատվածի համար՝ առանձին ֆինանսական կազմակերպություններից: Այս տվյալները խմբավորելով՝ կազմվում են ենթահատվածների հաշվեկշիռները, որոնք միավորելով՝ կազմվում է ամբողջ հատվածի հաշվեկշիռը: Օրինակ՝ առանձին առևտրային բանկերի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա կազմվում է առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշիռը, իսկ վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա՝ վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը: Այս երկու հաշվեկշիռների հիման վրա կազմվում է այլ ավանդային կազմակերպությունների, որպես մի ենթահատվածի, ամփոփ հաշվեկշիռը: Կենտրոնական բանկի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա կազմվում է Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշիռը: Կենտրոնական բանկի և այլ ավանդային կազմակերպությունների հաշվեկշիռների հիման վրա կազմվում է ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը, վերջինիս հիման վրա էլ՝ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշները (հավելված 1.3), որը դրամավարկային վիճակագրության ներկայացման գլխավոր աղյուսակն է:

Սույն բաժնում ներկայացվում է Կենտրոնական բանկի, ինչպես նաև առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների (այլ ավանդային կազմակերպությունների) ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների ստացման գործընթացը:

5.2 ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը[25]

5.2.1. ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռային տարրերի վիճակագրական դասակարգումը

Դրամավարկային քաղաքականության որոշումների կայացման գործընթացում կարևոր է մշտադիտարկվող փողի ցուցանիշների ճիշտ գնահատումը, մասնավորապես այն ցուցանիշների, որոնք գտնվում են Կենտրոնական բանկի անմիջական (գործառնական) ազդեցության տակ: Վերջիններիս ստացման աղբյուրը Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվեկշիռն է: Այսպիսով՝ Կենտրոնական բանկի հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը և մշակումը մեծ կարևորություն է ստանում, որը դրամավարկային վիճակագրության մշակման առաջին և ամենակարևոր փուլն է:

Կենտրոնական բանկի՝ որպես երկրի դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմնի, հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքը, ի տարբերություն այլ ֆինանսական կազմակերպությունների, ունի իր առանձնահատկությունները, որոնք բխում են Կենտրոնական բանկի կողմից իրականացվող խնդիրների առանձնահատկություններից՝ դրամավարկային քաղաքականության իրականացում, ազգային արժույթի թողարկում, Կառավարության բանկային և ֆինանսական սպասարկում, միջազգային պահուստների կառավարում, ֆինանսական համակարգի վերահսկողություն: Կենտրոնական բանկի հաշվեկշռի առանձնահատկություններն են.

- Թողարկված ազգային դրամը Կենտրոնական բանկի համար ֆինանսական ակտիվ չի համարվում, իսկ Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամը Կենտրոնական բանկի պարտավորությունն է և արտացոլվում է հաշվեկշռի պասիվային մասում:
- Կենտրոնական բանկը, որպես երկրի դրամավարկային մարմին, վարում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հաշիվները: ԱՄՀ-ի հետ կապված գործարքները արտացոլվում են Կենտրոնական բանկի արտաքին

[25] *ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և մեկնաբանությունները՝ տես ՀՀ ԿԲ հաշվապահական հաշվառման վարչության պետի կողմից հաստատված 2009թ. հուլիսի 14-ի թիվ 10 և թիվ 11 որոշումները:*

ակտիվներում և պարտավորություններում[26]:

- Կենտրոնական բանկի արտաքին ակտիվներում ընդգրկված ոսկու ստանդարտ ձուլակտորները համարվում են մոնետար ոսկի: Ի տարբերություն Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի համար ոսկու ստանդարտ ձուլակտորները մոնետար ոսկի չեն համարվում:

Դրամավարկային վիճակագրության տեսանկյունից, Կենտրոնական բանկի հաշվեկշռում հաշիվները դասակարգվում են՝ ելնելով տնտեսության հատվածավորման սկզբունքներից:

Կենտրոնական բանկի հաշվեկշռի ակտիվները և պասիվները բաժանված են արտաքինի և ներքինի: Արտաքին ակտիվները և պարտավորությունները՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ, իսկ ներքին ակտիվները և պարտավորությունները՝ ռեզիդենտների նկատմամբ պահանջներն ու պարտավորություններն են:

Ըստ 2008 թ. Ազգային հաշիվների համակարգի՝ տնտեսությունը բաժանվում է մի քանի հատվածների: Կենտրոնական բանկի տեսանկյունից, ակտիվների դասակարգման նպատակով առանձնացվում են տնտեսության ներքին երեք հիմնական հատվածներ.

- պետական կառավարման հատված,
- իրական հատված,
- ֆինանսական հատված:

Ոչ ռեզիդենտները կազմում են *արտաքին հատվածը*, կարող են գործարքներ իրականացնել ներքին հատվածների հետ:

Կենտրոնական բանկի հաշվեկշռում արտարժույթը դասակարգված է ըստ ազատ փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթների: Փոխարկելի են համարվում այն արտարժույթները, որոնք միջազգային շուկաներում ազատ փոխարկելի են, ինչպես նաև էական նշանակություն ունեն վճարային հաշվեկշռի գործառնությունները ֆինանսավորելու տեսանկյունից: Փոխարկելի է համարվում նաև ոսկին: Մնացած արտարժույթները համարվում են ոչ փոխարկելի[27]:

Կենտրոնական բանկի հաշվեկշռը կազմված է կուտակման մեթոդով, որի համաձայն՝ բոլոր կուտակված տոկոսները ընդգրկվում են իրենց համապատասխան գործիքների մեջ:

Կենտրոնական բանկի՝ վիճակագրորեն դասակարգված հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 3. Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշիռ

ԱԿՏԻՎՆԵՐ	*ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ*
Արտաքին ակտիվներ	ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Փոխարկելի արտարժույթով և ոսկով	Պարտավորություններ ՀՀ բանկերին
Մոնետար ոսկի	Թղթակցային հաշիվներ (պարտադիր և ավելցուկային պահուստներ)
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	Դրամական միջոցների ներգրավում
ՀՓԻ-ով միջոցներ	Հակադարձ ռեպո համաձայնագրեր
Պահանջներ օտարերկրյա բանկերին	Կապիտալի համալրման հաշիվներ
Այլ փոխարկելի արտարժույթ	ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոփ
Ոչ փոխարկելի արտարժույթով	Այլ ավանդներ
Պահանջներ օտարերկրյա բանկերին	ԿԲ-ի կողմից թողարկված պարտատոմսեր
Այլ ոչ փոխարկելի արտարժույթ	Պարտավորություններ ՀՀ կառավարությանը
ՀՀ դրամով	Կառավարության ավանդներ
Պահանջներ ՀՀ կառավարությանը	ԾԻԳ-երի միջոցներ

[26] *ԱՄՀ-ի հետ փոխհարաբերությունները և ԱՄՀ հաշիվների արտացոլումը ԿԲ հաշվեկշռում մանրամասն ներկայացված են 6-րդ բաժնում:*

[27] *Ավելի մանրամասն նկարագրությունը ներկայացված է 7-րդ գլխում:*

Պետական պարտատոմսեր	Արտաքին պարտավորություններ
Պահանջներ ՀՀ այլ ավանդային կամակերպություններին	Փոխարկելի արտարժույթով
Վարկեր	ԱՄՀ-ի վարկ
Ռեպո համաձայնագրեր	ՀՓԻ բաշխում
ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	Այլ արտաքին պարտավորություններ
Պահանջներ տնտեսությանը	Ոչ փոխարկելի արտարժույթով
Այլ ակտիվներ	ՀՀ դրամով
Այլ ֆինանսական ակտիվներ	Այլ պարտավորություններ
Ստացման ենթակա հաշիվներ	Կապիտալ հաշիվներ
Ոչ ֆինանսական ակտիվներ	Ընթացիկ և չբաշխված շահույթ
	Կանոնադրական կապիտալ
	Գլխավոր պահուստ
	Ակտիվների և այլ կորուստների պահուստներ
	Վերագնահատման պահուստներ

Կենտրոնական բանկի եռամսյակային և տարեկան հաշվեկշռի վիճակագրական ամփոփումը կատարվում է՝ հիմնվելով եզրափակիչ շրջանառության արդյունքների վրա:

5.2.2. Հաշվեկշռի ակտիվային տարրերը

Արտաքին ակտիվներ: Արտաքին ակտիվները դասակարգվում են ըստ փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթների: Այս տեսանկյունից, դրամը համարվում է ոչ փոխարկելի արժույթ: Փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները ընդգրկում են.

- մոնետար ոսկի,
- պահուստային դիրքը Արժույթի միջազգային հիմնադրամում,
- ՀՓԻ-ով միջոցներ,
- արտարժութային ակտիվներ (ներառյալ պահանջները օտարերկրյա բանկերին և այլ արտարժույթը):

Կենտրոնական բանկի արտաքին ակտիվները և արտաքին պարտավորությունները, ինչպես նաև զուտ արտաքին ակտիվները մանրամասն ներկայացված են սույն ձեռնարկի 7-րդ բաժնում:

Ներքին ակտիվներ: Ներքին ակտիվները Կենտրոնական բանկի պահանջներն են տնտեսության ռեզիդենտ հատվածների նկատմամբ, որոնք առանձնացվում են ըստ հետևյալ հիմնական խմբերի՝

- պահանջներ ՀՀ կառավարությանը,
- պահանջներ այլ ավանդային կամակերպություններին,
- այլ ակտիվներ:

Ներքին ակտիվների նման դասակարգումը պայմանավորված է կենտրոնական բանկերի հիմնական գործառույթներով: Տնտեսության վարկավորումը Կենտրոնական բանկի գործունեության հիմնական ուղղությունը չէ, այդ պատճառով տնտեսության նկատմամբ պահանջները Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշռում չեն առանձնացվում:

Կառավարության նկատմամբ պահանջները ՀՀ կառավարության ֆինանսական պարտավորություններն են Կենտրոնական բանկի նկատմամբ: Այդ պարտավորություններում ընդգրկվում են պետական պարտատոմսերը:

Պահանջներն այլ ավանդային կամակերպությունների նկատմամբ ներառում են ՀՀ ռեզիդենտ այլ ավանդային կամակերպություններին տրված բոլոր տեսակի վարկերը, այդ թվում՝ առևտրային բանկերի հետ կնքված ռեպո համաձայ-

նագրերը, Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի ներգրավման սվոփ գործարքները:

Այլ ակտիվներում ընդգրկվում են այն ակտիվները, որոնք Կենտրոնական բանկի հիմնական գործունեության համար որոշիչ չեն.

- պահանջները տնտեսությանը,
- այլ ֆինանսական ակտիվները,
- ստացման ենթակա հաշիվները,
- ոչ ֆինանսական ակտիվները (գույքը, հիմնական միջոցները և այլ նյութական ակտիվները):

Ավանդային կազմակերպությունների այլ ակտիվները և այլ պարտավորությունները, ինչպես նաև զուտ այլ ակտիվները, մանրամասն ներկայացված են սույն ձեռնարկի 8-րդ բաժնում:

5.2.3. Հաշվեկշռի պասիվային տարրերը

ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկ ՀՀ դրամ: ՀՀ դրամի միակ թողարկողը ՀՀ կենտրոնական բանկն է, հետևաբար, ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկ դրամը (թղթադրամները և մետաղադրամները) նրա պարտավորությունն է: Այստեղ ընդգրկվում է ինչպես շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը, այնպես էլ այլ ավանդային կազմակերպությունների դրամարկղերում գտնվող ՀՀ դրամը:

Առևտրային բանկերի նկատմամբ պարտավորություններն ընդգրկում են բանկերի պարտադիր պահուստները և ավելցուկային միջոցները, բանկերից ներգրավված դրամական միջոցները Կենտրոնական բանկում, ինչպես նաև հակադարձ ռեպո համաձայնագրերով, Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի տրամադրման սվոփ գործարքներով և կապիտալի համալրման նպատակով Կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցները:

Տնտեսությունից ներգրավված այլ ավանդները (ներառյալ հաշիվները) տնտեսության իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների միջոցներն են Կենտրոնական բանկում, որոնք սովորաբար փոքր գումարներ են կազմում:

ԿԲ պարտավորությունները կառավարության նկատմամբ կառավարության հաշիվները և ավանդներն են, որոնք սովորաբար ընդգրկում են գանձապետարանի աշխատանքային (գործառնական) հաշիվները, ԿԲ-ում պետական կառավարման միավորների բոլոր ավանդները և Ծրագրերի իրականացման գրասենյակների բոլոր հաշիվները:

ԿԲ-ի կողմից թողարկված պարտատոմսերը Կենտրոնական բանկի կողմից թողարկված կարճաժամկետ պարտատոմսերն են:

Արտաքին պարտավորություններ: Արտաքին պարտավորություններն ընդգրկում են ԿԲ բոլոր պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ: Արտաքին պարտավորությունները, արտաքին ակտիվների նման, դասակարգվում են ըստ փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթների: Ուշադրության են արժանի դրամով արտաքին պարտավորությունները: Հայկական դրամի ներքին փոխարկելիության պատճառով, ի տարբերություն արտաքին ակտիվների, դրամով արտաքին պարտավորությունները իրենց բնույթով գրեթե նույնն են, ինչ որ փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորությունները:

Այսպիսով՝ ԿԲ արտաքին պարտավորություններն են.

- Արժույթի միջազգային հիմնադրամից ստացված վարկերը,
- ՀՓԻ բաշխումը,
- ոչ ռեզիդենտներից ստացված վարկերը, ներգրավված ավանդները և այլ պարտավորությունները,
- դրամով պարտավորությունները ոչ ռեզիդենտներին:

Այլ պարտավորություններն ընդգրկում են ռեզիդենտ արտաքին ու ներքին կրեդիտորները և միջանկյալ հաշիվները, վճարման ենթակա գումարները, ինչպես նաև այլ ենթակատեգորիաներում չդասակարգված մնացած հաշիվները:

Կապիտալի հաշիվներն ընդգրկում են ԿԲ ընթացիկ և չբաշխված շահույթը, կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստը, ակտիվների և այլ կորուստների պահուստները և վերագնահատման պահուստները:

5.2.4. ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշիռը

Դրամավարկային քաղաքականության տեսանկյունից ավելի նպատակահարմար է ԿԲ դիրքը կամ փոխհարաբերությունները տնտեսության որոշ հատվածների նկատմամբ դիտարկել զուտ տեսքով, որն իրականացվում է տնտեսության տվյալ հատվածի նկատմամբ ԿԲ պահանջներից այդ հատվածի հանդեպ ունեցած պարտավորությունները միմյանցից զտելու միջոցով: Բացի այդ, դրամավարկային վիճակագրության սկզբունքներով դասակարգված ԿԲ հաշվեկշռից պետք է ստացվի փողի բազան:

Երկրի միջազգային իրացվելիությունը գնահատելու նպատակով պետք է դիտարկել ոչ թե համախառն, այլ զուտ արտաքին ակտիվները: Ոչ փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները երկրի արտաքին իրացվելիությունը չեն բնութագրում, այդ պատճառով դրամավարկային քաղաքականության տեսանկյունից առանձնացվում են արտաքին ակտիվներից: ՀՀ դրամով արտահայտված արտաքին ակտիվները ևս համարվում են ոչ փոխարկելի: Այլ է դրամով արտաքին պարտավորությունների բնույթը: Դրամի ներքին փոխարկելիության պատճառով, արտաքին պարտավորությունները իրենց բնույթով նույնն են, ինչ որ փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորությունները:

Կառավարության՝ ծախսելու հնարավորությունը նրա ավանդների ծավալով չի արտահայտվում կամ սահմանափակվում, բացի այդ, դրանց փոփոխությունները կառավարվում են քաղաքականություն իրականացնող մարմինների կողմից, և որոշումներ ընդունելիս կառավարման մարմինները չեն առաջնորդվում իրացվելիության նախընտրելիության սկզբունքներով: Այս պատճառներով Կառավարության ավանդները փողի բազայում չեն ընդգրկվում, այլ զտվում են Կառավարության նկատմամբ ԿԲ պահանջներից:

Ընդհանուր առմամբ, փողի բազան դիտարկվում է որպես Կենտրոնական բանկի այնպիսի պարտավորությունների համախումբ, որոնք տնտեսությունում շրջանառվող փող են հանդիսանում (ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ, տնտեսության իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդները և հաշիվները) կամ նպաստում են փողի ստեղծմանը (բանկերի պարտադիր և ավելցուկային պահուստներ) և գտնվում են Կենտրոնական բանկի անմիջական գործառնական ազդեցության տակ: Ռեզիդենտ տնտեսության՝ Կենտրոնական բանկում գտնվող ավանդները բնորոշ չեն Կենտրոնական բանկի գործունեությանը, սակայն դրանք, ինչպես ցանկացած բանկում տնտեսության իրական հատվածի ավանդներ, համարվում են փող և ընդգրկվում են փողի համապատասխան ագրեգատներում:

Նշված սկզբունքներից ելնելով՝ Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշիռը ստանում է հետևյալ տեսքը.

1. Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ)

Միջազգային պահուստներ (ակտիվ)՝ ***հանած***

Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (պարտավորություն)

Արտաքին պարտավորություններ դրամով (պարտավորություն)

2. Զուտ ներքին ակտիվներ (ԶՆԱ)

2.1. Զուտ պահանջներ Կառավարությանը

Պահանջներ Կառավարությանը (ակտիվ)՝ ***հանած***

Պարտավորություններ Կառավարությանը (պարտավորություն)

2.2. Պահանջներ ՀՀ այլ ավանդային կամակերպություններին (ակտիվ)՝ ***հանած***

Դրամական միջոցների ներգրավում (պարտավորություն)
Դրամական միջոցների ներգրավման սակարկություն (պարտավորություն)
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (պարտավորություն)
ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (պարտավորություն)
2.3 ԿԲ-ի կողմից թողարկված պարտատոմսեր (պարտավորություն)
2.4. Զուտ այլ ակտիվներ
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով (ակտիվ)
Արտաքին ակտիվներ դրամով (ակտիվ)
Պահանջներ տնտեսությանը (ակտիվ)
Այլ ակտիվներ (ակտիվ)՝ ***հանած***
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (պարտավորություն)
Բանկերի կապիտալի համալրման հաշիվներ (պարտավորություն)
Այլ պարտավորություններ (պարտավորություն)
Կապիտալ հաշիվներ (կապիտալ)

Փողի բազա

1. ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
2. Բանկերի պարտադիր պահուստներ և ավելցուկային միջոցներ
3. Այլ ավանդներ (ներառյալ հաշիվները)

Ներկայացված սխեմայից ակնհայտ երևում է ԿԲ ամփոփ հաշվեկշռի կառուցվածքը, սակայն հարկ է կատարել որոշ պարզաբանումներ: Դրամավարկային վիճակագրության միջազգային չափանիշների համաձայն՝ փողի բազայում կարող են ընդգրկվել ԿԲ-ում առևտրային բանկերի բոլոր հաշիվները՝ ներառյալ ԿԲ-ում տեղաբաշխված դրամական միջոցները, դրամական միջոցների ներգրավման սակարկությունները, հակադարձ ռեպո համաձայնագրերը և ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոփ գործարքները: Սակայն նշված հաշիվները փողի բազայում չեն ընդգրկվում, այլ զտվում են բանկերի պահանջներից, քանի որ դրամավարկային քաղաքականության տեսանկյունից հակադարձ ռեպո համաձայնագրերը, ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոփերը, ԿԲ-ում տեղաբաշխված դրամական միջոցները և դրամական միջոցների ներգրավման սակարկությունները նպաստում են փողի բազայի կրճատմանը, և դրանց զտումը բանկերի նկատմամբ պահանջներից թույլ է տալիս արտահայտել այդ գործիքների կիրառման հետևանքով փողի բազայում տեղի ունեցած փոփոխությունները: Հակառակ դեպքում, վերը նշված գործիքների կիրառման արդյունքում դրամական միջոցների շարժը տեղի կունենա փողի բազայի տարրերում և չի արտացոլի դրանց ազդեցությունը փողի բազայի վրա: Նույն սկզբունքը գործում է ԿԲ-ի կողմից թողարկված պարտատոմսերի դեպքում: Այս գործիքի կիրառումը նույնպես հանգեցնում է փողի բազայի կրճատմանը և չի ընդգրկվում դրա մեջ:

Այսպիսով՝ փողի բազան պայմանականորեն կարելի է դիտարկել երկու տեսանկյունից.

1. ***Առաջարկի*** - Կենտրոնական բանկը փողի բազա է ստեղծում՝ ֆինանսական ակտիվներ ձեռք բերելով: ԿԲ հիմնական գործառնություններից ելնելով՝ ակտիվները, որոնք նա ձեռք է բերում, զուտ միջազգային պահուստներն են, զուտ պահանջները Կառավարությանը, պահանջները այլ ավանդային կամակերպությունների և զուտ այլ ակտիվները.

ՓԲ = ԶՄՊ + ԶՆԱ, *որտեղ՝*

ՓԲ - *փողի բազա*
ԶՄՊ - *ԿԲ զուտ միջազգային պահուստներ*
ԶՆԱ - *ԿԲ զուտ ներքին ակտիվներ*

ԶՄՊ = ՄՊ - ԱՊ, *որտեղ՝*

ՄՊ - *միջազգային պահուստներ (արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով)*
ԱՊ - *արտաքին պարտավորություններ (փոխարկելի արտարժույթով և*

դրամով)

ՉՆԱ = Կ + Բ -Պ+ ԱՉԱ, *որտեղ՝*

Կ - *զուտ պահանջներ Կառավարությանը*
Բ - *պահանջներ այլ ավանդային կամակերպություններին*
Պ - *ԿԲ կողմից թողարկված պարտատոմսեր*
ԱՉԱ - *զուտ այլ ակտիվներ*

2. ***Պահանջարկի*** - Փողի բազան ԿԲ այն պարտավորությունների հանրագումարն է, որոնք փող են հանդիսանում կամ նպաստում են տնտեսությունում շրջանառվող փողի ստեղծմանը.

ՓԲ = ԿԲԿ + Պ + Ա, *որտեղ՝*

ԿԲԿ - *ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ*
Պ - *առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ԿԲ-ում (պարտադիր պահուստներ և ավելցուկ միջոցներ)*
Ա - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ (ներառյալ հաշիվներ) ԿԲ-ում*

Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշռում ներկայացվող ցուցանիշների իրատեսական և ճշգրիտ արտացոլումը կարևոր է արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար:

5.3 ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը[28]

5.3.1. ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռային տարրերի վիճակագրական դասակարգումը

ՀՀ առևտրային բանկերը այլ ավանդային կազմակերպությունների ենթահատված են: Առևտրային բանկերի և Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշիռների կազմման սկզբունքները գրեթե նույնն են: Գոյություն ունեցող տարբերությունները բխում են ԿԲ և առևտրային բանկերի գործառույթների տարբերություններից:

Ի տարբերություն Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի վերջնական նպատակը շահույթ ստանալն է, որն ապահովվում է ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարելով: Նպատակների այս սկզբունքային տարբերությունից ելնելով՝ առևտրային բանկերի ֆինանսական գործիքները պետք է դասակարգվեն ավելի մանրամասն:

Այնուհանդերձ, ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի հաշվեկշռի վիճակագրական դասակարգման սկզբունքները համարյա նույնն են, ինչ որ ԿԲ-ինը: Այսպիսով՝ բանկերի հաշվեկշռային տարրերի վիճակագրական դասակարգման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝

- ռեզիդենտությունը,
- արժույթների դասակարգումը,
- տնտեսության հատվածները,
- ֆինանսական գործիքների դասակարգումը կամ տեսակները:

Նշված սկզբունքներից առաջին երկուսը գրեթե նույնությամբ կիրառվում են ԿԲ հաշվեկշռի վերլուծությունում, այն է՝ ռեզիդենտության սկզբունքի համաձայն՝ բոլոր

[28] *ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի և մեկնաբանությունների մեթոդական ցուցումները. տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թ. նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշումը:*

տեսակի ակտիվները և պարտավորությունները պետք է դասակարգվեն ըստ սեփականատերերի՝ ներքինի (ռեզիդենտների) և արտաքինի (ոչ ռեզիդենտների): Արժույթները դասակարգվում են երեք խմբի՝ ազգային արժույթ (ՀՀ դրամ), փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթներ: Ինչպես արդեն նշվել է, փոխարկելի արտարժույթները էական նշանակություն ունեն վճարային հաշվեկշռի գործառնությունները ֆինանսավորելու տեսանկյունից: Ոչ փոխարկելի կամ սահմանափակ փոխարկելի արտարժույթները թողարկող երկրից դուրս շատ քիչ կիրառություն ունեն:

Առևտրային բանկերի ռեզիդենտների նկատմամբ պահանջները և պարտավորությունները դասակարգվում են ըստ տնտեսության երկու հատվածների՝

- պետական կառավարման հատված,
- իրական հատված:

Բացի թվարկվածներից, այստեղ նաև պետք է առանձին դիտարկել առևտրային բանկերի պահանջները և պարտավորությունները այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ: Ըստ էության, ավանդային կազմակերպությունների տեսանկյունից, ավանդային կազմակերպություն չհանդիսացող ֆինանսական կազմակերպությունները ներառվում են ռեզիդենտ տնտեսության ենթահատվածներում:

Առևտրային բանկերի հաշվեկշռի վերլուծության համար կարևոր նշանակություն ունի տնտեսության իրական հատվածի տարանջատումը ձեռնարկությունների (պետական մասնակցությամբ և մասնավոր), տնային տնտեսությունների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպությունների:

Ֆինանսական գործիքները դասակարգվում են նաև ըստ ժամկետայնության և տեսակների: Ըստ ժամկետայնության՝ բոլոր գործիքները բաժանվում են երկու խմբի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ: Մինչև մեկ տարի ժամկետայնությամբ գործիքները դիտարկվում են որպես կարճաժամկետ, իսկ մեկ տարուց ավելի ժամկետայնություն ունեցողները՝ երկարաժամկետ[29]:

Այնուհանդերձ, ֆինանսական գործիքների՝ ըստ ժամկետայնության դասակարգումը դրամավարկային վիճակագրության տեսանկյունից սկզբունքային չէ, սակայն խիստ ցանկալի է վերլուծական նպատակներով: Ֆինանսական գործիքների վիճակագրական դասակարգումը մանրամասն ներկայացված է 3-րդ գլխում:

Այսպիսով՝ ՀՀ առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշիռը, խմբավորված ըստ դրամավարկային վիճակագրության պահանջների, ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 4. Առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշիռ

ԱԿՏԻՎՆԵՐ	*ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ*
Պահուստային ակտիվներ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով[30]
ՀՀ դրամ դրամարկղում	Ձեռնարկություններից և կազմակերպություններից
Պահուստներ ԿԲ-ում, այդ թվում՝	Տնային տնտեսություններից
Պարտադիր պահուստներ	Շահույթ չհետապնդող կազմակերպություններից
Այլ պահուստներ	Այլ ֆինանսական կազմակերպություններից
Արտաքին ակտիվներ	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Փոխարկելի արտարժույթով	Ձեռնարկություններից և

[29] *Ֆինանսական գործառնություններում սովորաբար առանձնացվում են նաև միջինժամկետ գործիքները, որոնց ժամկետը, երկրի ֆինանսական շուկայի իրավիճակից կախված, մեկից հինգ տարի է: Դրամավարկային վիճակագրության տեսանկյունից, միջինժամկետ գործիքների առանձնացումը երկարաժամկետներից սկզբունքային նշանակություն չունի:*

[30] *Ներառյալ՝ հաշիվները:*

	կազմակերպություններից
Ոչ փոխարկելի արտարժույթով	Տնային տնտեսություններից
Դրամով	Շահույթ չհետապնդող կազմակերպություններից
Պահանջներ ՀՀ կառավարությանը	Այլ ֆինանսական կազմակերպություններից
Պահանջներ տնտեսությանը	Արտարժութային ավանդներ
Պահանջներ ձեռնարկություններին և կազմակերպություններին	Ձեռնարկություններից և կազմակերպություններից
ՀՀ դրամով	Տնային տնտեսություններից
Արտարժույթով	Շահույթ չհետապնդող կազմակերպություններից
Պահանջներ տնային տնտեսություններին	Այլ ֆինանսական կազմակերպություններից
ՀՀ դրամով	Արտաքին պարտավորություններ
Արտարժույթով	Փոխարկելի արտարժույթով
Պահանջներ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	Ոչ փոխարկելի արտարժույթով
ՀՀ դրամով	ՀՀ դրամով
Արտարժույթով	Պարտավորություններ ՀՀ կառավարությանը
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպություններին	Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ
ՀՀ դրամով	Միջբանկային պարտավորություններ
Արտարժույթով	Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր
Ներդրումներ փայաբաժիններում	Այլ պարտավորություններ
Միջբանկային պահանջներ	Կապիտալ հաշիվներ
Սառեցված հաշիվներ	Ընթացիկ և չբաշխված շահույթ
Ներբանկային զուտ պահանջներ	Կանոնադրական կապիտալ
Այլ ակտիվներ	Գլխավոր պահուստ
Այլ ֆինանսական ակտիվներ	Ակտիվների և այլ կորուստների պահուստներ
Ստացման ենթակա հաշիվներ	Վերագնահատման պահուստներ
Ոչ ֆինանսական ակտիվներ	

Առևտրային բանկերի հաշվապահական հաշվառումն իրականացվում է հաշվեգրման սկզբունքով: Այդ սկզբունքի համաձայն՝ գործարքները գրանցվում են դրանց իրականացման և ոչ թե վճարումների կատարման պահին:

Հաշվեկշռում բոլոր ակտիվների և պարտավորությունների դիմաց կուտակված տոկոսներն ընդգրկվում են տվյալ գործիքի մեջ: Այսպես՝ վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսները պետք է հաշվառվեն «Վարկեր» բաժնում, ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսները՝ «Ավանդներ» բաժնում և այլն:

5.3.2. Առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշիռը

Ինչպես Կենտրոնական բանկի դեպքում, առևտրային բանկերի համար ևս դրամավարկային քաղաքականության տեսանկյունից նպատակահարմար է տնտեսության որոշ հատվածների նկատմամբ փոխհարաբերությունները դիտարկել զուտ տեսքով, որն իրականացվում է տնտեսության տվյալ հատվածի նկատմամբ բանկերի պահանջները և պարտավորությունները միմյանցից զտելու միջոցով:

Կենտրոնական բանկը առևտրային բանկերի համար առանձին հատված է, և նրա հետ փոխհարաբերությունները ամփոփ հաշվեկշռում առանձին են արտացոլվում: Հաշվի առնելով Կենտրոնական բանկի՝ իբրև դրամավարկային կարգավորման մարմնի, դերը, ամփոփ հաշվեկշռային ներկայացման ժամանակ առևտրային բանկերի՝ ԿԲ-ի նկատմամբ պահանջներից պետք է զտվեն Կենտրոնական բանկի հանդեպ դրանց ունեցած պարտավորությունները:

Առևտրային բանկերի փողի ցուցանիշներն ավելի ցայտուն նկարագրելու համար կազմվում է առևտրային բանկերի համակարգի ամփոփ հաշվեկշիռը, որն ունի հետևյալ տեսքը.

1. Զուտ արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով

Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով (ակտիվ)՝ ***հանած***
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (պարտավորություն)
Արտաքին պարտավորություններ դրամով (պարտավորություն)

2. Զուտ ներքին ակտիվներ

2.1. Զուտ պահանջներ Կառավարությանը
Պահանջներ Կառավարությանը (ակտիվ)՝ ***հանած***
Պարտավորություններ Կառավարությանը (պարտավորություն)
2.2. Զուտ պահանջներ ԿԲ-ին
Պահուստային ակտիվներ (ակտիվ)՝ ***հանած***
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (պարտավորություն)
2.3. Պահանջներ տնտեսությանը (ակտիվ)
2.4. Զուտ այլ ակտիվներ
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով (ակտիվ)
Արտաքին ակտիվներ դրամով (ակտիվ)
Ներդրումներ փայաբաժիններում (ակտիվ)
Սառեցված հաշիվներ (ակտիվ)
Միջբանկային պահանջներ (ակտիվ)
Ներբանկային պահանջներ (ակտիվ)
Այլ ակտիվներ (ակտիվ)՝ ***հանած***
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (պարտավորություն)
Միջբանկային պարտավորություններ (պարտավորություն)
Ներբանկային պարտավորություններ (պարտավորություն)
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (պարտավորություն)
Այլ պարտավորություններ (պարտավորություն)
Կապիտալ հաշիվներ (կապիտալ)

Ավանդներ

1. Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
2. Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
3. Արտարժութային ավանդներ

Չնայած վերը բերված աղյուսակից պարզ է, թե ինչպես է ստացվում ամփոփ հաշվեկշիռը, նպատակահարմար է ավելի մանրամասն անդրադառնալ նշված ցուցանիշներին:

Առևտրային բանկերի ԶԱԱ-երը իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: Ոչ փոխարկելի արտարժույթով և դրամով արտաքին ակտիվները արտաքին պահուստներում չեն ընդգրկվում, քանի որ դրանք երկրի արտաքին իրացվելիությունը չեն բնութագրում: Նույն պատճառով, ԶԱԱ-ում չեն ընդգրկվում ոչ փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորությունները: Դրամով արտաքին պարտավորություններն ընդգրկվում են ԶԱԱ-ում, քանի որ Հայաստանում ապահովված է դրամի ներքին փոխարկելիությունը: Ոչ ռեզիդենտների նկատմամբ դրամով պարտավորությունները կարող են փոխարկվել արտարժույթի ցանկացած պահի և այս իմաստով դրանք արտաքին ակտիվների նկատմամբ պոտենցիալ պահանջ են ներկայացնում իրենցից և ընդգրկվում են ԶԱԱ-ում:

Ոչ ռեզիդենտների ավանդները ՀՀ փողի ագրեգատներում չեն ընդգրկվում, քանի որ դրանք տնտեսության ներքին փող չեն համարվում՝ անկախ արժույթից և ժամկետայնությունից, և դրանց նպատակը ներքին տնտեսության գործարքների սպասարկումը չէ: Ոչ ռեզիդենտների ակտիվների և պարտավորությունների հատվածավորումը սկզբունքային նշանակություն չունի: Անկախ այն հանգամանքից, թե ոչ ռեզիդենտը բանկ է, ձեռնարկություն կամ անհատ, նրա միջոցները և նրա նկատմամբ պահանջները համարվում են արտաքին աշխարհի հետ փոխհարաբերություններ: Չնայած այս հանգամանքին՝ ՀՀ առևտրային բանկերի ոչ ռեզիդենտներին վերաբերող հաշվապահական հաշիվներն, ըստ էության, բաժանված են համապատասխան հատվածների:

Դրամավարկային վիճակագրության ճշգրիտ դասակարգման տեսանկյունից կարևոր է հաշվապահական հաշիվների դասակարգումն ըստ արժույթի տեսակների: Բոլոր հաշիվները դասակարգված են ըստ արժույթի՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթներով:

Կառավարության նկատմամբ պահանջները զտվում են Կառավարության նկատմամբ պարտավորություններից այն նույն պատճառներով, որոնք նշված են Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշռի նկարագրության ժամանակ:

Տնտեսության նկատմամբ պահանջները համախառն տեսքով են ներկայացվում, իսկ տնտեսությունից ներգրավված ավանդներն ընդգրկվում են փողի ագրեգատներում:

Զուտ այլ ակտիվներում (ԱԶԱ) ընդգրկվում են այն հաշիվները, որոնք հնարավոր չէ դասակարգել իբրև Կառավարության և տնտեսության նկատմամբ պահանջներ: ԱԶԱ կարևոր տարրերն են բանկերի ոչ ֆինանսական ակտիվները, բանկերի կապիտալ հաշիվները, ոչ փոխարկելի արտարժույթով ԶԱԱ-երը, միջբանկային պահանջների և պարտավորությունների շեղումը: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել վերջին հաշիվների խումբը: Լավագույն դեպքում առևտրային բանկերի միջբանկային պահանջները պետք է հավասար լինեն միջբանկային պարտավորություններին, քանի որ միջբանկային շուկայում կնքված միևնույն գործարքը մի բանկի մոտ գրանցվում է իբրև պահանջ, իսկ մյուսի մոտ՝ պարտավորություն: Սակայն լինում են դեպքեր, երբ միևնույն գործարքը մասնակից երկու բանկերում կարող է գրանցվել տարբեր ժամանակներում, որը շեղման պատճառ կհանդիսանա: Գործնականում նման շեղումներ միշտ կան, խնդիրն այն է, որ դրանք հնարավորինս փոքր լինեն: Առևտրային բանկերի ակտիվներից չզտվող պարտավորությունները տնտեսությունից (ձեռնարկություններ, տնային տնտեսություններ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, այլ ֆինանսական կազմակերպություններ) ներգրավված միջոցներն են:

Ընդհանուր առմամբ, ամփոփ հաշվեկշռի այս տեսքը թույլ է տալիս ավելի հեշտ և ճիշտ ձևով բացահայտել առևտրային բանկերի հաշիվներում տեղի ունեցած փոփոխությունները: Այս տեսքով ստացված հաշիվները կարելի է ուղղակի գումարել կամ համադրել ԿԲ և վարկային կազմակերպությունների հաշվեկշիռների հետ՝ ավանդային կազմակերպությունների և այլ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշները ստանալու համար:

5.4 ՀՀ վարկային կազմակերպությունների հաշվեկշռի վիճակագրական վերլուծությունը

5.4.1. ՀՀ վարկային կազմակերպությունների հաշվեկշռային տարրերի վիճակագրական դասակարգումը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ոչ բանկ ավանդային կազմակերպություններից գործում են վարկային կազմակերպությունները, որոնք հանդիսանում են այլ ավանդային կազմակերպությունների ենթահատված: Ընդհանուր առմամբ, վարկային կազմակերպությունների հաշվեկշռային տարրերի վիճակագրական դասակարգման սկզբունքները գրեթե նույնն են, ինչ որ առևտրային բանկերինը: Այնուհանդերձ, վարկային կազմակերպությունների հաշվեկշռի վիճակագրական դասակարգման ժամանակ առկա են որոշակի յուրահատկություններ.

- վարկային կազմակերպությունները ՀՀ կենտրոնական բանկի հետ գործառնություններ հիմնականում չեն իրականացնում,
- համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ վարկային կազմակերպությունները փոխառու միջոցները ներգրավում են ոչ թե ավանդների, այլ փոխառությունների ձևով:

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը, խմբավորված ըստ դրամավարկային վիճակագրության պահանջների, ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 5. Վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռ

ԱԿՏԻՎՆԵՐ	ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	Ցպահանջ փոխառություններ ՀՀ դրամով
ՀՀ դրամ դրամարկղում	Ձեռնարկություններից և կազմակերպություններից
Պահանջներ ՀՀ բանկերին	Տնային տնտեսություններից
Արտաքին ակտիվներ	Շահույթ չհետապնդող կազմակերպություններից
Փոխարկելի արտարժույթով	Այլ ֆինանսական կազմակերպություններից
Ոչ փոխարկելի արտարժույթով	Ժամկետային փոխառություններ ՀՀ դրամով
ՀՀ դրամով	Ձեռնարկություններից և կազմակերպություններից
Պահանջներ ՀՀ կառավարությանը	Տնային տնտեսություններից
Պահանջներ տնտեսությանը	Շահույթ չհետապնդող կազմակերպություններից
Պահանջներ ձեռնարկություններին և կազմակերպություններին	Այլ ֆինանսական կազմակերպություններից
ՀՀ դրամով	Արտարժութային փոխառություններ
Արտարժույթով	Ձեռնարկություններից և կազմակերպություններից
Պահանջներ տնային տնտեսություններին	Տնային տնտեսություններից
ՀՀ դրամով	Շահույթ չհետապնդող կազմակերպություններից
Արտարժույթով	Այլ ֆինանսական կազմակերպություններից
Պահանջներ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	Արտաքին պարտավորություններ
ՀՀ դրամով	Փոխարկելի արտարժույթով
Արտարժույթով	Ոչ փոխարկելի արտարժույթով
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպություններին	ՀՀ դրամով
ՀՀ դրամով	Պարտավորություններ ՀՀ կառավարությանը
Արտարժույթով	Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ
Ներդրումներ փայաբաժիններում	Պարտավորություններ ՀՀ բանկերին
Պահանջներ վարկային կազմակերպություններին	Պարտավորություններ վարկային կազմակերպություններին
Սառեցված հաշիվներ	Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր
Վարկային կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև զուտ պահանջներ	Այլ պարտավորություններ
Այլ ակտիվներ	Կապիտալ հաշիվներ
Այլ ֆինանսական ակտիվներ	Ընթացիկ և չբաշխված շահույթ
Ստացման ենթակա հաշիվներ	Կանոնադրական կապիտալ
Ոչ ֆինանսական ակտիվներ	Գլխավոր պահուստ
	Ակտիվների և այլ կորուստների պահուստներ
	Վերագնահատման պահուստներ

5.4.2. ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը

Ինչպես առևտրային բանկերի դեպքում, վարկային կազմակերպությունների համար ևս դրամավարկային քաղաքականության տեսանկյունից նպատակահարմար է տնտեսության որոշ հատվածների նկատմամբ փոխհարաբերությունները դիտարկել զուտ տեսքով, որն իրականացվում է տնտեսության տվյալ հատվածի նկատմամբ պահանջները և պարտավորությունները միմյանցից զտելու միջոցով: Այստեղ կիրառվում են գրեթե նույն սկզբունքները, ինչ որ առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռի կազմման ժամանակ, սակայն այստեղ ՀՀ առևտրային բանկերի նկատմամբ զուտ պահանջներն առանձին հոդվածով ներառվում են զուտ ներքին ակտիվների կազմում, իսկ վարկային կազմակերպությունների միջև փոխադարձ պահանջներն ու պարտավորությունները, դրանց շեղման չափով, ընդգրկվում են զուտ այլ ակտիվներում:

Վարկային կազմակերպությունների փողի ցուցանիշներն ավելի հստակ նկարագրելու համար կազմվում է վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը, որն ունի հետևյալ տեսքը.

1. Զուտ արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով

Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով (ակտիվ)՝ ***հանած***

Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (պարտավորություն)

Արտաքին պարտավորություններ դրամով (պարտավորություն)

2. Զուտ ներքին ակտիվներ

2.1. Զուտ պահանջներ Կառավարությանը

Պահանջներ Կառավարությանը (ակտիվ)՝ ***հանած***

Պարտավորություններ Կառավարությանը (պարտավորություն)

2.2. Զուտ պահանջներ ԿԲ-ին

Պահանջներ ԿԲ-ին (ակտիվ)՝ ***հանած***

Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (պարտավորություն)

2.3. Զուտ պահանջներ ՀՀ բանկերին

Պահանջներ ՀՀ բանկերին (ակտիվ)՝ ***հանած***

Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ (պարտավորություն)

2.4. Պահանջներ տնտեսությանը (ակտիվ)

2.5. Զուտ այլ ակտիվներ

Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով (ակտիվ)

Արտաքին ակտիվներ դրամով (ակտիվ)

Ներդրումներ փայաբաժիններում (ակտիվ.)

Սառեցված հաշիվներ (ակտիվ)

Պահանջներ վարկային կազմակերպություններին (ակտիվ)

Պահանջներ վարկային կազմակերպության մասնաճյուղերին (ակտիվ)

Այլ ակտիվներ (ակտիվ)՝ ***հանած***

Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր (պարտավորություն)

Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (պարտավորություն)

Պարտավորություններ վարկային կազմակերպության մասնաճյուղերի նկատմամբ (պարտավորություն)

Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (պարտավորություն)

Այլ պարտավորություններ (պարտավորություն)

Կապիտալ հաշիվներ (կապիտալ)

Փոխառություններ

1. Ցպահանջ փոխառություններ ՀՀ դրամով
2. Ժամկետային փոխառություններ ՀՀ դրամով
3. Արտարժութային փոխառություններ

Այս տեսքով ստացված հաշիվները կարելի է ուղղակի գումարել կամ համադրել ԿԲ և առևտրային բանկերի հաշվեկշռների հետ՝ ավանդային կազմակերպությունների և այլ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշները ստանալու համար: Այսպիսով՝ այլ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը ստացվում է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռների համախմբման արդյունքում, իսկ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը՝ Կենտրոնական բանկի և այլ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռների համախմբման արդյունքում:

5.5 ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը

ՀՀ ավանդային կազմակերպություններում ներառվում են Կենտրոնական բանկը, առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները: Այս հատվածի ամփոփ հաշվեկշիռն ամփոփում է ավանդային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները: Ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը[31].

[31] *Ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը մանրամասն ներկայացված է հավելված 1.2-ում:*

1. Զուտ արտաքին ակտիվներ (ԶԱԱ)

Զուտ միջազգային պահուստներ (ԿԲ)

Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)

Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմակերպություններ)

2. Զուտ ներքին ակտիվներ (ԶՆԱ)

2.1. Զուտ պահանջներ Կառավարությանը

Զուտ պահանջներ Կառավարությանը (ԿԲ)

Զուտ պահանջներ Կառավարությանը (առևտրային բանկեր)

Զուտ պահանջներ Կառավարությանը (վարկային կազմակերպություններ)

2.2. Պահանջներ տնտեսությանը

Պահանջներ ձեռնարկություններին և կազմակերպություններին

Պահանջներ տնային տնտեսություններին

Պահանջներ շահույթ չհետապնդող կազմակերպություններին

Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպություններին

2.3. Զուտ այլ ակտիվներ

Զուտ այլ ակտիվներ (ԿԲ)

Զուտ այլ ակտիվներ (առևտրային բանկեր)

Զուտ այլ ակտիվներ (վարկային կազմակերպություններ)

ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ պահանջների շեղումը

Փողի զանգված

1. Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
2. Դրամով ցպահանջ ավանդներ
3. Դրամով ժամկետային ավանդներ
4. Արտարժութային ավանդներ

Այսպիսով՝ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռի ցուցանիշների ստացման մեխանիզմը հետևյալն է.

ԶԱԱ = ԶՄՊ (ԿԲ) + ԶԱԱ (առևտրային բանկեր) + ԶԱԱ (վարկային կազմակերպություններ), *որտեղ՝*

ԶԱԱ - *ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվները,*

ԶՄՊ (ԿԲ) - *ԿԲ զուտ միջազգային պահուստները,*

ԶԱԱ (առևտրային բանկեր) - *առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները,*

ԶԱԱ (վարկային կազմակերպություններ) - *վարկային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվները:*

ԶՆԱ = Կ + S + ԱՁԱ, *որտեղ՝*

ԶՆԱ - *ավանդային կազմակերպությունների զուտ ներքին ակտիվները,*

Կ - *ավանդային կազմակերպությունների զուտ պահանջները Կառավարությանը,*

S - *ավանդային կազմակերպությունների պահանջները տնտեսությանը,*

ԱՁԱ - *ավանդային կազմակերպությունների զուտ այլ ակտիվները:*

Կ = Կ (ԿԲ) + Կ (առևտրային բանկեր) + Կ (վարկային կազմակերպություններ), *որտեղ՝*

Կ - *ավանդային կազմակերպությունների զուտ պահանջները Կառավարությանը,*

Կ (ԿԲ) – *ԿԲ զուտ պահանջները Կառավարությանը,*

Կ (առևտրային բանկեր) - *առևտրային բանկերի զուտ պահանջները Կառավարությանը,*

Կ (վարկային կազմակերպություններ) - *վարկային կազմակերպությունների զուտ*

պահանջները Կառավարությանը:

S = S (ԿԲ) + S (առևտրային բանկեր) + S (վարկային կազմակերպություններ), *որտեղ՝*

S - *ավանդային կազմակերպությունների պահանջները տնտեսությանը,*

S (ԿԲ) - *ԿԲ պահանջները տնտեսությանը,*

S (առևտրային բանկեր) - *առևտրային բանկերի պահանջները տնտեսությանը,*

S (վարկային կազմակերպություններ) - *վարկային կազմակերպությունների պահանջները տնտեսությանը:*

Չնայած ԿԲ պահանջները տնտեսությանը ԿԲ ամփոփ հաշվեկշռում «այլ ակտիվ» են համարվում, ամբողջ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռում դրանք գումարվում են այլ ավանդային կազմակերպությունների՝ տնտեսության նկատմամբ պահանջներին: Այլ ավանդային կազմակերպությունների՝ տնտեսության նկատմամբ պահանջները դասակարգվում են ըստ ձեռնարկությունների, տնային տնտեսությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների:

ԱՁԱ = ԱՁԱ (ԿԲ) + ԱՁԱ (առևտրային բանկեր) + ԱՁԱ (վարկային կազմակերպություններ) + Շ, *որտեղ՝*

ԱՁԱ - *ավանդային կազմակերպությունների զուտ այլ ակտիվները,*

ԱՁԱ (ԿԲ) - *ԿԲ զուտ այլ ակտիվները,*

ԱՁԱ (առևտրային բանկեր) - *առևտրային բանկերի զուտ այլ ակտիվները,*

ԱՁԱ (վարկային կազմակերպություններ) - *վարկային կազմակերպությունների զուտ այլ ակտիվները,*

Շ - *ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ պահանջների շեղումը՝*

ըստ ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հաշվեկշիռների:

Ավանդային կազմակերպությունների առանձին միավորների՝ ԿԲ-ի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջև պահանջները գրանցվում են ԱՁԱ-ում[32]: Ինչպես ԿԲ, այնպես էլ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռները կազմելիս այս պահանջներն ու պարտավորությունները չեն կարող դիտարկվել իբրև մնացորդային, քանի որ այլ ավանդային կազմակերպությունները ԿԲ-ի համար և ԿԲ-ն այլ ավանդային կազմակերպությունների համար առանձին հատվածներ են: Այսպիսով՝ նշված պահանջներն ու պարտավորությունները ոչ ԿԲ-ի, ոչ էլ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռներում զուտ այլ ակտիվներում չեն ընդգրկվում: Հակառակ դրան, երբ ավանդային կազմակերպությունները դիտարկվում են իբրև մի ամբողջություն, ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների փոխադարձ պահանջները և պարտավորությունները այլ (մնացորդային) ակտիվների և պարտավորությունների մեջ են ներառվում: Օրինակ՝ ԿԲ-ի համար առևտրային բանկերի նկատմամբ զուտ պահանջները հավասար են՝

Պահանջներ առևտրային բանկերին՝ ***հանած***

Պարտավորություններ առևտրային բանկերին

Առևտրային բանկերի՝ ԿԲ-ի նկատմամբ զուտ պահանջները ներառում են բանկերի հաշվեկշռի նույն հաշիվները՝ հակառակ նշանով: Նույն սկզբունքով

[32] *Ավելի մանրամասն նկարագրությունը բերված է 8-րդ բաժնում:*

դիտարկվում են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների փոխադարձ պահանջներն ու պարտավորությունները: Ինչպես վերը նշվեց, ըստ ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հաշվեկշիռների, այս զուտ պահանջների տարբերությունը պետք է հավասար լինի զրոյի, սակայն լինում են դեպքեր, երբ միևնույն գործարքները ԿԲ-ն, առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները տարբեր ժամանակ են գրանցում, որի արդյունքում էլ հաշվեկշռային շեղումներ են առաջանում:

ՇԿ = ԿԲԿ – ԿԴ (առևտրային բանկեր) – ԿԴ (վարկային կազմակերպություններ),

որտեղ՝

ՇԿ - *շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ*

ԿԲԿ - *ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ*

ԿԴ (առևտրային բանկեր) - *առևտրային բանկերի դրամարկղում ՀՀ դրամով մնացորդ*

ԿԴ (վարկային կազմակերպություններ) - *վարկային կազմակերպությունների դրամարկղում ՀՀ դրամով մնացորդ։*

ԴՑԱ = ԴՑԱ (ԿԲ) + ԴՑԱ (առևտրային բանկեր), *որտեղ՝*

ԴՑԱ - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով ցպահանջ ավանդներ (ներառյալ հաշիվներ) ավանդային կազմակերպություններում*

ԴՑԱ (ԿԲ) – *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով ցպահանջ ավանդներ ԿԲ-ում*

ԴՑԱ (առևտրային բանկեր) - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով ցպահանջ ավանդներ առևտրային բանկերում։*

ԴԺԱ = ԴԺԱ (ԿԲ) + ԴԺԱ (առևտրային բանկեր) +ԴԺԱ (վարկային կազմակերպություններ),

որտեղ՝

ԴԺԱ - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով ժամկետային ավանդներ ավանդային կազմակերպություններում*

ԴԺԱ (ԿԲ) – *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով ժամկետային ավանդներ ԿԲ-ում*

ԴԺԱ (առևտրային բանկեր) – *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով ժամկետային ավանդներ առևտրային բանկերում*

ԴԺԱ (վարկային կազմակերպություններ) - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ դրամով փոխառություններ վարկային կազմակերպություններում։*

ԱԱ = ԱԱ (ԿԲ) + ԱԱ (առևտրային բանկեր) + ԱԱ (վարկային կազմակերպություններ), *որտեղ՝*

ԱԱ – *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝*

արտարժութային

ավանդներ ավանդային կազմակերպություններում

ԱԱ (ԿԲ) – *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ արտարժութային ավանդներ ԿԲ-ում*

ԱԱ (առևտրային բանկեր) - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ արտարժութային ավանդներ առևտրային բանկերում*

ԱԱ (վարկային կազմակերպություններ) - *ռեզիդենտ իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների՝ արտարժութային փոխառություններ վարկային կազմակերպություններում:*

Այսպիսով՝ ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը[33] մակրոտնտեսական վերլուծության հիմնական աղյուսակն է: Այն ամփոփում է ավանդային կազմակերպությունների փոխհարաբերությունները ներքին տնտեսության այլ հատվածների և արտաքին աշխարհի հետ: Ընդ որում, ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը կազմելիս ընդգրկվում են ՀՀ-ում գործող բանկերն ու վարկային կազմակերպությունները, որոնք ունեն համատասխանաբար բանկային և վարկային կազմակերպության գործունեության լիզենզիաներ: ՀՀ ԿԲ-ի կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված բանկերի և վարկային կազմակերպությունների տվյալները ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռում ընդգրկվում են այնքան ժամանակ, քանի դեռ դրանց արտոնագրերը ուժը կորցրած չեն ճանաչվել, և քանի դեռ այդ բանկերի և վարկային կազմակերպությունների պարտավորությունները իրացվելի են: ՀՀ ԿԲ-ի կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված այն բանկերի և վարկային կազմակերպությունների հաշիվները, որոնց պարտավորությունները իրացվելի չեն, ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռում չեն ընդգրկվում:

Այնուհետև, ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռը, լրացնելով այլ ֆինանսական կազմակերպությունների հաշվեկշռային ցուցանիշներով, ստացվում է երկրի ֆինանսական համակարգի ամփոփ հաշվեկշիռը: Հայաստանում, այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության ընդլայնման և նրանց դերի մեծացման պայմաններում, ֆինանսական համակարգի ամփոփ հաշվեկշիռն մեծ կարևորություն կստանա:

6. Արժույթի միջազգային հիմնադրամի հաշիվների արտացոլումը ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում[34]

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. մայիսի 28-ին, ստորագրելով Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Համաձայնագրերի հոդվածները, դարձավ ԱՄՀ անդամ: ԱՄՀ կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ կենտրոնական բանկի նախագահը և ՀՀ ֆինանսների նախարարը կամ նրա տեղակալը:

Յուրաքանչյուր անդամ երկիր ԱՄՀ-ի հետ գործարքներն իրականացնելու համար նշանակում է իր ֆինանսական գործակալին, որը կարող է լինել գանձապետարանը, կենտրոնական բանկը կամ այլ պետական մարմին: Անդամ երկիրը կենտրոնական բանկին նշանակում է նաև որպես ԱՄՀ-ի՝ տվյալ երկրի

[33] *Տես՝ հավելված 1.2:*

[34] *ԱՄՀ հաշիվների հաշվապահական արտացոլման մասով տե՛ս նաև «ՀՀ ԿԲ կողմից իրականացվող գործառնությունները» ձեռնարկի գլուխ 6.7-ը և ՀՀ ԿԲ հաշվապահական հաշվառման վարչության պետի կողմից հաստատված 2011թ. մարտի 30-ի թիվ 82 որոշումը:*

արժույթով արտահայտված բոլոր միջոցների պահառու, որը պարտավոր է ապահովել ԱՄՀ հաշիվների ճիշտ արտացոլումը: Միջազգային պրակտիկայում սովորաբար կենտրոնական բանկերն են այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են ԱՄՀ-ի հետ գործառնությունները: Հայաստանի Հանրապետությունում ևս ԱՄՀ-ի հետ գործառնությունները և ֆինանսական փոխհարաբերությունները գրանցվում և արտացոլվում են Կենտրոնական բանկի հաշվեկշռում:

ԱՄՀ հաշվարկային միավորը ՀՓԻ-ն է՝ հատուկ փոխառության իրավունքը (SDR - special drawing rights), որի արժեքը որոշվում է յուրաքանչյուր օր, հինգ հիմնական պահուստային արժույթներից (ԱՄՆ դոլար, անգլիական ֆունտ ստեռլինգ, եվրո, ճապոնական իեն, չինական յուան) կազմված զամբյուղի հիման վրա, որոնք վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարի շուկայական փոխարժեքով[35]: ՀՓԻ-ի արժեքը որոշող արժույթները և դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը զամբյուղում վերանայվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Անդամ երկրի ակտիվները և պարտավորությունները, կապված ԱՄՀ-ում նրա անդամակցության հետ, արտացոլվում են ՀՓԻ-ով:

Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ երկրների ֆինանսական գործառնությունները իրականացվում են՝

1. Ընդհանուր հաշիվների վարչության (General Department),
2. ՀՓԻ վարչության (SDR Department),
3. ԱՄՀ-ի կողմից կառավարվող հաշիվների (Administered Accounts) միջոցով:

1. Ընդհանուր հաշիվների վարչությունն ընդգրկում է՝

- Ընդհանուր ռեսուրսների հաշիվը (General Resources Account)
- Հատուկ վճարումների հաշիվը (Special Disbursement Account)
- Ներդրումային հաշիվը (Investment Account):

Անդամ երկրի և ԱՄՀ-ի միջև գործառնությունների և գործարքների հիմնական մասը կատարվում է Ընդհանուր ռեսուրսների հաշվի միջոցով: Այդ գործառնություններից են՝ քվոտայի գծով անդամավճարը, արտարժույթի գնումը և հետգնումը, ՀՓԻ-ի ձեռքբերումը, գնված միջոցների գծով վճարումները և անդամ երկրի կենտրոնական բանկում ազգային արժույթով ԱՄՀ միջոցների արժեքի պահպանումը:

Հատուկ վճարումների հաշիվը, որն առանձնացված է Ընդհանուր ռեսուրսների հաշվից, անդամ երկրների վճարային հաշվեկշիռների կարգավորման նպատակ ունի՝ որոշակի պահանջներ բավարարող երկրներին արտոնյալ վարկերի տրամադրման ճանապարհով:

Ներդրումային հաշիվը ձևավորվել է ԱՄՀ-ի ներդրումային լիազորությունները ընդլայնելու նպատակով՝ հնարավորություն տալով ԱՄՀ-ին դիվերսիֆիկացնել իր եկամտի աղբյուրները, որոնք կարող են օգտագործվել իր գործունեությունը ֆինանսավորելու համար:

2. ՀՓԻ վարչությունը ոչ այնքան ԱՄՀ-ի կազմակերպչական, որքան հաշվառումներ կատարող ստորաբաժանում է: Այս վարչությունն է իրականացնում և գրանցում ՀՓԻ-ով բոլոր գործառնությունները: ՀՓԻ-ով միջոցները եկամտաբեր միջազգային պահուստային ակտիվներ են և բաշխվում են ՀՓԻ վարչությանը անդամակցող երկրների միջև:

3. ԱՄՀ-ի կողմից կառավարվող հաշիվները (Administered Accounts) ստեղծված են ԱՄՀ լիազորությունների սահմաններում ֆինանսական ծառայություններ իրականացնելու նպատակով: Ներկայումս հիմնական կառավարվող հաշիվը PRGT[36]

[35] *2016թ. հոկտեմբերի 1-ից չինական յուանը որպես ազատ փոխարկելի արտարժույթ ընդգրկվել է ՀՓԻ-ի զամբյուղի մեջ: 1999թ. հունվարի 1-ից գերմանական մարկը և ֆրանսիական ֆրանկը ՀՓԻ-ի զամբյուղում փոխարինվել են եվրոյի համարժեք քանակներով:*

[36] *PRGT – Poverty Reduction and Growth Trust՝ Աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման թրաստային ֆոնդ:*

թրաստային ֆոնդն է, որի միջոցներից որոշակի պահանջներ բավարարող անդամ երկրներին տրամադրվում են արտոնյալ վարկեր։

Ընդհանուր ռեսուրսների հաշիվ

Ընդհանուր ռեսուրսների հաշվի միջոցով իրականացվող գործառնությունների հաշվառման համար յուրաքանչյուր անդամ երկիր վարում է հետևյալ հաշիվները՝

- Անդամավճարի հաշիվ
- ԱՄՀ N 1 հաշիվ
- ԱՄՀ N 2 հաշիվ
- ԱՄՀ արժեթղթերի հաշիվ
- ԱՄՀ N1, N2 և արժեթղթերի ճշգրտման հաշիվ։

Անդամավճարի հաշիվը, որն արտացոլում է քվոտայի գծով առաջնային և հետագա վճարումները, անդամ երկրի ակտիվն է և արտահայտվում է ՀՓԻ-ով։ Անդամավճարի 25%-ը անդամ երկրի կողմից վճարվում է ՀՓԻ-ով կամ այլ պահուստային ակտիվներով, իսկ մնացած մասը՝ ազգային արժույթով։

ԱՄՀ-ի միջոցները անդամ երկրի արժույթով կենտրոնական բանկի կողմից պահվում են ԱՄՀ N 1, N 2 հաշիվներում և ԱՄՀ արժեթղթերի հաշվում։ ԱՄՀ N1, 2 հաշիվները և ԱՄՀ արժեթղթերի հաշիվը անդամ երկրի պարտավորություններն են։

ԱՄՀ N 1 հաշիվը օգտագործվում է ԱՄՀ-ի հետ գործառնությունների իրականացման համար, ներառյալ անդամավճարի վճարումը (քվոտայի՝ ազգային արժույթով բաղադրիչը), միջոցների գնումն ու հետգնումը (այսինքն Ընդհանուր ռեսուրսների հաշվի միջոցների օգտագործումը և մարումը), փոխառությունների մարումը, ինչպես նաև տվյալ երկրի ազգային արժույթի վաճառքը։ N 1 հաշվում որոշակի նվազագույն միջոցների ապահովման դեպքում բոլոր նշված գործառնությունները կարող են կատարվել ԱՄՀ արժեթղթերի հաշվով։

ԱՄՀ N1 հաշվով իրականացվող բոլոր գործառնությունները կարող են իրականացվել նաև արժեթղթերի հաշվի միջոցով՝ հաշվի առնելով, որ անդամ երկիրն իրավունք ունի ազգային արժույթով վճարումների ցանկացած մասն իրականացնել շրջանառության մեջ չգտնվող անտոկոս մուրհակների կամ նմանատիպ պարտավորությունների թողարկման միջոցով, որոնք ենթակա են վճարման ԱՄՀ-ին առաջին իսկ պահանջով։ Եթե ԱՄՀ-ի կողմից որոշակի վճարում իրականացնելու արդյունքում N1 հաշվի միջոցների մնացորդը նվազագույն սահմանից (կազմում է անդամ երկրի քվոտայի 1 %-ի 1/4-ը) իջնում է, ապա հաջորդ գործառնական օրը պետք է վերականգնվի նվազագույն մակարդակը՝ արժեթղթերի հաշվից համապատասխան գումարը N1 հաշվին փոխանցելու միջոցով։

ԱՄՀ N 2 հաշիվն օգտագործվում է տվյալ երկրում ԱՄՀ ադմինիստրատիվ ծախսերը և մուտքերը ազգային արժույթով արտացոլելու համար (օրինակ՝ ԱՄՀ հրատարակությունների վաճառքից մուտքեր)։

ԱՄՀ-ի նկատմամբ անդամ երկրի ազգային արժույթով պարտավորությունների ճշգրտման հաշիվն օգտագործվում է ՀՓԻ-ի նկատմամբ ազգային արժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով ԱՄՀ միջոցների և դրանց՝ ՀՓԻ-ով համարժեք գումարի միջև առաջացած տարբերությունները գրանցելու նպատակով, այնպես որ ԱՄՀ-ի՝ ազգային արժույթով միջոցների ընդհանուր գումարը՝ վերահաշվարկված ՀՓԻ-ի, մնում է անփոփոխ։

Այսպիսով՝ անդամավճարի հաշիվը անդամ երկրի կողմից հաշվառվում է որպես ակտիվ, իսկ ԱՄՀ N1, N 2 հաշիվները, ԱՄՀ արժեթղթերի հաշիվը և դրանց ճշգրտման հաշիվը՝ որպես պարտավորություն։

Արժույթի գնում (ԱՄՀ վարկերի օգտագործում) և հետգնում

ԱՄՀ միջոցները անդամ երկրին տրամադրվում են Ընդհանուր ռեսուրսների

հաշվի միջոցներից՝ որոշակի ծրագրերի շրջանակներում: Դրանց մի մասը վարկային մեխանիզմներ են և միմյանցից տարբերվում են՝ հիմնականում պայմանավորված վճարային հաշվեկշռի այն հիմնախնդիրների բնույթով, որոնց կարգավորմանն են ուղղված: Ընդհանուր ռեսուրսների հաշվից ԱՄՀ միջոցների օգտագործումը իրենից ներկայացնում է անդամ երկրի ազգային արժույթով արտարժույթի (կամ ՀՓԻ) գնում: Արտարժույթի գնման վերաբերյալ համաձայնագրով անդամ երկիրը պարտավորվում է, հետգնման գրաֆիկի համաձայն, ՀՓԻ-ով կամ այլ ազատ փոխարկելի արտարժույթով հետ գնել նախկինում գնված ՀՓԻ-ին համարժեք ազգային արժույթը: Հակառակ գնման պարտավորությունները արտացոլվում են ՀՓԻ-ով, և նրանց վրա հաշվարկվում են տոկոսներ՝ մինչև ամբողջական հետգնումը: Ըստ էության, հետգնման պարտավորությունը ԱՄՀ-ից ստացված վարկ է:

ԱՄՀ-ից արժույթի գնումը կատարվում է որպես անդամ երկրի արտարժութային պահուստային ակտիվների և ԱՄՀ N 1 հաշվի/արժեթղթերի հաշվի միջոցների ավելացում: Մյուս կողմից՝ հակառակ գնումը պետք է կատարվի որպես արտ-արժութային պահուստների և ԱՄՀ N 1 հաշվի/արժեթղթերի հաշվի միջոցների նվազում:

Անդամ երկրի ազգային արժույթով ԱՄՀ միջոցների արժեքի պահպանում

Յուրաքանչյուր անդամ երկիր պարտավոր է Ընդհանուր ռեսուրսների հաշվին պահվող ՀՓԻ-ով վերահաշվարկված իր արժույթով ԱՄՀ միջոցների արժեքը պահպանել: Հետևաբար, Ընդհանուր ռեսուրսների հաշվին պահվող ԱՄՀ արժութային միջոցների ընդհանուր արժեքը՝ վերահաշվարկված ՀՓԻ-ի, պետք է մնա անփոփոխ: ԱՄՀ-ն անդամ երկրի արժույթով իր միջոցները վերագնահատում է ընթացիկ փոխարժեքի հիման վրա՝ հետևյալ դեպքերում.

- տարին մեկ անգամ, ԱՄՀ ֆինանսական տարվա վերջում (ապրիլի 30),
- այլ անդամ երկրի կողմից տվյալ արժույթի գնման դեպքում,
- անդամ երկրի խնդրանքով (օրինակ՝ ամսական, եռամսյակային կտրվածքով կամ անդամ երկրի ֆինանսական տարվա վերջում),
- կամ ԱՄՀ նախաձեռնությամբ միջոցները ընթացիկ փոխարժեքին համապատասխանեցնելով:

ՀՀ կենտրոնական բանկի խնդրանքով ԱՄՀ-ի՝ ՀՀ դրամով միջոցները ՀՀ ԿԲ-ում ԱՄՀ-ի կողմից վերագնահատվում են յուրաքանչյուր ամիս՝ համապատասխան հաշիվները շուկայական արժեքով արտացոլելու նպատակով: Ընդ որում, արժեքի պահպանման անհրաժեշտությունը վերաբերում է միայն Ընդհանուր ռեսուրսների հաշվի միջոցներին: ՀՓԻ-ի նկատմամբ անդամ երկրի ազգային արժույթի փոխար-ժեքի տատանումների արդյունքում ԱՄՀ միջոցների և դրանց՝ ՀՓԻ-ով համարժեք գումարի միջև առաջացած տարբերությունները (դրական կամ բացասական) գրանցվում են ԱՄՀ N1, N2 և արժեթղթերի ճշգրտման հաշվում: Քանի որ ճշգրտման հաշիվը անդամ երկրի արժույթով ԱՄՀ միջոցների մի մասն է, այն նույնպես ենթակա է հետագա վերագնահատման: ՀՓԻ-ի նկատմամբ ազգային արժույթի արժևավորման դեպքում ազգային արժույթով ընդհանուր պարտավորությունները նվազում են, այսինքն՝ ճշգրտման հաշվի մնացորդը նվազում է, իսկ արժեզրկման դեպքում՝ ավելանում, այսինքն՝ ճշգրտման հաշվի մնացորդն աճում է:

Աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման թրաստային ֆոնդ (Poverty reduction and growth trust – PRGT, նախկին PRGF, ESAF)

Աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման թրաստային ֆոնդը (PRGT) (2010թ. հունվարի 7-ից փոխարինել է Աղքատության նվազեցման և տնտեսական աճի խթանման մեխանիզմին – PRGF trust, որն իր հերթին 1999թ. նոյեմբերի 22-ից փոխարինել է Կառուցվածքային բարեփոխումների ընդլայնված ֆինանսավորման մեխանիզմին-ESAF) առանձնացված է Ընդհանուր ռեսուրսների

հաշվից: Ներկայումս, ԱՄՀ-ի կողմից արտոնյալ վարկավորումն իրականացվում է հիմնականում PRGT-ի միջոցով, որն աջակցում է ցածր եկամուտ ունեցող երկրների տնտեսական ծրագրերին, որոնք ուղղված են մակրոտնտեսական կայունության ապահովմանը՝ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճին և աղքատության կրճատմանը համահունչ:

PRGT-ի ներքո գործում են երեք վարկավորման մեխանիզմներ՝ ընդլայնված վարկավորման մեխանիզմ (ECF), պահուստային վարկավորման մեխանիզմ (SCF) և արագ վարկավորման մեխանիզմ (RCF): 2010 թվականի հունվարից գործող վարկավորման այս մեխանիզմները նախատեսված են ցածր եկամուտ ունեցող երկրներին աջակցություն ցուցաբերելու համար՝ կախված վճարային հաշվեկշռի խնդիրների բնույթից:

Ընդլայնված վարկավորման մեխանիզմը (Extended Credit Facility - ECF), որը փոխարինում է PRGF-ին, ԱՄՀ-ի հիմնական գործիքն է՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող երկրների միջնաժամկետ ֆինանսավորմանը: Ընդլայնված վարկավորման մեխանիզմի նպատակն է վճարային հաշվեկշռի երկարաժամկետ խնդիրներ ունեցող երկրներին ֆինանսական աջակցության տրամադրում, այսինքն, երբ սպասվում է մակրոտնտեսական անհավասարակշռությունների պահպանում նաև միջնաժամկետ կամ երկարաժամկետ հորիզոնում:

Ի տարբերություն արտարժույթի գնման գործառնությունների, PRGT թրաստային ֆոնդի վարկերը ուղղակի վարկեր են: ԿԲ հաշվեկշռում դրանք արտացոլվում են առանձին հաշվով և որևէ առնչություն չունեն ԱՄՀ N 1 և արժեթղթերի հաշիվների հետ: PRGT վարկերը անդամ երկրները կարող են ստանալ ինչպես ՀՓԻ-ով, այնպես էլ այլ ազատ փոխարկելի արտարժույթով, սակայն երկու դեպքում էլ այդ վարկի գծով պարտավորությունները գրանցվում են ՀՓԻ-ով:

ՀՓԻ վարչություն

ՀՓԻ-ն եկամտաբեր միջազգային պահուստային ակտիվ է, որը պարբերաբար բաշխվում է անդամ երկրներին՝ իրենց քվոտաներին համամասնորեն: ՀՓԻ-ն տնօրինում են միայն անդամ երկրների պետական մարմինները և սահմանափակ թվով միջազգային ֆինանսական կազմակերպություններ, իսկ ՀՓԻ-ով գործառնություններն իրականացվում են միայն այդ խմբի ներսում: ՀՓԻ-ն չի համարվում ԱՄՀ պարտավորությունը, այն ԱՄՀ անդամ-երկրների կոլեկտիվ պարտավորություն է:

ՀՓԻ-ով միջոցները անվերապահ իրավունք են տալիս այն տնօրինողին՝ ԱՄՀ այլ անդամներից ձեռք բերելու ազատ փոխարկելի արտարժույթ: ԱՄՀ-ն չի կարող իրեն կամ իր կողմից լիազորված միջազգային ֆինանսական կազմակերպություններին բաշխել ՀՓԻ-ն, սակայն կարող է ձեռք բերել անդամների հետ ֆինանսական գործառնությունների միջոցով: ՀՓԻ-ն կարող է օգտագործվել բավականին լայն շրջանակների գործառնություններ իրականացնելու համար՝ ներառյալ այլ անդամների արժույթի ձեռքբերումը, ֆինանսական պարտավորությունների կարգավորումը, նվիրատվությունները, վարկերի տրամադրումը և այլն:

ՀՓԻ-ի հետ կապված գործարքներն ու գործառնությունները կատարվում են ՀՓԻ վարչության միջոցով: Այն բաշխվում է միայն ԱՄՀ այն անդամների միջև, որոնք անդամակցում են ՀՓԻ վարչությանը և կատարում են այդ վարչության անդամակցության հետ կապված պարտավորութունները: Թեև ՀՓԻ վարչությունում մասնակցությունը կամավոր է, ներկայումս նրա անդամ են ԱՄՀ բոլոր անդամ երկրները:

Ինչպես նշվել է, ՀՓԻ-ով միջոցները երկրի միջազգային պահուստների անբաժանելի մասն են: ՀՓԻ-ի տնօրինողը եկամուտ է ստանում շուկայական տոկոսադրույքով՝ ՀՓԻ-ի տոկոսադրույքով, որը ԱՄՀ-ի կողմից սահմանվում է շաբաթական կտրվածքով: Այս նույն տոկոսադրույքով տոկոսավճար է գանձվում անդամ երկրներից ՀՓԻ-ի բաշխման դիմաց: Քանի որ ՀՓԻ-ով միջոցների դիմաց ստացվող տոկոսադրույքը նույնն է, ինչ որ ՀՓԻ-ի բաշխման դիմաց վճարվող

տոկոսադրույքը, ապա անդամ երկրի ՀՓԻ-ով միջոցների և ՀՓԻ-ի բաշխման մնացորդների հավասար լինելու դեպքում տոկոսավճարները զտվում են, և փաստացի տոկոսավճարների վճարում տեղի չի ունենում: Անդամ երկիրը տոկոսավճարները ստանում կամ վճարում է զուտ դիրքի հիման վրա՝ ելնելով ՀՓԻ-ով միջոցների և ՀՓԻ-ի բաշխման մնացորդների տարբերությունից:

Աղյուսակ 3. ԱՄՀ հաշիվների հաշվապահական արտացոլումը Կենտրոնական բանկի հաշվեկշռում

Ակտիվներ	*Պարտավորություններ և կապիտալի հաշիվներ*
ՀՓԻ-ով միջոցներ ԱՄՀ-ում Վարկեր ԱՄՀ-ին ԱՄՀ քվոտայի անդամավճար	*Պարտավորություններ՝* ԱՄՀ միջոցներ դրամով • N1 հաշիվ • N2 հաշիվ • Արժեթղթերի հաշիվ •ԱՄՀ N1, N2 և արժեթղթերի հաշիվ-ների ճշգրտման հաշիվ Վարկեր ԱՄՀ-ից (PRGT) ՀՓԻ բաշխում
	Կապիտալի հաշիվներ՝ ԱՄՀ հաշիվների վերագնահատում

Այսպիսով՝ անդամ երկրների կենտրոնական բանկերի հաշվապահական հաշվեկշիռը սովորաբար ներառում է.

Ակտիվներ՝

❖ Երկրի ՀՓԻ-ով միջոցները ԱՄՀ-ում, որոնք կարող են ձեռք բերվել՝
- ԱՄՀ-ի կողմից ՀՓԻ-ի բաշխման դեպքում,
- այլ անդամ երկրի կամ ԱՄՀ-ի հետ գործառնությունների միջոցով:

❖ ԱՄՀ-ի նկատմամբ պահանջները, որոնք առաջանում են՝
- երկրի կողմից պահուստային ակտիվներով և ազգային արժույթով քվոտայի անդամավճարի վճարման դեպքում,
- երկրի կողմից ԱՄՀ-ին վարկեր տրամադրելու դեպքում:

Պարտավորություններ՝

❖ ԱՄՀ դրամով միջոցները Կենտրոնական բանկում, որոնք ներառում են ԱՄՀ N1, N2 հաշիվները և արժեթղթերի հաշիվը: Այս հաշիվների մնացորդները ձևավորվում են՝
- քվոտայի անդամավճարի՝ ազգային արժույթով մասը վճարելու դեպքում,
- ԱՄՀ-ից ազգային արժույթով ՀՓԻ կամ փոխարկելի արտարժույթ գնելու դեպքում, որոնք իրականացվում են Ընդհանուր ռեսուրսների հաշվի միջոցով:

❖ ԱՄՀ-ից ստացված ուղղակի վարկեր, որոնք տրամադրվում են ԱՄՀ-ի կողմից կառավարվող հաշիվների միջոցով (օրինակ՝ PRGT):

- ՀՓԻ բաշխում, որը ԱՄՀ-ի կողմից տրամադրվում է անդամ երկրին՝ առանց հետագայում մարման պահանջի և գրանցվում է Կենտրոնական բանկի հաշվեկշռում՝ որպես պարտավորություն[37]:
- ԱՄՀ-ին առնչվող ակտիվների և պարտավորությունների վերագնահատում, որը ԿԲ հաշվեկշռում գրանցվում է կապիտալ հաշիվներում և արտարժութային հաշիվների վերագնահատման պահուստի մի մասն է:

Ի տարբերություն հաշվապահական ներկայացման՝ Կենտրոնական բանկի և ԱՄՀ ֆինանսական գործառնությունները դրամավարկային վիճակագրության տեսանկյունից դասակարգվում են այլ մեթոդաբանությամբ: ԱՄՀ հաշիվների վիճակագրական ներկայացումը իրականացվում է՝ կենտրոնանալով այն հաշիվների վրա, որոնք արտաքին պահուստներ են և ԱՄՀ-ից ստացված վարկերի ու ՀՓԻ-ի բաշխման գծով առաջացած պարտավորություններ: Ստորև ներկայացված են ԱՄՀ հաշիվները՝ վիճակագրական դասակարգմամբ.

Աղյուսակ 4. ԱՄՀ-ին առնչվող միջազգային պահուստներ և պարտավորություններ

Ակտիվներ	*Պարտավորություններ*
ՀՓԻ-ով միջոցներ ԱՄՀ-ում Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	ԱՄՀ-ից ստացված վարկեր՝ - ԱՄՀ վարկի օգտագործում - Ուղղակի վարկեր ԱՄՀ-ից ՀՓԻ բաշխում

ԱՄՀ-ին առնչվող միջազգային պահուստներ

- ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցներն առանձին հաշվով արտացոլված են ԿԲ հաշվապահական հաշվեկշռում:
- ԱՄՀ-ում պահուստային դիրքը միջազգային պահուստների տարր է: Հաշվապահական հաշվեկշռում այն առանձին հաշվով չի արտացոլվում, սակայն դրամավարկային վիճակագրության նպատակով հաշվարկվում է ԱՄՀ մի քանի հաշիվների օգնությամբ: Երկրի պահուստային դիրքը հավասար է՝ իր քվոտայից հանած անդամ երկրի արժույթով ԱՄՀ այն միջոցները, որոնց գոյացումը կապված չէ արտարժույթի գնման գործառնությունների հետ: Ընդ որում, անդամ երկիրն անվերապահ իրավունք ունի ցանկացած պահի օգտագործելու դիրքում առկա միջոցները: Այդ միջոցների օգտագործումը չի դիտարկվում որպես ԱՄՀ վարկերի օգտագործում, ենթակա չէ վերադարձման կամ մարման և դրա դիմաց չի գանձվում որևէ տոկոսավճար: Պահուստային դիրքի միջոցները գոյանում են քվոտայի արտարժութային մասը վճարելիս և կարող են ավելանալ, եթե ԱՄՀ-ն այլ անդամ երկրների հետ գործառնությունների ժամանակ օգտագործի տվյալ երկրի արժույթը: Անդամ երկրի քվոտայի ազգային արժույթով մասը (քվոտայի 3/4-ը), չնայած անդամ երկրի արտաքին ակտիվ է, սակայն չի համարվում արտաքին պահուստ, քանի որ անդամ երկրի համար իրացվելի չէ արտաքին վճարումներ կատարելու տեսանկյունից:

Պարտավորություններ ԱՄՀ-ին

[37] *ՀՓԻ-ի դասակարգման մեջ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ, մասնավորապես ՀՓԻ բաշխումը կապիտալի հաշվից վերադասակարգվել է որպես երկարաժամկետ պարտքային պարտավորություն:*

- ❖ Որպես ԱՄՀ վարկի օգտագործում՝ գրանցվում են Ընդհանուր ռեսուրսների հաշվի (GRA) միջոցով երկրի ազգային արժույթի դիմաց ԱՄՀ-ից փաստացի ձեռք բերված միջոցները ՀՓԻ-ով կամ այլ ազատ փոխարկելի արտարժույթով:
- ❖ ԱՄՀ-ից ստացված ուղղակի վարկերում ընդգրկվում են Կառավարվող հաշիվ հանդիսացող PRGT թրաստային ֆոնդի միջոցով անդամ երկրներին տրամադրվող վարկերը, որոնք առանձին հաշվով արտացոլված են Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվեկշռում:
- ❖ ՀՓԻ բաշխումը, որն առանձին հաշվով արտացոլված է ԿԲ հաշվապահական հաշվեկշռում, երկարաժամկետ արտաքին պարտավորություն է: ՀՓԻ բաշխումը սահմանված մարման ժամկետ չունի, սակայն այն ԱՄՀ-ի կողմից կարող է չեղարկվել կամ հետ կանչվել, չնայած որ մինչ օրս այդպիսի դեպք տեղի չի ունեցել: Նախկինում դրամավարկային վիճակագրությունում ՀՓԻ բաշխումը համարվում էր կապիտալի տարր և դասակարգվում էր «Բաժնետոմսեր և այլ փայաբաժիններ» հոդվածում: 2009թ. օգոստոսին ՀՓԻ-ի դասակարգման մեջ տեղի ունեցան փոփոխություններ, համաձայն որի՝ ՀՓԻ բաշխումը դիտարկվում է որպես երկարաժամկետ պարտավորություն ոչ ռեզիդենտների նկատմամբ:

7. Միջազգային պահուստների և զուտ արտաքին ակտիվների հաշվարկման առանձնահատկությունները[38]

7.1 ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին ակտիվներ

ՀՀ ԿԲ համախառն արտաքին ակտիվները սահմանվում են՝ հիմնվելով ռեզիդենտության սկզբունքի վրա: Ոչ ռեզիդենտների հանդեպ ԿԲ բոլոր ֆինանսական պահանջները ընդգրկվում են համախառն արտաքին ակտիվներում: Ի տարբերություն արտաքին ակտիվների՝ միջազգային պահուստները արտաքին ակտիվների առավել իրացվելի մասն են կազմում, որոնք տնօրինվում են Կենտրոնական բանկի կողմից և կարող են օգտագործվել արտաքին կամ ներքին վճարումների ուղղակի ֆինանսավորման համար:

ԱՄՀ *Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի* վեցերորդ հրատարակությունում (2009թ.) տրված սահմանման համաձայն՝ երկրի միջազգային պահուստները «այն արտաքին ակտիվներն են, որոնք գտնվում են դրամավարկային կարգավորման մարմինների[39] հսկողության ներքո և ցանկացած պահի կարող են օգտագործվել վճարային հաշվեկշռի ֆինանսավորման համար, արժութային շուկայում ինտերվենցիաներ իրականացնելու համար՝ փոխարժեքի կտրուկ տատանումները մեղմելու նպատակով, ինչպես նաև այլ նմանատիպ նպատակներով»: Սահմանումից հետևում է, որ երկրի միջազգային պահուստները պետք է բավարարեն երեք պայմանների. 1) հանդիսանան ԿԲ արտաքին ակտիվներ, այսինքն՝ լինեն ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջներ, 2) գտնվեն ԿԲ հսկողության ներքո և ցանկացած պահի հնարավոր լինի դրանք օգտագործել, 3) լինեն բավականաչափ իրացվելի ֆինանսական ակտիվներ:

Միջազգային պահուստների տեսանկյունից կարևոր է միջազգային իրացվելիություն հասկացությունը, որի ներքո կարևորվում է ակտիվների՝ արտահայտման արժույթները, և այդ համատեքստում ակտիվները կարող են արտահայտվել ազատ փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթներով, ինչպես նաև ՀՀ դրամով:

[38] *Տես նաև հավելվածներ 2.1 և 2.2-ի աղյուսակ 1-ը, ինչպես նաև ՀՀ ԿԲ ֆինանսական տնօրենի և վիճակագրության վարչության պետի կողմից 2024թ. սեպտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ կենտրոնական բանկի արտաքին ակտիվների, արտաքին պարտավորությունների, ՀՀ միջազգային պահուստների վիճակի և կազմի վերաբերյալ տեղեկատվության հաշվարկման» կարգը:*

[39] *Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Կենտրոնական բանկի:*

Կարևոր է նաև միջազգային պահուստների՝ «ցանկացած պահին վճարային հաշվեկշռի ֆինանսավորման նպատակով օգտագործելու» հնարավորությունը, որը նույնպես ենթադրում է, որ դրանք պետք է արտահայտված լինեն փոխարկելի արտարժույթներով և լինեն բարձր իրացվելի, որպեսզի ազատ օգտագործվեն արտաքին գործառնություններ իրականացնելիս: Հետևաբար, հաշվի առնելով վերը նշվածը՝ միջազգային պահուստներում ընդգրկվում են միայն ազատ փոխարկելի արտարժույթներով ակտիվները, որոնց շարքին են սովորաբար դասվում ՀՓԻ-ն և դրա զամբյուղում ընդգրկված արժույթները, ինչպես նաև շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը և ավստրալիական դոլարը: Միջազգային պահուստներում կարող են ընդգրկվել նաև այլ արժույթներ, որոնք լայնորեն օգտագործվում են միջազգային գործարքների համար վճարումներ իրականացնելիս և ազատ շրջանառվում են արտարժույթի փոխարկման միջազգային հիմնական հարթակներում: Մոնետար ոսկին ևս համարվում է ազատ փոխարկելի ֆինանսական ակտիվ և ընդգրկվում է միջազգային պահուստների կազմում:

Այսպիսով՝ ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստները միայն ազատ փոխարկելի արտարժույթով արտահայտված իրացվելի արտաքին ակտիվներն են, այսինքն՝ բոլոր արտաքին ակտիվների հանրագումարը՝ բացի ոչ փոխարկելի և դրամային արտաքին ակտիվներից, ինչպես նաև բացի ոչ իրացվելի գործիքներով արտահայտված արտաքին ակտիվներից:

Միջազգային պահուստները բաղկացած են հետևյալ տարրերից.

1. Ոսկի,
2. ՀՓԻ-ով միջոցներ ԱՄՀ-ում,
3. ԱՄՀ-ում պահուստային դիրք,
4. Այլ արտարժութային ակտիվներ:

Ոսկի՝ Ընդգրկում է դրամավարկային կարգավորման մարմինների կողմից տնօրինվող մոնետար ոսկին, որը ներառված է միջազգային պահուստների կազմում: Մոնետար ոսկին ընդգրկում է ոսկու ստանդարտացված ձուլակտորները (ներառյալ տեղաբաշխված ոսկու հաշիվներում պահվող ոսկին) և ոչ ռեզիդենտների մոտ չտեղաբաշխված ոսկու հաշիվները, որոնք ոսկու մատակարարման նկատմամբ պահանջի իրավունք են տալիս[40]: Այսպիսով՝ մոնետար ոսկին ընդգրկում է Կենտրոնական բանկի դրամապահոցում առկա և տեղաբաշխված ոսկու հաշիվներում պահվող ոսկու ստանդարտ ձուլակտորները, որոնց մաքրության աստիճանը պետք է լինի առնվազն 995/1000, ինչպես նաև օտարերկրյա առաջնակարգ բանկերի մետաղական հաշիվներում գտնվող ոսկին և ոսկով ավանդները ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններում: Ոսկին ֆինանսական գործիք է հանդիսանում՝ ելնելով միջազգային արժութային համակարգում դրա ունեցած պատմական դերից և միջազգային շուկաներում իրացվելիության բարձր աստիճանից: Կենտրոնական բանկում առկա ոսկու ոչ ստանդարտ ձուլակտորները մոնետար ոսկի չեն համարվում և ընդգրկվում են ոչ ֆինանսական ակտիվներում: Այլ թանկարժեք մետաղների ստանդարտ ու ոչ ստանդարտ ձուլակտորները ևս ոչ ֆինանսական ակտիվներ են համարվում՝ չներառվելով միջազգային պահուստներում: Ի տարբերություն մյուս տեսակի ֆինանսական ակտիվների՝ մոնետար ոսկու մեջ ընդգրկված ոսկու ստանդարտացված ձուլակտորները չեն հանդիսանում պահանջ որևէ այլ կողմի նկատմամբ, սակայն կարող են ցանկացած պահի վերածվել ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջների, այսինքն՝ փոխարկվել որևէ ոչ ռեզիդենտ կենտրոնական բանկի կողմից թողարկված արտարժույթի:

ՀՓԻ-ով միջոցներ ԱՄՀ-ում՝ ՀՓԻ-ն ԱՄՀ-ի կողմից թողարկված և անդամ երկրների միջև բաշխված միջազգային պահուստային ակտիվներ են՝ անդամ երկրների առկա միջազգային պահուստները համալրելու նպատակով: ՀՓԻ-ով միջոցները իրենցից ներկայացնում են ԱՄՀ այլ անդամ երկրներից ազատ

[40] *Մոնետար ոսկու նկարագիրը մանրամասն տրված է «Ֆինանսական գործիքներ» բաժնում:*

փոխարկելի արտարժույթ ձեռք բերելու երաշխավորված և անառարկելի իրավունք: ՀՓԻ-ն չի համարվում Արժույթի միջազգային հիմնադրամի պարտավորություն, այլ ՀՓԻ վարչության մասնակից անդամ երկրների միասնական կոլեկտիվ պարտավորություն է[41]:

ԱՄՀ-ում պահուստային դիրքը ՀՓԻ-ով արտահայտված գումար է, որի չափով երկրի քվոտան գերազանցում է ԱՄՀ-ի կողմից տնօրինվող ազգային արժույթով այն միջոցները, որոնց գոյացումը կապված չէ արտարժույթի գնման գործառնությունների հետ[42]: Պահուստային դիրքի միջոցները գոյանում են քվոտայի արտարժութային մասը վճարելիս և կարող են ավելանալ, եթե ԱՄՀ-ն տվյալ երկրի արժույթը օգտագործում է այլ անդամ երկրների հետ գործառնությունների ժամանակ: Անդամ երկիրն անվերապահ իրավունք ունի ցանկացած պահի օգտագործելու դիրքում առկա միջոցները: Ընդ որում, այդ միջոցների օգտագործումը չի դիտարկվում որպես ԱՄՀ վարկերի օգտագործում, ենթակա չէ վերադարձման կամ մարման, և դրա դիմաց չի գանձվում որևէ տոկոսավճար:

Այլ արտարժութային ակտիվներում ընդգրկվում են մի շարք ֆինանսական ակտիվներ, որոնց՝ միջազգային պահուստներում ներառելը կախված է ԿԲ-ի կողմից դրանք օգտագործելու հնարավորության աստիճանից: ՀՀ պարագայում ներքոհիշյալ ակտիվները պետք է արտահայտված լինեն հետևյալ ազատ փոխարկելի արտարժույթներով՝ ԱՄՆ դոլար, անգլիական ֆունտ ստեռլինգ, եվրո, ճապոնական իեն, չինական յուան, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար և ավստրալիական դոլար.

- *Կանխիկ արտարժույթ*՝ Ընդգրկում է ԿԲ-ի կողմից տնօրինվող օտարերկրյա դրամանիշերը՝ արտահայտված թղթադրամների և մետաղադրամների ձևով, որոնք օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում գտնվում են շրջանառության մեջ և օրինական վճարման միջոց են, ինչպես նաև հանված են կամ հանվում են շրջանառությունից, բայց ենթակա են փոխանակման շրջանառության մեջ գտնվող դրամանիշներով: Կանխիկ արտարժույթը հանդիսանում է պահանջ այն թողարկած պետության կամ կենտրոնական բանկի նկատմամբ: Օտարերկրյա պետությունների՝ շրջա-նառությունից հանված թղթադրամներն ու մետաղադրամները, ինչպես նաև բոլոր տեսակի հուշադրամները միջազգային պահուստներում չեն ընդգրկվում:
- *Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում*՝ ընդգրկում է օտարերկրյա առաջնակարգ բանկերում ԿԲ թղթակցային հաշիվների արտարժութային մնացորդները:
- *Ավանդներ*՝ ընդգրկում է ԿԲ բոլոր ավանդները օտարերկրյա առաջնակարգ ֆինանսական կազմակերպություններում (այդ թվում՝ բանկերում), որոնք պահանջներ են այդ կազմակերպությունների նկատմամբ: Սառեցված և սահմանափակ օգտագործելի ավանդները միջազգային պահուստներում չեն ընդգրկվում:
- *Արժեթղթեր*՝ միջազգային պահուստներում ներառվում են միայն ոչ ռեզիդենտների կողմից թողարկված բարձր իրացվելի պարտատոմսերն ու բաժնետոմսերը, որոնց թվում ընդգրկվում են՝ ա) արտարժույթով արտահայտված հասարակ և փոխանցվող մուրհակները, բ) այլ պետու-թյունների կառավարությունների, կենտրոնական բանկերի կամ այլ առաջնակարգ բանկերի կամ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված կամ երաշխավորված պարտատոմսերը:

---

[41] *Նախկինում, համաձայն «Ազգային հաշիվների համակարգ» (SNA1993), ԱՄՀ «Վճարային հաշվեկշիռ» (BPM5) և «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն» (MFSM 2000) ձեռնարկների, ՀՓԻ-ն դասակարգվում էր որպես ֆինանսական ակտիվ առանց համապատասխան ֆինանսական պարտավորության, այսինքն՝ ֆինանսական ակտիվ առանց պահանջի որևէ այլ կողմի նկատմամբ:*

[42] *Բացառությամբ՝ պահուստային դիրքի միջոցների գնումների:*

- Ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված արտարժութային *ռեպո համաձայնագրերը*, ինչպես նաև այդ կազմակերպություններին *հավատարմագրային կառավարման* տրամադրված միջոցները ևս ընդգրկվում են միջազգային պահուստներում, եթե ռեպո արժեթղթերը բավականաչափ իրացվելի են, իսկ հավատարմագրային կառավարման հանձնված միջոցները, ցանկության դեպքում, շատ կարճ ժամանակահատված հետո կարող են օգտագործվել ԿԲ-ի կողմից վճարումներ իրականացնելու համար:
- Ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների հետ արտարժույթով կնքված բարձր իրացվելի *ֆինանսական ածանցյալ գործիքները*, որոնք միջազգային պահուստներում արարտացոլվում են զուտ շուկայական արժեքով:
- *Վարկեր*՝ միջազգային պահուստներում ընդգրկվում են օտարերկրյա առաջնակարգ բանկերին և ոչ բանկային կազմակերպություններին միայն արտարժույթով տրամադրված կարճաժամկետ վարկերը և օվերդրաֆտների օգտագործված գումարները, որոնք պետք է պահանջի ներկայացման դեպքում մարվեն: Այս կատեգորիայում ընդգրկվում են նաև ԿԲ-ի կողմից առևտրային վարկի տեսքով ոչ ռեզիդենտներին արտարժույթով տրված կարճաժամկետ գումարները և այլ տիպի կարճաժամկետ ստացվելիք հաշիվները: Երկարաժամկետ վարկերն ու ստացվելիք հաշիվները միջազգային պահուստներում չեն ներառվում:

7.2 ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պարտավորություններ

Համախառն արտաքին պարտավորությունները ոչ ռեզիդենտների բոլոր պահանջներն են Կենտրոնական բանկի նկատմամբ: Ինչպես և արտաքին ակտիվների դեպքում, այդ պահանջները կարող են արտահայտված լինել ազատ փոխարկելի, ոչ փոխարկելի արտարժույթներով և ՀՀ դրամով: Սակայն արտաքին պարտավորություններում ընդգրկվում են ոչ միայն փոխարկելի արտարժույթով, այլ նաև ՀՀ դրամով արտահայտված պարտավորությունները: Վերջինս ևս կարելի է դիտարկել որպես փոխարկելի, քանի որ ի տարբերություն ոչ ռեզիդենտների նկատմամբ դրամով արտաքին պահանջների, դրամով արտաքին պարտավորությունները բավականաչափ իրացվելի են ՀՀ-ում, առավել ևս, եթե դրանք Կենտրոնական բանկի պարտավորություններն են: Այսպիսով՝ ԿԲ դրամային արտաքին պարտավորությունները հավասարազոր են փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորություններին, քանի որ ցանկացած պահի կարող են փոխարկվել ազատ փոխարկելի արտարժույթի:

Չնայած արտաքին իրացվելիությունը իրատեսորեն արտացոլելու համար նպատակահարմար է արտաքին պարտավորությունների հաշվարկում ընդգրկել միայն կարճաժամկետ (մինչև մեկ տարի ժամկետայնությամբ) արտաքին պարտավորությունները և երկարաժամկետ պարտավորությունների՝ առաջիկա մեկ տարվա ընթացքում մարվող մասը, սակայն որպես ԿԲ արտաքին պարտավորություններ դիտարկվում են բոլոր պարտավորությունները ոչ ռեզիդենտներին: Եթե հաշվի առնենք, որ ԿԲ-ն իր միջազգային պահուստներով սպասարկում է նաև Կառավարության արտաքին վարկերը, ապա նման պահպանողական մոտեցումը կարելի է ընդունելի համարել:

Այսպիսով՝ արտաքին պարտավորություններում, որն անվանում են նաև միջազգային պահուստների հետ կապված պարտավորություններ (reserve-related liabilities), ընդգրկվում են.

1. ԱՄՀ-ից ստացված բոլոր վարկերը (ինչպես ուղղակի վարկերը, այնպես էլ արտարժույթի գնումները),

2. ՀՓԻ բաշխումը,
3. Ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվները ԿԲ-ում,
4. Ոչ ռեզիդենտների ավանդները ԿԲ-ում,
5. Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և օվերդրաֆտները,
6. Ոչ ռեզիդենտների նկատմամբ այլ պարտավորությունները:

ԱՄՀ-ից ստացված վարկեր՝ ընդգրկվում են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Կենտրոնական բանկին տրամադրված վարկերը:

ՀՓԻ բաշխում՝ ընդգրկվում են ԱՄՀ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված ՀՓԻ-ն[43]: Կենտրոնական բանկի հաշվեկշռում այն գրանցվում է որպես երկարաժամկետ արտաքին պարտավորություն ոչ ռեզիդենտներին[44]: Ընդ որում, ՀՓԻ բաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, այն ենթակա է մարման որոշակի դեպքերում, ինչպես, օրինակ, ԱՄՀ-ի կողմից ՀՓԻ-ի հետկանչում (չեղարկում), ՀՓԻ վարչությունում երկրի մասնակցության դադարեցում կամ ՀՓԻ վարչության լուծարում:

Ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվներ՝ ընդգրկվում են ԿԲ-ում օտարերկրյա բանկերի բոլոր թղթակցային հաշիվները:

Ոչ ռեզիդենտների ավանդներ՝ ընդգրկվում են ԿԲ-ում ոչ ռեզիդենտ բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների բոլոր ավանդները:

Վարկեր ոչ ռեզիդենտ բանկերից՝ ընդգրկվում են օտարերկրյա բանկերի կողմից ԿԲ-ին տրամադրված բոլոր վարկերը և օվերդրաֆտների օգտագործված գումարները:

Ոչ ռեզիդենտների նկատմամբ այլ պարտավորություններ՝ ընդգրկվում են օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների և բանկերի հետ կնքված հակադարձ ռեպո համաձայնագրերը, ոչ ռեզիդենտներին վճարվելիք հաշիվները և բոլոր այլ պարտավորությունները ոչ ռեզիդենտների հանդեպ:

7.3 ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներ

Արտաքին աշխարհի նկատմամբ Կենտրոնական բանկի դիրքը արտացոլելու նպատակով դիտարկվում են Զուտ արտաքին ակտիվները (ԶԱԱ), որոնք իրենցից ներկայացնում են արտաքին ակտիվների և արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶԱԱ-երի ցուցանիշը բացահայտում է արտաքին հատվածի գործոնների ազդեցությունը ներքին դրամավարկային ոլորտի վրա: Այն թույլ է տալիս գնահատելու փողի բազայի առաջացումը՝ պայմանավորված ԿԲ-ի կողմից զուտ արտաքին ակտիվների ձեռքբերմամբ:

ՀՀ ԶԱԱ-երի հաշվարկն ունի որոշ առանձնահատկություններ: Տարբեր նպատակներով հաշվարկվում են ԶԱԱ մի քանի ցուցանիշներ.

- Ընդհանուր ԶԱԱ՝ ԿԲ բոլոր արտաքին ակտիվների և արտաքին պարտավորությունների տարբերությունը,
- Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ)՝ ԿԲ միջազգային պահուստների (այսինքն՝ ազատ փոխարկելի արտարժույթներով արտաքին ակտիվների) և

[43] *ՀՓԻ բաշխումը Հայաստանի Հանրապետությանը առաջին անգամ տեղի է ունեցել 2009 թվականի օգոստոսին, իսկ հերթական բաշխումը՝ 2021 թվականի օգոստոսին:*

[44] *ՀՓԻ-ի դասակարգման մեջ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ, մասնավորապես, նախկինում ՀՓԻ բաշխումը համարվում էր կապիտալի տարր և դասակարգվում էր «Բաժնետոմսեր և այլ փայաբաժիններ» հոդվածում, իսկ 2009թ. օգոստոսից այն վերադասակարգվել է որպես երկարաժամկետ պարտքային պարտավորություն:*

ազատ փոխարկելի արտարժույթներով ու ՀՀ դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:

7.4 Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակ

Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակը մշակվել է ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի շրջանակներում (ՏՏՀՉ) և նպատակ ունի գնահատել անդամ երկրների արտարժութային դիրքն ու իրացվելիությունը: Ի տարբերություն երկրի միջազգային պահուստների, միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակում արտարժութային ակտիվներն ավելի մանրամասն են ներկայացվում, ընդ որում, ներկայացվում են նաև այդ ակտիվների և պարտավորությունների՝ մեկ տարվա ընթացքում նախատեսվող հոսքերը: Եթե միջազգային պահուստային ակտիվները պահանջներ են ոչ ռեզիդենտների նկատմամբ, ապա միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակը ընդգրկում է և՛ ռեզիդենտների, և՛ ոչ ռեզիդենտների նկատմամբ արտարժույթով պահանջները: Ի տարբերություն միջազգային պահուստների, որը կազմվում է ԿԲ հաշվեկշռային տվյալների հիման վրա, միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակը կազմվում է ինչպես ԿԲ հաշվեկշռային, այնպես էլ արտահաշվեկշռային տվյալների և կառավարության արտաքին հոսքերի հիման վրա:

Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակում արտացոլվում են միայն փոխարկելի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվները: Ակտիվների հաշվառումն իրականացվում է կուտակման (հաշվեգրման) սկզբունքով, այսինքն՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի գծով հաշվարկված տոկոսները ցույց են տրվում գործիքի հետ մեկտեղ:

Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակը բաղկացած է չորս բաժիններից, որոնք ներկայացվում են առանձին աղյուսակների տեսքով: Առաջին բաժնում ներկայացվում են երկրի արտարժութային ակտիվները, երկրորդ բաժնում՝ կանխատեսված հոսքերը (ինչպես արտահոսքերը, այնպես էլ ներհոսքերը), երրորդ բաժնում՝ պայմանական հոսքերը, չորրորդ բաժինը պարունակում է տեղեկատու հոդվածներ:

Աղյուսակ I. Պաշտոնական պահուստային ակտիվներ և այլ արտարժութային ակտիվներ[45]

Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակի առաջին բաժինը՝ Պաշտոնական պահուստային ակտիվներ և այլ արտարժութային ակտիվներ, բաղկացած է երկու մասից՝ Պաշտոնական պահուստային ակտիվներ և Այլ արտարժութային ակտիվներ:

Մաս 1. Պաշտոնական պահուստային ակտիվներ

Պաշտոնական պահուստային ակտիվների սահմանումը համապատասխանում է ԱՄՀ *Վճարային հաշվեկշռի ձեռնարկում* (6-րդ հրատարակություն) տրված միջազգային պահուստների սահմանմանը (տե՛ս 7.1 կետը):

Աղյուսակի այս մասը կազմվում է ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա, և ընդհանուր գումարը համապատասխանում է հավելված 2.1-ում ներկայացված «Միջազգային պահուստներ» աղյուսակի «Համա-

[45] *Տե՛ս հավելված 2.2-ի աղյուսակ 1-ը:*

խառն միջազգային պահուստներ» տողին: Բոլոր գործիքների հաշվառման և ներկայացման սկբունքները համապատասխանում են սույն բաժնի 7.1. «ՀՀ ԿԲ համախառն արտաքին ակտիվներ» կետում յուրաքանչյուր առանձին գործիքի համար տրված մեկնաբանություններին: Առանձին գործիքների գծով համապատասխան հոդվածները ներկայացվում են ավելի մանրամասն: Մասնավորապես, «Արժեթղթեր» ենթաբաժնում առանձին հոդվածով ցույց են տրվում արտերկրում գտնվող այն ձեռնարկությունների կամ կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերը, որոնց գլխամասը գտնվում է ՀՀ տարածքում: «Կանխիկ արտարժույթ և ավանդներ» ենթաբաժնում առանձին տողով ցույց են տրվում այլ երկրների կենտրոնական բանկերի, Հաշվարկների միջազգային բանկի (BIS) և ԱՄՀ-ի նկատմամբ ընդհանուր պահանջները (կանխիկի կամ ավանդների տեսքով): Որպես այլ երկրների կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջ՝ այս տողում է ընդգրկվում նաև ԿԲ-ի կողմից տնօրինվող կանխիկ արտարժույթը: Առանձնացվում են նաև տվյալ երկրից դուրս և տվյալ երկրում գլխամաս ունեցող բանկերի նկատմամբ պահանջները: Ընդ որում, Հայաստանի դեպքում այս հոդվածում ընդգրկված բոլոր պահանջները ՀՀ-ից դուրս գլխամաս ունեցող բանկերի նկատմամբ են, քանի որ ներառվում են միայն ոչ ռեզիդենտ բանկերում տեղաբաշխված ավանդներն ու թղթակցային հաշիվները: Մինչև 2007 թվականի հոկտեմբեր ամիսը ոչ ռեզիդենտ առաջնակարգ ֆինանսական կազմակերպություններին հավատարմագրային կառավարման հանձնված միջոցներն ամբողջությամբ ներառվում էին «Կանխիկ և ավանդներ» հոդվածում, իսկ 2007 թվականի նոյեմբերից սկսած՝ տարանջատվում են ըստ գործիքների և ներառվում համապատասխան գործիքի խմբում: Տարանջատումը ըստ գործիքների իրականացվում է հավատարմագրային կառավարիչների կողմից տրամադրված հաշվետվությունների հիման վրա:

«Ոսկի» հոդվածում առանձին տողով ցույց է տրվում նաև ոսկու փաստացի քանակը մլն տրոյական ունցիաներով:

«Այլ պահուստային ակտիվներում» ներառվում են երկրի պաշտոնական միջազգային պահուստներում ընդգրկված բարձր իրացվելի ակտիվները, որոնք ներկայացված չեն մյուս հոդվածներում: Այս կատեգորիայում ընդգրկվում են նաև ԿԲ-ի կողմից ոչ ռեզիդենտներին արտարժույթով տրված վարկերը կամ առևտրային վարկի տեսքով տրված կարճաժամկետ գումարները, ոչ ռեզիդենտներին տրամադրված օվերդրաֆտները, ոչ ռեզիդենտների հետ կնքված ֆինանսական ածանցյալները (գնահատված զուտ շուկայական արժեքով), ոչ ռեզիդենտների դեբիտորական պարտավորությունները ֆինանսական գործառնությունների գծով, ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված արտարժութային ռեպո համաձայնագրերը և այլն:

Մաս 2. Այլ արտարժութային ակտիվներ

Այլ արտարժութային ակտիվներում ընդգրկվում են այն արտարժութային ակտիվները, որոնք չեն ներառվում միջազգային պահուստների մեջ, այսինքն՝ չեն համապատասխանում միջազգային պահուստների սահմանմանը: Դրանք թեև բարձր իրացվելի են և արտահայտված են ազատ փոխարկելի արժույթով, սակայն, ի տարբերություն միջազգային պահուստների, կարող են լինել նաև պահանջներ ռեզիդենտների նկատմամբ: Այդպիսի ակտիվների օրինակներ են ռեզիդենտ բանկերում գտնվող ավանդային և թղթակցային հաշիվներն արտարժույթով, ֆինանսական շուկաներում գործառնությունների նպատակով պահվող ոսկին, ռեզիդենտների՝ արտարժութային արժեթղթերում ներդրումները, ռեզիդենտների հետ կնքված ֆինանսական ածանցյալները (հավելված 2.2 աղյուսակ 1):

Բաժնում գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ռեզիդենտ բանկերի հետ իրականացված սվոփ գործառնություններից ստացվելիք արտարժույթը, միջանկյալ հաշիվները և նմանատիպ այլ պահանջներ: Այս մասի տվյալները ևս ստացվում են ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռի հիման վրա:

Աղյուսակ 2. Արտարժութային ակտիվներով նախատեսված կարճաժամկետ զուտ հոսքեր (անվանական արժեքով) [46]

Երկրորդ աղյուսակը նախատեսված է փոխարկելի արտարժույթով պաշտոնական ներհոսքերի և արտահոսքերի արտացոլման համար, ինչը առաջիկա կարճ ժամանակի ընթացքում (մեկ տարի) երկրի պաշտոնական միջազգային պահուստների փոփոխությունները գնահատելու նպատակ ունի: Աղյուսակը նախատեսում է այդ հոսքերը տարանջատել ըստ ժամկետայնության՝ մինչև մեկ ամիս ժամկետում նախատեսվող հոսքեր, երկուսից երեք ամիս ժամկետում նախատեսվող հոսքեր և երեք ամսից մինչև մեկ տարի ժամկետում նախատեսվող հոսքեր: Հոսքերը պետք է ցույց տրվեն իրենց անվանական արժեքով, այսինքն՝ այն արժեքով, որը նախատեսված է, որ պետք է վճարվի կամ ստացվի: Հոսքերի մեջ չեն ընդգրկվում առաջին աղյուսակում ցույց տրված ակտիվների հաշվեգրված տոկոսները, քանի որ այդ հաշիվներն արդեն ընդգրկված են առաջին աղյուսակում՝ յուրաքանչյուր գործիքի հետ միասին:

Աղյուսակը բաժանված է մի քանի հոդվածների, որոնցից յուրաքանչյուրում առանձին ցույց են տրվում ներհոսքը (ֆինանսական ածանցյալների համար՝ երկար դիրքը) և արտահոսքը (ֆինանսական ածանցյալների համար՝ կարճ դիրքը):

«Արտարժույթով վարկեր, ավանդներ և արժեթղթեր» հոդվածի՝ արտահոսքի մասում գրանցվում են ինչպես կենտրոնական բանկի, այնպես էլ կառավարության կողմից արտարժույթով ստացված վարկերի, ավանդների և թողարկված արժեթղթերի դիմաց իրականացվող սպասարկումը:

«Արտարժույթով վարկեր, ավանդներ և արժեթղթեր» հոդվածի՝ ներհոսքի մասում գրանցվում են ինչպես կենտրոնական բանկի, այնպես էլ կառավարության կողմից արտարժույթով տրված վարկերի մոտակա մեկ տարվա ընթացքում ստացվելիք մարումները, ինչպես նաև տոկոսավճարները:

ՀՀ պետական վարկերի (տրված և ստացված) գծով պարտքի սպասարկման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարությունը: ՀՀ կենտրոնական բանկի պարտքի վերաբերյալ տվյալները հաշվարկվում են՝ օգտագործելով ԱՄՀ ինտերնետային կայքը և համապատասխան վարկային պայմանագրերը: Պարտքի սպասարկման ապագա վճարների վերաբերյալ հաշվարկները կատարվում են հաշվետու ամսվա վերջի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս հոդվածում ներառվում են նաև ԿԲ-ում առևտրային բանկերի արտարժույթով թղթակցային հաշիվների մնացորդը:

ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստավորման ենթակա արտարժույթով գումարները ներառվում են այս հոդվածում, քանի որ այս գումարները կարող են դուրս հոսել միջազգային պահուստներից՝ եթե արտարժութային ավանդները առևտրային բանկերում նվազեն: Ռիսկերը չթերագնահատելու նպատակով պարտադիր պահուստավորման գծով բոլոր հոսքերը պետք է ներառվեն մինչև մեկ ամիս ժամկետայնություն ունեցող հոսքերի մեջ: Պարտադիր պահուստավորման ենթակա արտարժույթով գումարների վերաբերյալ տվյալները ստացվում են Կենտրոնական բանկի հաշվեկշռից և բանկերի հաշվետվություններից:

«Ազգային արժույթի նկատմամբ արտարժութային ֆորվարդների և ֆյուչերսների կարճ և երկար համախառն դիրքեր (ներառյալ արտարժութային սվոփների ֆորվարդային բաղադրիչը)» հոդվածում նշվում են ածանցյալ այն գործիքները, որոնց հետ կապված արտարժութային հոսքերը կանխորոշված են: Դրանք են ֆորվարդները, ֆյուչերսները և սվոփները: Օպցիոնները ավելի բարդ գործիքներ են, որոնց հետ կապված հոսքերը կարող են տեղի ունենալ կամ ոչ՝ կախված որոշակի պայմաններից: Կարճ դիրքը վերաբերում է այն ածանցյալներին, որոնք առաջացնելու են արտահոսք, երկար դիրքը՝ այն ածանցյալներին, որոնց գծով

[46] *Տե՛ս հավելված 2.2-ի աղյուսակ 2-ը:*

սպասվում է ներհոսք:

Այլ հոսքերի մեջ ներառվում են ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության տարբեր գործառնություններ՝ ակրեդիտիվները, միջազգային տարբեր կազմակերպություններին տրվող անդամակցության վճարները, բաժանորդագրությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալին և այլն: Անդամավճարների մասին տեղեկատվությունը ստացվում է ՀՀ ֆինանսների նախարարությունից: Այլ հոսքերի մեջ կարող են ներառվել նաև ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության տարբեր գործառնություններ, որոնցից են՝ ռեպո գործարքները, եթե դրանց դիմաց տրված արժեթղթերը չեն նվազեցվել պահուստների գումարից, և հակադարձ ռեպո գործառնությունները, եթե դրանց գծով ստացված արժեթղթերի գումարը ներառվել է պահուստների կազմում:

Աղյուսակ 3. Արտարժութային ակտիվների պայմանական կարճաժամկետ զուտ հոսքեր (անվանական արժեք)[47]

Երրորդ աղյուսակում ներառվում են այն բոլոր արտարժութային հոսքերը, որոնց իրականացումը կախված է որոշակի պայմաններից, այսինքն՝ պայմանական գործիքները (տե՛ս 3.10 կետը): Նման ակտիվները աղյուսակում բաժանված են ըստ հետևյալ խմբերի՝

- արտարժույթով պայմանական պարտավորություններ, որոնք ընդգրկում են ՀՀ կենտրոնական բանկի և կառավարության երաշխիքները, ակրեդիտիվները և նմանատիպ այլ պարտավորությունները,
- ներդրված օպցիոններով արժեթղթեր: Այս արժեթղթերի դեպքում սեփականատերը թողարկումից որոշակի ժամանակ անց կարող է մարել իր արժեթուղթը,
- չօգտագործված անվերապահ վարկային գծերը,
- ազգային արժույթի նկատմամբ արտարժութային օպցիոնների կարճ (արտահոսք) և երկար (ներհոսք) դիրքերը:

Չօգտագործված անվերապահ վարկային գծերը արտարժութային վարկային գծերն են, որոնք անվերապահորեն կարող են օգտագործվել անմիջապես: Աղյուսակում այս վարկային գծերը տարանջատվում են երկու մասի՝ երկրի դրամավարկային կարգավորման մարմինների կողմից տրամադրված և նրանց տրված վարկային գծեր: Սրանցից յուրաքանչյուրը տարանջատվում է ըստ վարկային գիծ տրամադրողի (ստացողի)՝ այլ երկրների կենտրոնական բանկեր, Հաշվարկների միջազգային բանկ, ԱՄՀ, գլխամասը ՀՀ-ում գտնվող բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ, գլխամասը ՀՀ-ից դուրս գտնվող բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ:

«Ազգային արժույթի նկատմամբ արտարժութային օպցիոնների համախառն կարճ և երկար դիրքեր» հոդվածում գրանցվում են օպցիոնների հետ կապված հնարավոր հոսքերը: Երկար դիրքերում ցույց է տրվում օպցիոնների հետ կապված հնարավոր ներհոսքը, կարճ դիրքերում՝ արտահոսքը:

Բացի այդ, աղյուսակը ենթադրում է ստրես-թեստի անցկացում այն օպցիոնների համար, որոնք տվյալ (կամ ենթադրյալ) փոխարժեքի դեպքում կիրականանան: Ստրես-թեստը վերաբերում է օպցիոնների հետ կապված հնարավոր ներհոսքին և արտահոսքին՝ պայմանավորված փոխարժեքի տարբեր փոփոխություններով:

Այս աղյուսակում ընդգրկվում են ՀՀ կենտրոնական բանկի և կառավարության կողմից տրված արտարժութային երաշխիքների մինչև մեկ տարի ժամանակահատվածում ընկնող պարտավորությունների մասը: Տվյալները ստացվում են ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռից, արտահաշվեկշռից և ՀՀ

[47] *Տե՛ս հավելված 2.2-ի աղյուսակ 3-ը:*

ֆինանսների նախարարությունից:

Աղյուսակ 4. Տեղեկատու հոդվածներ [48]

Այս աղյուսակը նպատակ ունի արտացոլել ուսումնասիրողի համար հատուկ նշանակություն ունեցող տվյալները՝ տարանջատել ակտիվները ըստ որոշակի հատկանիշների, հատկապես ցույց տալ դրամավարկային կարգավորման մարմինների և կենտրոնական կառավարության սահմանափակ օգտագործման հնարավորությամբ կամ ժամանակավոր օգտագործման իրավունքով տնօրինվող ակտիվները: Առաջին հերթին դա վերաբերում է գրավադրված արժեքներին և ռեպո գործարքներում ներառված արժեթղթերին: Վերջիններս նախատեսվում է տարանջատել ըստ այն փաստի, թե այդ արժեթղթերը պահուստային ակտիվներում ընդգրկվել են, թե ոչ, կամ նվազեցվել են արժեթղթերից, թե ոչ: Նախատեսվում է տարանջատել նաև այն ածանցյալները, որոնց համար պահանջվում է երաշխիքային ավանդ: Պահուստներում ներառված ածանցյալ գործիքները այս աղյուսակում արդեն բաժանվում են առանձին գործիքների՝ ֆյուչերսներ, ֆորվարդներ և այլն:

Պահանջվում է երկրի միջազգային պահուստները տարանջատել՝ ըստ ՀՓԻ-ի զամբյուղի մեջ մտնող և այլ արժույթներով արտահայտված ակտիվների: Ընդ որում, ոսկին ներառվում է ՀՓԻ-ի զամբյուղի մեջ մտնող արժույթներով արտահայտված ակտիվներում:

8.Այլ զուտ ակտիվների հաշվարկման առանձնահատկությունները

Տնտեսության ֆինանսական հատվածի որևէ ենթահատվածի այլ զուտ ակտիվներն (ԱԶԱ) իրենցից ներկայացնում են այլ ակտիվների և այլ պասիվների[49] տարբերությունը: Այսինքն՝ փաստորեն ԱԶԱ-երն ընդգրկում են տվյալ ենթահատվածին ոչ բնորոշ հաշիվները:

Տնտեսության ցանկացած հատվածի հաշվեկշիռը դիտարկելիս բոլոր հաշիվները նախ՝ բաժանվում են ըստ ռեզիդենտության սկզբունքի: Ոչ ռեզիդենտների հետ փոխհարաբերությունները ամփոփող հաշիվները ներառվում են զուտ արտաքին ակտիվներում: Ռեզիդենտների հետ փոխհարաբերություններն ամփոփվում են զուտ ներքին ակտիվներում (ԶՆԱ): Վերջիններս բաղկացած են տվյալ հատվածի և նրա հետ առնչություն ունեցող հիմնական մյուս ռեզիդենտ հատվածների միջև փոխհարաբերություններն ամփոփող հաշիվներից և այլ զուտ ակտիվներից: Այսպիսով՝ ԱԶԱ սահմանումն ավելի նեղացնելով, դրանք կարելի է բնութագրել իբրև ԶՆԱ բաղադրատարր, որոնք ամփոփում են տվյալ հատվածի հիմնական գործունեությանը ոչ բնորոշ հաշիվներ:

Դիտարկենք Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների և ավանդային կազմակերպությունների ԱԶԱ-երը:

8.1ՀՀ կենտրոնական բանկի այլ զուտ ակտիվներ

Ինչպես արդեն նշվել է, Կենտրոնական բանկն իր յուրահատուկ խնդիրների պատճառով ավանդային կազմակերպությունների առանձին ենթահատված է:

[48] *Տե՛ս հավելված 2.2-ի աղյուսակ 4-ը:*

[49] *Պասիվները բաղկացած են պարտավորություններից և կապիտալի հաշիվներից:*

Կենտրոնական բանկի գործունեությանը բնորոշ են.

- կառավարության բանկային սպասարկումը,
- առևտրային բանկերի վարկավորումը և պարտադիր պահուստավորումը,
- ՀՀ դրամի թողարկումը,
- ոչ բանկային հատվածից սահմանափակ ծավալներով ավանդների ներգրավումը,
- միջազգային պահուստների տնօրինումը և կառավարումը,
- արտաքին վարկերի ստացումը:

Այսպիսով՝ բացի վերը նշված գործառնություններից հետ կապված հաշիվներից, մնացած բոլոր հաշիվները ընդգրկվում են ԱՁԱ-ում: Դրանցից հիմնականներն են.

Ակտիվային հաշիվներ

- Տնտեսության իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորումը: Իր բնույթով ԿԲ-ն նման գործառնություններ չի իրականացնում, սակայն կարող է վարկեր տրամադրել ԿԲ աշխատակիցներին, այլ ֆինանսական կազմակերպությունների, որոնք իրական հատվածի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ են հանդիսանում:
- Ոչ ֆինանսական ակտիվները՝ շենքերը, շինությունները, հիմնական միջոցները, գույքը, փոքրարժեք և արագամաշ առարկաները: Ոչ ֆինանսական ակտիվներ են համարվում նաև ոսկու ոչ ստանդարտ ձուլակտորները, այլ թանկարժեք մետաղների ստանդարտ և ոչ ստանդարտ ձուլակտորները, հուշադրամները, թանգարանային իրերը, դրամապահոցում եղած և շրջանառություն դեռևս բաց չթողնված ՀՀ թղթադրամները և մետաղադրամները[50]:
- Առևտրային բանկերի հետ կնքված արժութային սվոփի գծով առաջացած պահանջները (ստացման ենթակա արտարժույթը):
- ԿԲ-ի կողմից ապրանքների և ծառայությունների գնման, ինչպես նաև այլ գործառնությունների արդյունքում ձևավորված կարճաժամկետ պահանջները՝ կանխավճարները, դեբիտորական պարտքերը և այլ ստացվելիք գումարները:
- Դրամական միջոցների փոխանցումների արդյունքում առաջացող ակտիվային միջանկյալ հաշիվները:

ՀՀ ԿԲ ԱՁԱ-ում ընդգրկվում են նաև ոչ փոխարկելի արտարժույթով և դրամով արտաքին ակտիվները, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ, դրամավարկային քաղաքականության պահանջներից ելնելով, ՀՀ ԿԲ զուտ միջազգային պահուստներում ընդգրկվում են միայն փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները: Հետևաբար, ՀՀ ԿԲ հատվածային հաշվեկշռում ոչ փոխարկելի արտարժույթով և դրամով արտաքին ակտիվները պայմանականորեն ընդգրկվում են ԱՁԱ-ում:

Պասիվային հաշիվներ

- Առևտրային բանկերի ոչ պահուստային հաշիվները ԿԲ-ում, որոնք հիմնականում բանկերի կանոնադրական կապիտալի համալրման ժամանակավոր հաշիվներ են:
- ԿԲ կապիտալ հաշիվները՝ կանոնադրական կապիտալը, գլխավոր, վերագնահատման, ակտիվների և այլ կորուստների պահուստները և շահույթը:

[50] *Այս թղթադրամներն ու մետաղադրամները հաշվարկվում են դրանց տպագրության ինքնարժեքով:*

- ԿԲ-ի կողմից ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ գործառնությունների հետևանքով առաջացած կարճաժամկետ պարտավորությունները՝ կրեդիտորական պարտքերը և այլ վճարվելիք հաշիվները:
- Առևտրային բանկերի հետ կնքված արժութային սվոփի գծով առաջացած պարտավորությունները (վճարման ենթակա արտարժույթը):
- ԿԲ հաճախորդների անունով ստացված դրամական միջոցների հետ կապված միջանկյալ հաշիվները:
- ԿԲ-ում որոշ հաճախորդների հաշիվները և ավանդները:

ՁԱԱ հաշվարկման ՀՀ առանձնահատկությունների հետ կապված, ինչպես այլ ակտիվների, այնպես էլ այլ պասիվների դեպքում ոչ փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորությունները պայմանականորեն ընդգրկվում են ԱՁԱ-ում:

8.2 Առևտրային բանկերի այլ զուտ ակտիվներ

Առևտրային բանկերը այլ ավանդային կազմակերպությունների ենթահատված են: Առևտրային բանկերի գործունեությանը բնորոշ գործառույթները էականորեն տարբերվում են կենտրոնական բանկերի գործառույթներից, այդ պատճառով առևտրային բանկերի հատվածային հաշվեկշռի և, հետևաբար, ԱՁԱ կազմման սկզբունքները որոշ չափով տարբերվում են ԿԲ համապատասխան հաշիվներից: Առևտրային բանկերի գործունեությանը բնորոշ հաշիվները արտացոլում են.

- տնտեսության վարկավորումը,
- ռեզիդենտ տնտեսությունից ներգրաված դրամային և արտարժութային միջոցները,
- ոչ ռեզիդենտների (արտաքին աշխարհի) հետ փոխհարաբերությունները,
- կառավարության հետ փոխհարաբերությունները,
- ԿԲ-ի հետ փոխհարաբերությունները:

Առևտրային բանկերին բնորոշ են նաև միջբանկային գործառնությունների արդյունքում առաջացող հաշիվները, սակայն առևտրային բանկերի ենթահատվածի հաշվեկշիռը կազմելիս այդ հաշիվները զտվում են միմյանցից, քանի որ դրանք ներհատվածային պահանջներ և պարտավորություններ են: Այս առումով, նշված հաշիվները չեն բնութագրում տվյալ հատվածի փոխհարաբերությունները տնտեսության այլ հատվածների հետ և ամփոփ հատվածային հաշվեկշռում չեն ընդգրկվում իբրև առանձին տարր:

Այսպիսով՝ առևտրային բանկերի համար մնացորդային են համարվում հետևյալ հաշիվները, որոնք ընդգրկվում են ԱՁԱ -ում.

Ակտիվային հաշիվներ

- Ներդրումները այլ կազմակերպությունների փայաբաժիններում:
- Առևտրային բանկերի կողմից ապրանքների և ծառայությունների գնման, ինչպես նաև այլ գործառնությունների արդյունքում ձևավորված կարճաժամկետ պահանջները՝ կանխավճարները, դեբիտորական պարտքերը և այլ ստացվելիք հաշիվները:
- Ֆինանսական ածանցյալներն իրենց իրական արժեքով: Կիրառվող հիմնական ածանցյալ գործիքներն են ֆորվարդները, օպցիոնները և սվոփերը:
- Սառեցված հաշիվները:
- Ոչ ֆինանսական ակտիվները՝ շենքերը, շինությունները, հիմնական միջոց-

ները, գույքը, փոքրարժեք և արագամաշ առարկաները: Մյուս ոչ ֆինանսական ակտիվների մասով ԿԲ և առևտրային բանկերի ոչ ֆինանսական ակտիվների միջև որոշ տարբերություններ կան. ա/ ոսկու ստանդարտ ձուլակտորները առևտրային բանկերում ոչ ֆինանսական ակտիվ են համարվում, բ/ առևտրային բանկերում եղած ՀՀ թղթադրամները և մետաղադրամները՝ ֆինանսական ակտիվ (պահանջներ ՀՀ ԿԲ-ին), մինչդեռ դրանք ԿԲ-ի համար ոչ ֆինանսական ակտիվ են:

Ինչպես ԿԲ ԶՄՊ-ում, այնպես էլ առևտրային բանկերի ԶԱԱ-ում ընդգրկվում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Այս դեպքում ևս, ինչպես և ԿԲ-ի դեպքում, առևտրային բանկերի ոչ փոխարկելի արտարժույթով և դրամով արտաքին ակտիվները պայմանականորեն ընդգրկվում են ԱԶԱ-ում:

Պասիվային հաշիվներ

- Կապիտալ հաշիվները՝ կանոնադրական կապիտալը, վերագնահատման, գլխավոր, ակտիվների և այլ կորուստների պահուստները և շահույթը:
- Առևտրային բանկերի կողմից ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ գործառնությունների հետևանքով առաջացած կարճաժամկետ պարտավորությունները՝ կրեդիտորական պարտքերը և այլ վճարվելիք հաշիվները:
- Առևտրային բանկերի հաճախորդների անունով ստացված դրամական միջոցների հետ կապված միջանկյալ հաշիվները:

Ինչպես ԿԲ-ի դեպքում, առևտրային բանկերի ոչ փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորությունները ևս պայմանականորեն ընդգրկվում են ԱԶԱ-ում:

Առևտրային բանկերի ԱԶԱ բաղկացուցիչ տարր են նաև զուտ միջբանկային պահանջները, այսինքն՝ առևտրային բանկերի համախմբված հաշվեկշռում միջբանկային պահանջների և պարտավորությունների տարբերությունը: Տեսականորեն՝ համակարգի ընդհանուր միջբանկային պահանջները պետք է հավասար լինեն ընդհանուր միջբանկային պարտավորություններին, քանի որ մի բանկի պահանջը պարտավորություն է մեկ ուրիշ բանկի համար: Այնուհանդերձ, գործնականում միջբանկային գործարքների գրանցումների միջև ժամանակային տարբերություններ կարող են լինել՝ երկու բանկերի միջև կատարված միևնույն գործարքը բանկերը երբեմն տարբեր օրերի են գրանցում, որն էլ զուտ միջբանկային պահանջների և պարտավորությունների միջև շեղումներ է առաջացնում և զուտ միջբանկային պահանջները զրոյից տարբեր են լինում: Ըստ էության, ԱԶԱ այս տարրը հաշվապահական շեղում է: Նույն ձևով ԱԶԱ-ում է ընդգրկվում նաև ներբանկային պահանջների և պարտավորությունների շեղումը, այսինքն՝ բանկի և նրա մասնաճյուղերի միջև փոխադարձ պահանջները: Որպես կանոն, բանկի համախմբված հաշվեկշռի կտրվածքով այսպիսի պահանջների զուտ տարբերությունը զրոյացվում է: Սակայն այն դեպքերում, երբ ՀՀ ռեզիդենտ բանկը Հայաստանից դուրս գտնվող իր մասնաճյուղի նկատմամբ զուտ պահանջ ունենա, վերջինս առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռում չի զրոյացվի: Պատճառն այն է, որ նման մասնաճյուղերի հաշիվները չեն ընդգրկվում ՀՀ առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռում:

8.3 Վարկային կազմակերպությունների այլ զուտ ակտիվներ

Վարկային կազմակերպությունները այլ ավանդային կազմակերպությունների ենթահատված են: Վարկային կազմակերպություններին բնորոշ գործառնություններից են.

- տնտեսությանը փոխառությունների և վարկերի տրամադրումը,

- ռեզիդենտ տնտեսությունից (բացառությամբ ոչ մասնակից ֆիզիկական անձանցից) փոխառությունների ներգրավումը,
- ոչ ռեզիդենտների (արտաքին աշխարհի) հետ փոխհարաբերությունները,
- կառավարության հետ փոխհարաբերությունները:

Վարկային կազմակերպությունների ԱՁԱ-ում ընդգրկվող հիմնական հաշիվները հետևյալն են.

Ակտիվային հաշիվներ

- Ներդրումները այլ կազմակերպությունների փայաբաժիններում
- Սառեցված հաշիվները
- Ոչ ֆինանսական ակտիվները՝ շենքերը, շինությունները, հիմնական միջոցները, գույքը, փոքրարժեք և արագամաշ առարկաները:

Վարկային կազմակերպությունների ՁԱԱ-ում, ինչպես և ԿԲ ու առևտրային բանկերի դեպքում, ընդգրկվում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները, որի հետևանքով վարկային կազմակերպությունների ոչ փոխարկելի արտարժույթով և դրամով արտաքին ակտիվները պայմանականորեն ընդգրկվում են ԱՁԱ-ում:

Պասիվային հաշիվներ

- Կապիտալի հաշիվները՝ կանոնադրական կապիտալը, գլխավոր, վերագնահատման, ակտիվների և այլ կորուստների պահուստները և շահույթը
- Վարկային կազմակերպությունների կողմից ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ գործառնությունների հետևանքով առաջացած կարճաժամկետ պարտավորությունները՝ կրեդիտորական պարտքերը և այլ վճարվելիք հաշիվները:

Ինչպես ԿԲ և առևտրային բանկերի դեպքում, վարկային կազմակերպությունների ոչ փոխարկելի արտարժույթով արտաքին պարտավորությունները ևս պայմանականորեն ընդգրկվում են ԱՁԱ-ում:

Վարկային կազմակերպությունների ԱՁԱ-ում, ինչպես և առևտրային բանկերի դեպքում, ընդգրկվում են նաև վարկային կազմակերպությունների միջև զուտ պահանջները (պահանջների և պարտավորությունների տարբերությունը), ինչպես նաև վարկային կազմակերպությունների և իր մասնաճյուղերի միջև զուտ պահանջների շեղումը:

8.4 Ավանդային կազմակերպությունների այլ զուտ ակտիվներ

ՀՀ ավանդային կազմակերպությունները ՀՀ կենտրոնական բանկի և այլ ավանդային կազմակերպությունների՝ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների, ամբողջությունն է: Ավանդային կազմակերպությունների զուտ այլ ակտիվները ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԱՁԱ հանրագումարն են: Սակայն, ի տարբերություն ավանդային կազմակերպությունների մյուս ցուցանիշների (օրինակ՝ ՁԱԱ-երի կամ ավանդների), ԱՁԱ-երը չի կարելի ստանալ իբրև ԿԲ, բանկերի և վարկային կազմակերպությունների ԱՁԱ-երի պարզ հանրագումար: ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ՁԱԱ-երը առանձին-առանձին հանդիսանում են այդ ենթահատվածների զուտ պահանջները ոչ ռեզիդենտներին, իսկ արտաքին հատվածը (ոչ ռեզիդենտները) «արտաքին» է ինչպես առևտրային բանկերի և

վարկային կազմակերպությունների, այնպես էլ ԿԲ-ի համար: Այլ կերպ ասած՝ ԿԲ պահանջը ոչ ռեզիդենտներին չի կարող միաժամանակ պահանջ լինել որևէ ռեզիդենտ բանկի նկատմամբ: Նույնը կարելի է ասել ռեզիդենտ տնտեսության նկատմամբ պահանջների կամ նրանից ներգրաված ավանդների մասին: Նման դեպքերում այս ենթահատվածները միավորելիս ամբողջ համակարգի համապատասխան հաշիվները ստացվում են իբրև ենթահատվածների միևնույն հաշիվների պարզ հանրագումար:

Իրավիճակը բոլորովին այլ է ԱՁԱ-երը հաշվարկելիս: ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ամփոփ հատվածային հաշվեկշիռներում գոյություն ունեն փոխադարձ պահանջներ և պարտավորություններ (օրինակ՝ ԿԲ պահանջները առևտրային բանկերին և պարտադիր պահուստները՝ ԿԲ ամփոփ հաշվեկշռում, առևտրային բանկերի պահանջները և պարտավորությունները ԿԲ-ին՝ առևտրային բանկերի հաշվեկշռում, կամ վարկային կազմակերպությունների պահանջները և պարտավորությունները առևտրային բանկերին՝ վարկային կազմակերպությունների հաշվեկշռում, առևտրային բանկերի պահանջները և պարտավորությունները վարկային կազմակերպություններին՝ առևտրային բանկերի հաշվեկշռում): Այս հաշիվները առանձին ԿԲ-ի, առանձին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար «արտաքին» են, սակայն այս հատվածների ամփոփ հաշվեկշիռները միավորելիս նշված պահանջներն ու պարտավորությունները դառնում են ներհատվածային՝ ավանդային կազմակերպությունների տեսանկյունից: Այսպես՝ առևտրային բանկերի՝ ԿԲ-ում պարտադիր պահուստները ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռում դառնում են միջբանկային պահանջներ և ինչպես առևտրային բանկերի դեպքում, պետք է ընդգրկվեն ԱՁԱ-ում: Ինչպես և միջբանկային փոխադարձ պահանջների դեպքում, այստեղ ևս կարող են շեղումներ լինել, որոնք կընդգրկվեն ԱՁԱ-ում: Նույնը վերաբերում է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների փոխադարձ պահանջներին և պարտավորություններին:

Ավանդային կազմակերպությունների ԱՁԱ-երի այս յուրահատկությունից բացի, վերջինիս բոլոր մնացած տարրերը իրենցից ներկայացնում են ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԱՁԱ-երի՝ վերը նշված տարրերի հանրագումարը:

Օգտագործված գրականություն

1. Monetary and Financial Statistics Manual and Compilation Guide, IMF, Washington D. C., 2016
2. System of National Accounts, European Commission, IMF, OECD, UN, WB, New York, 2008
3. Financial Production, Flows and Stocks in the System of National Accounts, ECB, UN, New York, 2015
4. Manual on MFI Balance Sheet Statistics, ECB, Frankfurt am Main, 2019
5. Balance of Payments and International Investment Position Manual (BPM6), sixth edition, IMF, Washington D. C., 2008
6. Government Finance Statistics Manual, IMF, Washington D. C., 2014
7. Financial Organization and Operations of the IMF, No. 45 Sixth Edition, IMF, Treasurer's Department, Washington D. C., 2001
8. IMF Financial Operations, IMF, Washington, D.C., 2018
9. By-Laws Rules and Regulations, IMF, 67th Issue, Washington, D.C., 2022
10. Articles of Agreement, IMF, Washington D. C., 2020
11. International Reserves and Foreign Currency Liquidity, Guidelines for a Data Template, IMF, Washington D. C.,2013
12. Handbook on Securities Statistics, BIS, ECB, IMF, Washington D.C., 2015
13. International Financial Reporting Standards 9: “Financial Instruments”
14. The General Data Dissemination System: Guide for Participants and Users, IMF, Washington D.C., 2013
15. The Special Data Dissemination Standard: Guide for Subscribers and Users, IMF, Washington D.C., 2013
16. The Special Data Dissemination Standard Plus: Guide for Adherents and Users, IMF, Washington D.C., 2015

Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1[51]

Հավելված 1.1

ՀՀ Կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	Մայիս	Հունիս
Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ)[52]	1,020,392	1,041,568
Զուտ ներքին ակտիվներ (Զ ՆԱ)	571,058	650,789
Կառավարություն	-478,478	-521,338
Բանկեր	659,013	750,236
այդ թվում՝ ռեպո համաձայնագիր	385,598	445,194
ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0
ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0
ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0
Այլ ակտիվներ, զուտ	390,523	421,891
ՓՈՂԻ ԲԱԶԱ	1,591,449	1,692,357
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	680,165	708,136
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	320,638	387,618
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	550,712	556,925
Այլ հաշիվներ	39,934	39,678
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	30,964	31,147
Այլ հաշիվներ արտարժույթով	8,970	8,531
Փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ		
Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ)		21,177
Զուտ ներքին ակտիվներ (ԶՆԱ)		79,731
Կառավարություն		-42,860
Բանկեր		91,224
այդ թվում՝ ռեպո համաձայնագիր		59,596
ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոփ		0
Դրամական միջոցների ներգրավում (-)		0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)		0
Հակադարձ ռեպո (-)		0
ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)		0
ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)		0
Այլ ակտիվներ, զուտ		31,368
ՓՈՂԻ ԲԱԶԱ		100,908
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ		27,970
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով		66,981
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով		6,213
Այլ հաշիվներ		-256
Այլ հաշիվներ ՀՀ դրամով		183
Այլ հաշիվներ արտարժույթով		-439

Հավելված 1.2

Ավանդային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշիռ

[51] *Հավելված 1-ում ներկայացված տեղեկատվությունն ընդգրկում է 2022 թվականի մայիսի և հունիսի վերջի դրությամբ տվյալները: Ցուցանիշները հաշվարկված են կուտակման (հաշվեգրման) սկզբունքով, այսինքն՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի գծով հաշվեգրված տոկոսները ընդգրկված են համապատասխան գործիքի մեջ:*

[52] *Զուտ միջազգային պահուստները ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:*

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇ	Հունիս
1. ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	145,158
1.1. Փոխարկելի արտարժույթ	345,054
1.1.1.Կենտրոնական բանկ (զուտ)	1,070,069
Արտաքին ակտիվներ	1,405,147
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-335,078
1.1.2. Առևտրային բանկեր (զուտ)	-740,188
Արտաքին ակտիվներ	610,573
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-1,350,761
1.1.3. Վարկային կազմակերպություններ (զուտ)	15,172
Արտաքին ակտիվներ	47,294
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-32,122
1.2. Ոչ փոխարկելի արտարժույթ	1,816
1.2.1.Կենտրոնական բանկ (զուտ)	610
Արտաքին ակտիվներ	610
հանած՝ Արտաքին պարտավորություններ	0
1.2.2. Առևտրային բանկեր (զուտ)	1,164
Արտաքին ակտիվներ	4,529
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-3,365
1.2.3. Վարկային կազմակերպություններ (զուտ)	42
Արտաքին ակտիվներ	42
հանած՝ Արտաքին պարտավորություններ	0
1.3. ՀՀ դրամով	-201,711
1.3.1.Կենտրոնական բանկ (զուտ)	-28,423
Արտաքին ակտիվներ	78
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-28,501
1.3.2. Առևտրային բանկեր (զուտ)	-157,800
Արտաքին ակտիվներ	133,325
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-291,125
1.3.3. Վարկային կազմակերպություններ (զուտ)	-15,488
Արտաքին ակտիվներ	46
հանած՝ Արտաքին պարտավորություններ	-15,534
2. ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	3,668,861
2.1. Զուտ ներքին վարկեր	4,862,907
2.1.1. Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	643,464
Պահանջներ ՀՀ կառավարությանը	1,202,169
հանած՝ Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-558,705
2.1.2. Պահանջներ տնտեսությանը	4,219,443
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	73,335
2.1.2.1. Պահանջներ ձեռնարկություններին և կազմակերպություններին	2,057,145
ՀՀ դրամով	694,775
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	26,509
Արտարժույթով	1,227,530
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	25,125
Արժեթղթեր	134,840
2.1.2.2. Պահանջներ տնային տնտեսություններին	2,032,940
ՀՀ դրամով	1,715,266
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	17,737
Արտարժույթով	317,674
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	2,994
2.1.2.3. Պահանջներ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	11,611
ՀՀ դրամով	4,496
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	19
Արտարժույթով	7,114
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	702

2.1.2.4. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպություններին	117,747
ՀՀ դրամով	110,998
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	244
Արտարժույթով	6,749
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	5
2.2. Այլ ակտիվներ (զուտ)	-1,194,046
3. ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	3,814,019
3.1. Կանխիկը ավանդային կազմակերպություններից դուրս	610,648
Թողարկված ՀՀ դրամ	828,186
հանած՝ ՀՀ դրամ առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների և ԿԲ-ի դրամարկղում	-217,538
3.2. Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	753,364
Ձեռնարկություններից և կազմակերպություններից	416,421
Տնային տնտեսություններից	258,141
Շահույթ չհետապնդող կազմակերպություններից	39,623
Այլ ֆինանսական կազմակերպություններից	39,178
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	2,057
3.3. Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	1,124,263
Ձեռնարկություններից և կազմակերպություններից	181,137
Տնային տնտեսություններից	705,019
Շահույթ չհետապնդող կազմակերպություններից	72,588
Այլ ֆինանսական կազմակերպություններից	164,698
ՀՀ դրամով ժամկետային ավանդներին հավասարեցված հաշիվներ	821
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	31,558
3.4. Ռեզիդենտների արտարժույթով ավանդներ	1,325,745
Ցպահանջ	566,920
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	31
Ժամկետային	758,826
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	9,684
ՍՏՈՒԳԻՉ ՆԻՇ	0

Հավելված 1.3

Ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇ	Մայիս	Հունիս
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	9,894	77,062
ԶՆԱ	3,804,126	3,819,142
Կառավարություն	643,464	670,396
Տնտեսություն	4,219,443	4,236,014
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	2,057,145	2,046,542
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	51,634	50,272
Տնային տնտեսություններ	2,032,940	2,051,260
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	20,731	21,107
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	11,611	11,968
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	721	38
Այլ ֆինանսական կազմակերպություններ	117,747	126,244
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	249	347
Զուտ այլ ակտիվներ	-1,058,782	-1,087,269
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	2,488,274	2,508,696
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	3,814,019	3,896,204
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	610,648	611,996
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	753,364	803,589
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	2,057	2,107
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	1,124,263	1,093,111
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	31,558	32,096
Արտարժույթով ավանդներ	1,325,745	1,387,507
Ցպահանջ	566,920	601,081
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	31	21
Ժամկետային	758,826	786,426
այդ թվում՝ կուտակված տոկոսներ	9,684	9,905
Փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ		
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)		67,168
ԶՆԱ		15,016
Կառավարություն		26,932
Տնտեսություն		16,571
Ձեռնարկություններ և կազմակերպություններ		-10,603
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		-1,362
Տնային տնտեսություններ		18,320
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		376
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ		357
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		-683
Այլ ֆինանսական կազմակերպություններ		8,497
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		98
Զուտ այլ ակտիվներ		-28,487
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ		20,422
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ		82,184
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ		1,348
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով		50,226
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		50
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով		-31,151
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		538
Արտարժույթով ավանդներ		61,762
Ցպահանջ		34,162
այդ թվում՝ կուտակված տոկոսներ		-10
Ժամկետային		27,600

այդ թվում՝ կուտակված տոկոսներ		221

Հավելված 1.4

ՀՀ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

Ամիս	Շրջանառու-թյունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1	Ժամկետային և ավանդներ ՀՀ դրամով	M2	Արտարժույթ ով ավանդներ	M2X
	1	*2*	*3=1+2*	*4*	*5=3+4*	*6*	*7=5+6*
Մայիս	583,032	735,799	***1,318,831***	1,135,750	***2,454,581***	1,361,002	***3,815,583***
Հունիս	610,648	753,364	***1,364,011***	1,124,263	***2,488,274***	1,325,745	***3,814,019***

ՀԱՎԵԼՎԱԾ 2[53]

Հավելված 2.1

Միջազգային պահուստներ

մլն ԱՄՆ դոլար

	Հունիս
Համախառն միջազգային պահուստներ	**3,450.6**
Ոսկի	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	28.2
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0
Արտարժույթ	3,422.3

Հավելված 2.2

Միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության ստանդարտ աղյուսակ[54]

Աղյուսակ 1 Պաշտոնական պահուստային ակտիվներ և այլ արտարժութային ակտիվներ (շուկայական արժեք)

մլն ԱՄՆ դոլար

	Հունիս
I.Պաշտոնական պահուստային ակտիվներ[55]	**3,450.6**
1. Արտաքին պահուստային ակտիվներ (ազատ փոխարկելի արժույթով)	3,419.5
1.1. Արժեթղթեր	1,578.6
որոնցից՝ ՀՀ-ում գլխամաս ունեցող, բայց արտասահմանում գտնվող թողարկողներ	

[53] *Հավելված 2-ում ներկայացված տեղեկատվությունը ընդգրկում է 2022 թվականի հունիսի վերջի դրությամբ տվյալները: Ցուցանիշները հաշվարկված են կուտակման (հաշվեգրման) սկզբունքով, այսինքն՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի գծով հաշվեգրված տոկոսները ընդգրկված են համապատասխան գործիքի մեջ:*

[54] *Այս հավելվածում ներկայացված՝ միջազգային պահուստների և արտարժութային իրացվելիության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ չափորոշիչին անդամակցության շրջանակներում:*

[55] *Այս հոդվածը պետք է հավասար լինի Հավելված 2.1-ում ներկայացված «Միջազգային պահուստներ» աղյուսակի «Համախառն միջազգային պահուստներ» տողին:*

1.2. Ընդամենը կանխիկ արտարժույթ և ավանդներ	1,840.9
1.2.1. այլ կենտրոնական բանկերում, Հաշվարկների միջազգային բանկում (BIS) և ԱՄՀ-ում	1,688.4
1.2.2. գլխամասը ՀՀ-ում գտնվող բանկերում	
որոնցից՝ տեղաբաշխված արտասահմանում	
1.2.3. գլխամասը ՀՀ-ից դուրս գտնվող բանկերում	152.5
որոնցից՝ տեղաբաշխված ՀՀ-ում	
2. Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	-
3. ՀՓԻ (SDR) ԱՄՀ-ում	28.2
4. Ոսկի (ներառյալ ոսկով ավանդները և ոսկով սվոփերը)	-
- ծավալը միլիոն ունցիաներով	
5. Այլ պահուստային ակտիվներ (նշել)	2.9
- ֆինանսական ածանցյալներ	2.6
- ոչ ռեզիդենտ ոչ բանկ մարմիններին տրված վարկեր	
- այլ	0.3
II. Այլ արտարժութային ակտիվներ (նշել)	-
- պաշտոնական պահուստային ակտիվներում չընդգրկված արժեթղթեր	
- պաշտոնական պահուստային ակտիվներում չընդգրկված ավանդներ	
- պաշտոնական պահուստային ակտիվներում չընդգրկված վարկեր	
- պաշտոնական պահուստային ակտիվներում չընդգրկված ֆինանսական ածանցյալներ	
- պաշտոնական պահուստային ակտիվներում չընդգրկված ոսկի	
- այլ	

Աղյուսակ 2 Արտարժութային ակտիվներով նախատեսված կարճաժամկետ զուտ հոսքեր (անվանական արժեք)

մլն ԱՄՆ դոլար

		Տարանջատում ըստ ժամկետայնության (մնացորդային)			
		Ընդամենը	*Մինչև 1 ամիս*	*1 ամսից ավելի և մինչև 3 ամիս*	*3 ամսից ավելի և մինչև 1 տարի*
1. Արտարժույթով վարկեր, արժեթղթեր և ավանդներ		-1,356.8	-873.5	-95.6	-387.6
- արտահոսք (-)	Հիմնական գումարի մարում	-1,165.9	-869.2	-40.2	-256.5
	Տոկոսավճար	-191.9	-4.4	-55.9	-131.6
- ներհոսք (+)	Հիմնական գումարի մարում	0.9	0.0	0.4	0.4
	Տոկոսավճար	0.1	0.0	0.1	0.0
2. Ազգային արժույթի նկատմամբ արտարժութային ֆորվարդների և ֆյուչերսների կարճ և երկար համախառն դիրքեր (ներառյալ արտարժութային սվոփերի ֆորվարդային բաղադրիչը)					
2.1. Կարճ դիրքեր (-)					
2.2. Երկար դիրքեր (+)					
3. Այլ (նշել)		-4.8	-0.1	-0.3	-4.4
- ռեպոների հետ կապված արտահոսք (-)					
- հակադարձ ռեպոների հետ կապված ներհոսք (+)					
- առևտրային վարկեր (-)					
- առևտրային վարկեր (+)					
- այլ վճարվելիք գումարներ (-)		-4.8	-0.1	-0.3	-4.4
- այլ ստացվելիք գումարներ (+)					

Աղյուսակ 3 Արտարժութային ակտիվների պայմանական

կարճաժամկետ զուտ հոսքեր (անվանական արժեք)

մլն ԱՄՆ դոլար

	Տարանջատում ըստ ժամկետայնության (մնացորդային)			
	Ընդամենը	*Մինչև 1 ամիս*	*1 ամսից ավելի և մինչև 3 ամիս*	*3 ամսից ավելի և մինչև 1 տարի*
1. Արտարժույթով պայմանական պարտավորություններ	-540.2	-540.3	0.0	0.1
1.1. Համաձայնեցված երաշխիքներ մինչև մեկ տարի պարտքի գծով	0.1	0.0	0.0	0.06
1.2. Այլ պայմանական պարտավորություններ	-540.3	-540.3		
2. Ներդրված օպցիոններով թողարկված արտարժութային արժեթղթեր (puttable bonds)				
3. Չօգտագործված, անվերապահ վարկային գծեր տրամադրված՝	436.0	45.3	90.6	300.1
3.1. այլ երկրների դրամավարկային կարգավորման մարմինների, Հաշվարկների միջազգային բանկի (BIS), ԱՄՀ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից	268.3	28.1	56.2	184.0
- այլ երկրների դրամավարկային կարգավորման մարմինների կողմից(+)				
- Հաշվարկների միջազգային բանկի (BIS) կողմից (+)				
- ԱՄՀ- ի կողմից (+)				
- Այլ միջազգային կազմակերպությունների կողմից (+)	268.3	28.1	56.2	184.0
3.2. գլխամասը ՀՀ-ում գտնվող բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից (+)				
3.3. գլխամասը ՀՀ-ից դուրս գտնվող բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից (+)	167.7	17.2	34.4	116.1
4. Չօգտագործված, անվերապահ վարկային գծեր տրամադրված՝				
4.1. այլ դրամավարկային կարգավորման մարմիններին, Հաշվարկների միջազգային բանկին (BIS), ԱՄՀ-ին և այլ միջազգային կազմակերպություններին				
- այլ երկրների դրամավարկային կարգավորման մարմիններին(-)				
- Հաշվարկների միջազգային բանկին (BIS) (-)				
- ԱՄՀ-ին (-)				
- Այլ միջազգային կազմակերպություններին (-)				
4.2. գլխամասը ՀՀ-ում գտնվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին (-)				
4.3. գլխամասը ՀՀ-ից դուրս գտնվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին (-)				
5. Ազգային արժույթի նկատմամբ արտարժութային օպցիոնների համախառն կարճ և երկար դիրքեր				
5.1. Կարճ դիրքեր				
5.1.1. Գնված «փութ» օպցիոններ				
5.1.2. Թողարկված «քոլ» օպցիոններ				
5.2. Երկար դիրքեր				
5.2.1. Գնված «քոլ» օպցիոններ				
5.2.2. Թողարկված «փութ» օպցիոններ				
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ. շահույթով (in-the-money) օպցիոններ				
1. Փաստացի փոխարժեքով				
1.1. Կարճ դիրքեր				
1.2. Երկար դիրքեր				
2. + 5 % (5% արժեզրկում)				
2.1. Կարճ դիրքեր				
2.2. Երկար դիրքեր				
3. - 5 % (5% արժեքավորում)				
3.1. Կարճ դիրքեր				
3.2. Երկար դիրքեր				

4. +10 % (10% արժեզրկում)				
4.1. Կարճ դիրքեր				
4.2. Երկար դիրքեր				
5. - 10 % (10% արժեքավորում)				
5.1. Կարճ դիրքեր				
5.2. Երկար դիրքեր				
6. Այլ (նշել)				
6.1. Կարճ դիրքեր				
6.2. Երկար դիրքեր				

Աղյուսակ 4 Տեղեկատու հոդվածներ

մլն ԱՄՆ դոլար

1. Պետք է հրապարակվեն սահմանված պարբերականությամբ և ժամանակին	
1.1. փոխարժեքին ինդեքսավորված կարճաժամկետ ազգային արժույթով պարտք	
1.2. արտարժույթով արտահայտված և այլ կերպ մարվող (օր. ազգային արժույթով) ֆինանսական գործիքներ	
- ածանցյալներ (ֆորվարդներ, ֆյուչերսներ կամ օպցիոններ)	
- կարճ դիրքեր	
- երկար դիրքեր	
- այլ գործիքներ	
1.3. գրավադրված ակտիվներ	
- ընդգրկված պաշտոնական պահուստային ակտիվներում	
- ընդգրկված այլ արտարժութային ակտիվներում	
1.4. պարտքով տրված և ռեպո գործարքներում օգտագործված արժեթղթեր	
- պարտքով տրված կամ ռեպո գործարքով վաճառված արժեթղթեր, որոնք ընդգրկված են I Բաժնում	
- պարտքով տրված կամ ռեպո գործարքով վաճառված արժեթղթեր, որոնք ընդգրկված չեն I Բաժնում	
- պարտքով վերցված կամ ռեպո գործարքով գնված արժեթղթեր, որոնք ընդգրկված են I Բաժնում	
- պարտքով վերցված կամ ռեպո գործարքով գնված արժեթղթեր, որոնք ընդգրկված չեն I Բաժնում	
1.5. ակտիվներ՝ ֆինանսական ածանցյալների տեսքով (զուտ, շուկայական արժեք)	2.6
- ֆորվարդներ	
- ֆյուչերսներ	2.6
- սվոփեր	
- օպցիոններ	
- այլ	
1.6. ածանցյալներ (ֆորվարդային, ֆյուչերսային կամ օպցիոն գործարքներ), որոնք ունեն մեկ տարուց ավելի մնացորդային մարման ժամկետ	
- ազգային արժույթի նկատմամբ արտարժութային ֆորվարդների և ֆյուչերսների համախառն կարճ և երկար դիրքեր (ներառյալ արտարժութային սվոփերի ֆորվարդային բաղադրիչը)	
- Կարճ դիրքեր (–)	
- Երկար դիրքեր (+)	
- ազգային արժույթի նկատմամբ կնքված արտարժութային օպցիոնների համախառն կարճ և երկար դիրքեր	
- Կարճ դիրքեր	
- Գնված «փութ» օպցիոններ	
- Թողարկված «քոլ» օպցիոններ	
- Երկար դիրքեր	
- Գնված «քոլ» օպցիոններ	
- Թողարկված «փութ» օպցիոններ	
2. Պետք է հրապարակվեն նվազագույնը տարին մեկ անգամ	
2.1. պահուստների արժութային կառուցվածքը (արժույթների խմբերով)	3,450.6
- ՀՓԻ-ի զամբյուղ (ներառում է նաև ոսկին)	3,343.1
- այլ արժույթներ	107.5
- ըստ առանձին արժույթների (ներկայացվում է կամավոր)[56]	

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Օրինակներ

[56] Այս տվյալները պետք է ներկայացվեն երկրի նշումներում

Ձեռնարկի որոշ դրույթներ և սահմանումներ ավելի պարզ ներկայացնելու նպատակով ստորև տրվում են մի քանի օրինակներ

Հավելված 3.1

Ֆինանսական ածանցյալների հաշվեկշռային գրանցումները

3.1.1 Ֆորվարդներ

Ֆորվարդային պայմանագրով նախատեսվում է երեք ամիս հետո վաճառել 10,000 ԱՄՆ դոլար՝ 400 դրամ փոխարժեքով: Այսինքն՝ երեք ամիս հետո բանկը պետք է առաքի 10,000 դոլար՝ դիմացը ստանալով 4 մլն դրամ: Այս դեպքում բանկի պահանջը (4 մլն դրամ) հավասար է պայմանագրով նախատեսվող նրա պարտավորությանը (10,000 դոլար): Եթե պայմանագրի իրականացման պահին փոխարժեքն այլ լինի, պայմանագրով նախատեսվող արտարժույթի շուկայական և փաստացի արժեքների տարբերությունը կգրանցվի որպես շահույթ կամ վնաս: Այսպես՝ եթե դոլարի փոխարժեքը պայմանագրի իրականացման պահին լինի 380 դրամ, բանկը, փաստորեն, 200 հազ. դրամ շահույթ կունենա, քանի որ 10,000 դոլարի դիմաց կստանա 4 մլն դրամ, այն դեպքում, երբ արտարժույթի փաստացի վաճառքից կստանար միայն 3.8 մլն դրամ: Եթե բանկը ցանկանա պայմանագրի իրականացման ժամկետից ավելի շուտ իրացնել շահույթը, նա կարող է վաճառել ֆորվարդային պայմանագիրը:

Բնականաբար, ֆորվարդային գործարքի իրական արժեքի փոփոխությունը ժամանակի ցանկացած պահի կարտացոլվի հաշվապահական հաշվեկշռի ակտիվային կամ պասիվային մասերում՝ կախված ֆորվարդային գործարքի դիրքից: Մասնավորապես, վերը նշված 3 ամսվա ֆորվարդային պայմանագրի կնքումից 1 ամիս հետո, եթե շուկայական փոխարժեքը կազմի 390 դրամ, ապա բանկի մոտ կձևավորվի 100 հազ. դրամի չափով «եկամուտ»՝ գրանցվելով նաև ածանցյալ գործիքի գծով հաշվեկշռի համապատասխան ակտիվային հաշվում: Եթե դոլարի փաստացի փոխարժեքն ավելի բարձր է ֆորվարդային պայմանագրով նախատեսված արժեքից, օրինակ՝ 410 դրամ, ապա բանկի մոտ կձևավորվի 100 հազ. դրամի չափով «ծախս»՝ գրանցվելով նաև ածանցյալ գործիքի գծով հաշվեկշռի համապատասխան պասիվային հաշվում:

3.1.2. Օպցիոններ

Օպցիոնները ևս ֆորվարդների նման կարող են շուկայական արժեք ունենալ: Օրինակ՝ բանկը 10,000 ԱՄՆ դոլար՝ 500 դրամ փոխարժեքով, երեք ամիս հետո գնելու օպցիոն է ձեռք բերել: Եթե երեք ամիս հետո դոլարի փոխարժեքը 500 դրամից ավելի լինի, բանկը կիրագործի իր իրավունքը, հակառակ դեպքում արտարժույթի գնումը իմաստ չի ունենա: 500 դրամից ավելի փոխարժեքի դեպքում բանկը կարող է վաճառել օպցիոնի պայմանագիրը, այսինքն՝ այս դեպքում օպցիոնը շուկայական արժեք է ստանում:

Հավելված 3.2

Պայմանական գործիքների գրանցումները

3.2.1. Երաշխավորություններ

Ա ընկերությունը Բ բանկից 10 մլն դրամի վարկ ստանալու համար Գ բանկից երաշխավորագիր է ստացել: Քանի դեռ Ա ընկերության վարկը Բ բանկի կողմից անհուսալի չի ճանաչվել, Գ բանկը պարտավորություն չունի Բ բանկին որևէ վճարում կատարել: Միայն այն բանից հետո, երբ Ա ընկերությունը չի կարողանում մարել վարկը, Գ բանկը պարտավորվում է Բ բանկին 10 մլն դրամ վճարել:

Այսպիսով՝ երաշխավորագիր տրամադրելու պահին Գ բանկն իր արտահաշվեկշռում կգրանցի.

-10 մլն դրամ վարկի համար տրված երաշխիք

Բ բանկը երաշխիքի դիմաց վարկի տրամադրումը հաշվեկշռում կգրանցի որպես սովորական վարկի տրամադրում.

Դտ - վարկ
Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ,

իսկ արտահաշվեկշռում կգրանցի վարկի դիմաց ստացված երաշխիք:

Եթե վարկը ժամանակին մարվի, երաշխիքը դուրս կգա և՛ Գ, և՛ Բ բանկերի արտահաշվեկշիռներից, իսկ Բ բանկի հաշվեկշռում կկատարվի վարկի մարման համապատասխան ձևակերպումը.

Դտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ
Կտ - վարկ

Եթե վարկը չի մարվում, ապա երաշխավորագիրը Բ և Գ բանկերի արտահաշվեկշռից կտեղափոխվի հաշվեկշիռ.

Բ բանկ

Դտ - երաշխավորագրի գծով ստացվելիք գումարներ
Կտ - վարկեր

Գ բանկ

Դտ - պահանջներ երաշխավորագրերի գծով
Կտ - պարտավորություններ երաշխավորագրերի գծով

Տվյալ օրինակում Բ բանկը երաշխավորագրի գծով պահանջ ունի Գ բանկի նկատմամբ, Գ բանկը՝ Ա ընկերության նկատմամբ, իսկ Գ բանկի երաշխավորագրի գծով պարտավորությունը Բ բանկի նկատմամբ է:

3.2.2. Վարկային գծեր

Բանկը պայմանագրով 50 մլն դրամի վարկային գիծ է տրամադրել հաճախորդին, սակայն փաստացի տրամադրվել է 30 մլն դրամի վարկ: Բանկի հաշվեկշռում որպես ակտիվ կգրանցվի 30 մլն դրամ վարկ: 50 մլն դրամի վարկային գիծը կարտացոլվի հաշվեկշռից դուրս:

3.2.3. Ակրեդիտիվներ

Հայաստանում գործող ձեռնարկությունը պետք է 1 մլն դոլարի ապրանք ներմուծի Եվրոպայից: Դրա համար նա ակրեդիտիվ է բացում իր բանկում (Հայաստանում): Վաճառողի բանկը գտնվում է Եվրոպայում: Ակրեդիտիվի պայմանների համաձայն՝ հայկական բանկը պարտավորվում է պայմանագրի գումարը վճարել առաքման փաստաթղթերի ստացման դեպքում: Այսպիսով՝ առաքման փաստաթղթերի ստացումը պայման է, որի դեպքում հայկական բանկը պարտավորություն է ձեռք բերում վաճառողի բանկի նկատմամբ:

Այս դեպքում ակրեդիտիվով նախատեսվող պայմանագրի գումարը հայկական բանկի արտահաշվեկշռում կգրանցվի իբրև պարտավորություն եվրոպական բանկի նկատմամբ և, մյուս կողմից, իբրև պահանջ տեղական ձեռնարկության նկատմամբ: Առաքման փաստաթղթերի ստացումից հետո ակրեդիտիվով նախատեսվող գումարները հայկական բանկի հաշվեկշռում կգրանցվեն.

Դտ - Ակրեդիտիվներով կատարված վճարումներ
Կտ - Պարտավորություններ բանկային հոժարագրերի: